

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ  
ՕՐԱՅՈՒՅՑՆԵՐԻ  
ԵՎ  
ՏԱՐԵՑՈՒՅՑՆԵՐԻ  
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ


1513-1973

016

12-28









ՀՍՍՀ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱՑՈՒՑՑՆԵՐԻ ԵՎ  
ՏԱՐԵՑՈՒՑՑՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
1513—1973**

ԵՐԵՎԱՆ 1976

2015

9002



270-02  
~~(5062-92)~~  
1036-79

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ АРМ. ССР  
ГОСУДАРСТВЕННАЯ РЕСПУБЛИКАНСКАЯ  
БИБЛИОТЕКА АРМ. ССР им. А. Ф. МЯСНИКЯНА

ГАИК ХАЧАТРЯН

БИБЛИОГРАФИЯ АРМЯНСКИХ КАЛЕНДАРЕЙ  
И ЕЖЕГОДНИКОВ

(На армянском языке)

Ереван, 1976

2012

## ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ՕՐԱՅՈՒՅՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

### ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Ժամանակը հաշվելու, ժամանակի միավորները ստեղծելու առաջին փորձերը կատարել են մարդկային հասարակության վաղնջական անցյալում: Բանականության աստիճանական զարգացման հետ մարդը կարիք է դրացել պահելու ժամանակի հաշիվը: Չնայած տարբեր ժողովուրդներ ժամանակը հաշվելու տարբեր ձևեր են ընտրել, բայց, քանի որ երկրագնդի վրա ժամանակի ընթացքը կապված է Արեգակի պտույտների ու լուսնային փուլերի հետ, ստեղծվել է երեք տիպի օրացուցային համակարգ՝ լուսնային, լուսնա-արեգակնային և արեգակնային: «Ներկայումս ամբողջ երկրագնդի վրա, բացառությամբ մի քանի երկրների, կիրառվում է արեգակնային օրացույցը, որի հիմքը կազմում է արեգակնային տարին: Օրացույցի պատմության մեջ, որպես արեգակնային տիպական օրացույց հատկանշական են հին եգիպտական, հին հայկական, հին պարսկական և այլ օրացույցներ: Այն օրացույցը, որ կազմված է լուսնի փուլերի և լուսնային տարվա հիման վրա կոչվում է լուսնային օրացույց: Լուսնի տարին աբևադարձային տարույ մոտավորապես 11 օրով կարճ է: Լուսնա-արեգակնային են կոչվել այն օրացույցները, որոնք կազմված են լուսնի ամիսների և արեգակնային տարվա համաձայն» (Հ. Ս. Բադալյան, «Օրացույցի պատմություն», Երևան, 1970, էջ 42—43):

Վերջին երկու հազար տարում համաշխարհային ճանաչում են դտել Հուլյան և նրան հաջորդող Գրիգորյան օրացույցները: Հայտնի է, որ հին հումեացիներն իրենց թվականության սկիզբն ընդունել են Հոռմի հիմնադրման տարին՝ մ. թ. ա. 753 թվականը: Հումեացիներն աստվածացրել են Հոռմի առասպելական հիմնադիր Հոռմուլոսին և մ. թ. ա 753-ը ընդունել Հոռմեական կայսրության սկիզբ, Հոռմի հիմնադրման տարի, հոռմեական տարեգրության պատմության մեջ դա եղակի աստվածացում չէ: Յուրաքանչյուր

ժողովրդի տարեգլխի ծնունդը կապված է որևէ աստծու կամ պատմական մեծ իրադարձության հետ: Հեռավոր ժամանակներում օրացույցները անկայուն են եղել: Գահ բարձրացող յուրաքանչյուր արքա ստիպում էր, որ ժամանակը հաշվվի իր թագադրության տարուց: Այդ իսկ պատճառով մի հարյուրամյակում նույն ժողովուրդը հաճախ յոթ-ութ տարեգլուխ էր ունենում: Եվ պատմիչը որևէ դեպք հիշատակելու համար գրում էր, որ դա եղել է այսինչի կամ այնիչի թագավորության այսինչ տարում: Սակայն բոլոր ժողովուրդներն էլ օժտված են ավանդապահության ինքնատիպ խառնվածքով: Գործ ունենալով, նոր պարտադրյալ տարեգլխի հետ, նրանք զուգահեռաբար հաշվումներ էին կատարում նախկին տարեգլխով, Հռոմուլոսյանն աշխարհի երկարակյաց տարեգլխաօրացույցներից է, գոյատևել է 708 տարի (մ. թ. ա. 753—մ. թ. ա. 45): Այդ օրացույցը, սակայն, տառապում էր անճշտություններով, չէր համապատասխանում արեգակնային կամ լուսնաարեգակնային հաշվումներին: Հռոմուլոսյան օրացույցը կարգավորելու նպատակով Հուլիոս Կեսարը (մ. թ. ա. 100—մ. թ. ա. 44) Հռոմ է հրավիրում նշանավոր տոմարագետների ու աստղագետների: Բարեփոխությունը հիմնականում կատարում է ալեքսանդրիացի գիտնական Սոսիգենը: Վերջինս ընդունում է չորս տարվա պարբերաշրջանի տեղը, առաջին երեք տարին (յուրաքանչյուրը 365 օրով) կոչում է հասարակ, իսկ չորրորդ տարին (366 օրով)՝ նահանջ: Բարեփոխված այդ օրացույցը Հուլիոս Կեսարի անունով կոչվում է Հուլյան և գործածության մեջ է մտնում մ. թ. ա. 45 թվականի հունվարի 1-ից:

Ինչպես աշխարհի մյուս երկրներում, այնպես էլ Հռոմում օրացույցային հաշվումները կատարում էին քրմերը: Զորսի փոխարեն նրանք երեք տարուց մեկ են հաշվել նահանջ տարի: Այդ պատճառով մ.թ.ա. 45-ից մինչև մ. թ. ա. 9 թվականը առաջացել էր երեք օրվա սխալ: Հուլյան տոմարի այդ մասնակի սխալը մ. թ. ա. 9 թվականին ուղղում է Օգոստոս կայսրը: Այսպիսով մ. թ. ա. 8 թվականից Հուլյան օրացույցը ստանում է ճիշտ այնպիսի տեսք, ինչպիսին այժմ է.

հունվար 31 օր  
փետրվար 28 (29) օր  
մարտ 31 օր  
ապրիլ 30 օր  
մայիս 31 օր  
հունիս 30 օր

հուլիս 31 օր  
օգոստոս 31 օր  
սեպտեմբեր 30 օր  
հոկտեմբեր 31 օր  
նոյեմբեր 30 օր  
դեկտեմբեր 31 օր

Հուլյան օրացույցը, որ Հռոմուլոսյանի բարեփոխված տարբերակն էր, գոյատևել է մոտ 16 դար՝ մ. թ. ա. 8 թվականից մինչև 1582 թվականը: Հուլյան տոմարին փոխարինել է Գրիգորյանը: Ինչու՞ Բանն այն է, որ Հուլյան օրացույցը արևադարձային տարուց պակաս էր 11 րոպե 14 վայրկյանով: 128 տարում այդ տարբերությունը կազմում էր մեկ օր: Մինչև 1582 թվականը տարբերությունը դարձել էր 10 օր: Հռոմի Գրիգորիոս 13-րդ պապի հրամանագրով 1582 թվականի հոկտեմբերի 4-ից հետո Հուլյան տոմարը ճշտվում է՝ 10 օր առաջ գցելով: 1582-ի հոկտեմբերի 5-ի փոխարեն սկսում են հաշվել 1582-ի հոկտեմբերի 15: Այդ ժամանակից Հուլյան տոմարը անվանափոխվում է և Գրիգորիոս պապի անունով կոչվում Գրիգորյան:

### Գրիգորյան տոմարին անցնելու ժամանակագրությունը առանձին երկրներում

|                      |                           |
|----------------------|---------------------------|
| 1582-ի հոկտեմբերի 15 | Իտալիա՝                   |
| 1582-ի » »           | Իսպանիա                   |
| 1582-ի » »           | Պորտուգալիա               |
| 1582-ի դեկտեմբերի 20 | Ֆրանսիա                   |
| 1583-ի հունվարի 1    | Հոլանդիա                  |
| 1583-ի հունվարի 16   | Բավարիա                   |
| 1584-ի հունվարի 17   | Գերմանիա (կաթոլիկները)    |
| 1587-ի հունվարի 1    | Նիսաստան                  |
| 1587-ի նոյեմբերի 1   | Հունգարիա                 |
| 1610-ի սեպտեմբերի 2  | Պրուսիա                   |
| 1700-ի մարտի 1       | Գերմանիա (քողոքական մասը) |
| 1700-ի մարտի 1       | Դանիա                     |
| 1752-ի սեպտեմբերի 14 | Անգլիա                    |
| 1753-ի մարտի 1       | Շվեդիա                    |
| 1873-ի հունվարի 1    | Ճապոնիա                   |
| 1911-ի նոյեմբերի 20  | Չինաստան                  |
| 1918-ի փետրվարի 14   | Սովետական Ռուսաստան       |
| 1919-ի փետրվարի 1    | Սերբիա                    |
| 1923-ի մարտի 20      | Հունաստան                 |
| 1927-ի հունվարի 1    | Թուրքիա                   |
| 1928-ի հոկտեմբերի 1  | Եգիպտոս                   |

Հարկ է նշել, որ որևէ գործչի ծննդյան թվականն ու օրը հիմն ու նոր տոմարով տալու համար պետք է հաշվի առնել, թե նա որ

երկրում է ծնվել: Օրինակ, ՍՍՀՄ-ում 1918 թվականի փետրվարի 14-ից հետո ծնվածի համար հին ու նոր տոմար չեն օգտագործում, որովհետև նրա ծնունդն արտահայտված է նոր տոմարով: Եթե տվյալ գործիչը ծնվել է Ռուսաստանում 1901—1918-ի ժամանակաշրջանում, ապա ծննդյան օրին գումարում են 13 օր (այսպես, մարտի 1-ը հին տոմարով, իսկ նոր տոմարով՝ մարտի 14-ը), եթե ծնվել է 19-րդ դարում, ապա ավելացնում են 12 օր, 18-րդ դարում՝ 11 օր, 17-րդ դարում՝ 10 օր: 16-րդ դարից հտհաշված յուրաքանչյուր 128 տարվա համար ավելացնում են մեկ օր: Եթե գործիչը ծնվել է Իտալիայում, ասենք, 17-րդ դարում, ապա հին ու նոր տոմար չեն օգտագործում, որովհետև նրա ծնունդն արտահայտված է նոր տոմարով: Հետևապես վերևի աղյուսակը կողմնորոշում է, թե ինչպես պիտի հաշվել հին ու նոր տոմարները տարբեր երկրներում:

Հուլյան տոմարը քրիստոնեական եկեղեցին ընդունել էր նիկիայի 325 թվականի տիեզերաժողովից հետո:

Մինչև մեր թվականության 6-րդ դարը օրացուցային սահմանազատող դարաշրջան (էրա) չկար: Բայց ահա վանական Դիոնիսիոս Կրտսերը 532 թվականին հայտարարում է, թե Հիսուս Քրիստոսը ծնվել է Հռոմի հիմնադրման 753 թվականի դեկտեմբերի 25-ին: Այս քմահաճ, մտացածին «հայտնություն» պատճառով առաջարկում են Հռոմի հիմնադրման 753 թվականը համարել Քրիստոսի ծննդյան թվական: Եվ քրիստոնեական աշխարհում տարածվում է նոր թվականություն, որի առաջին տարում, իբր, ծնվել է Քրիստոսը: Ուստի Մ. թ. ա. 1 թվականը դառնում է սահմանագիծ քրիստոնյա ժողովուրդների պատմության համար:

Մարդկային հասարակության քաղաքակրթության հնագույն օրրաններից մեկում՝ Հայկական լեռնաշխարհում տոմարական հաշվումներ են կատարել անհիշելի ժամանակներից: 1946-ին ՀՍՍՀ Թումանյանի (նախկին Ալավերդու) շրջանի Սանահին գյուղում պեղումների ժամանակ հայտնաբերվել է 3 հազար տարվա հնություն ունեցող մի գոտի, որ ծառայել է նաև որպես օրացույց (տե՛ս Բ. Ե. Թումանյան, Հ. Հ. Մնացականյան, «Բրոնզե դարի գոտի-օրացույց», Երևան, 1965): Հայկական օրացույցի մասին սկզբնաղբյուրներում քիչ բան է պահպանվել: Ամենահին հիշատակությանը հանդիպում ենք Քերթովահայր Խորենացու գրքում. «Որովհետև թեպետ մեր նախորդ դուխներում հիշատակած կարգերն ու դեղեցիկ սովորություններն սահմանվեցին Վաղարշակից և ուրիշ հին թագավորներից, բայց նրանք մեծամեծ արվեստներից ու գիտություններից զուրկ էին մնացել, ավելի կոշտպուտների և

ասպատակություններէ հետեւելով, իսկ այնպիսի գիտություններէ կամ անփութ չէին կամ ձեռնհաս չէին, ինչպես շաբաթներ, ամիսներ, տարւան շրջաններ (սահմանելը). նրանք այսպիսի բաներ չգիտեին, գործ էին ածում ուրիշ ազգերինը: Նույնպես և չկար ծովագնացություն մեր աշխարհի ծովականների վրա, ոչ էլ ճանապարհորդություն գետերով, ոչ ձկնորսության գործիքներ, նույնիսկ երկրագործությունն ամեն տեղ տարածված չէր, այլ քիչ տեղերում. նրանք հյուսիսական ազգերի նման ապրում էին հում մսով և սրա նման բաներով: Այս բոլորը սահմանվեցին Արտաշեսի ժամանակ» (Մովսես Խորենացի, «Հայոց պատմութիւն», Երևան, 1940, էջ 126): Այստեղ որոշակի ասվում է, որ հայոց Արտաշես Ա Բարին թագավորը իր թագավորության (մ. թ. ա. 189—մ. թ. ա. 160) ժամանակ կարգավորել է հայոց տոմարը: Հասկանալի է, դա չի նշանակում թե հայկական օրացույցի պատմութիւնը սկսվում է Արտաշես Առաջինից:

Արևապաշտ, արևի երկրի բնակիչ հայը հնուց ի վեր օգտագործել է արեգակնային օրացույցը: Հայկական օրացույցը մի քանի տարեգլուխ է ընդունել: Դրանցից է Հայկա թվականը (կոչվում է նաև Հայկա շրջան, Բուն Հայկա թվական կամ Բուն թվական Հայոց): Հատ Դևոնդ Ալիշանի հաշվումների Հայկ նահապետը բունավոր Բելին սպանել է մ. թ. ա. 2492 թվականի նավասարդի 1-ին (օգոստոսի 11-ին), Հաղթության այդ մեծ օրը հայերը համարել են իրենց տարեգլխի սկիզբը, որ պայմանականորեն կոչվում է Բուն թվական հայոց կամ Հայկա թվական (տե՛ս «Յուշիկք հայրենյաց հայոց», հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 95): Այժմ էլ հայոց եկեղեցական օրացույցները հայոց թվականության (էրա) սկիզբը համարում են մ. թ. ա. 2492 թվականը: Դա կատարվում է թվաբանական պարզ հաշվարկով: 1972 թվականը Հայկա թվականով արտահայտելու համար 1972-ին գումարում են 2492, ստացվում է 4464: Բայց քանի որ Հայկա թվականի սկիզբը օգոստոսի 11-ն է, իսկ ժամանակակից թվականի սկիզբը հունվարի 1-ը, ապա Հայկա թվականն իր մեջ ընդգրկում է Գրիգորյան (ժամանակակից) օրացույցի մեկ տարվա երկրորդ կեսը և հաջորդ տարվա առաջին կեսը: Այդ պատճառով էլ այժմ հայկական եկեղեցական օրացույցները 1972-ն արտահայտելու համար գրում են 4464—4465:

Ամենայն հավանականությամբ հեթանոս հայերը առաջնորդվել են Բուն Հայկա թվականով, ըստ որի տարին ուներ 12 ամիս (յուրաքանչյուրը՝ 30-ական օրով) և 13-րդ (լրացուցիչ) մեկ ամիս (5 օրով): Ահավասիկ Բուն Հայկա օրացույցը.

|          |       |         |       |
|----------|-------|---------|-------|
| Նավասարդ | 30 օր | Մեհեկան | 30 օր |
| Հոռի     | 30 օր | Արեգ    | 30 օր |
| Սահմի    | 30 օր | Ահեկան  | 30 օր |
| Տրե      | 30 օր | Մարերի  | 30 օր |
| Քաղոց    | 30 օր | Մարգաց  | 30 օր |
| Արաց     | 30 օր | Հրոտից  | 30 օր |
|          |       | Ավելյաց | 5 օր  |

Հայոց ամսանունները դիցաբանական ծագում ունեն։ Որոշ հայ տոմարագետների գտնում են, որ հայոց տոմարի ամիսները կոչվել են Հայկ նահապետի 12 ուստրերի և դուստրերի անուններիով։ Հայկական ամսանունների մեջ ուշագրավ են նավասարդն ու Արեգը։ Նավասարդ նշանակում է նոր տարի (նավ-նոր, սարդ-տարի)։ Ի դեպ, նավասարդի նմանությունը է հայերենում կազմվել նաև երիտասարդ բառը։ Արեգը նաև հայկական բոլոր ամիսների առաջին օրվա անունն է։ Եվ պատահական չէ, որ հին հայերը նոր տարվա առաջին օրը և բոլոր ամիսների առաջին օրերը Արեգ են կոչել։ Դրա մեջ արտացոլվում է հայ ժողովրդի արևապաշտությունը։ Բացի այդ, միշտ չէ, որ հայերը իրենց տարեգլուխը համարել են օգոստոսի 11-ը։ Ուսումնասիրությունները պարզում են, որ հայերը մի ժամանակ իրենց նոր տարին սկսել են դարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ին, որ համապատասխանում է հայոց Արեգ ամսվա Արեգ օրվան։ Դա նշանակում է, որ հայերը տարեգլուխ են ընդունել նաև գարնան սկիզբը, բնության վարթոնքը և նոր տարվա առաջին ամիսն ու առաջին օրը Արեգ են կոչել՝ ցանկանալով, որ արևը բերքառատ դարձնի տարին։

Անուններ են ունեցել նաև հայկական ամսվա բոլոր 30 օրերը. ահա դրանք.

- |             |              |
|-------------|--------------|
| 1. Արեգ     | 12. Անի      |
| 2. Հրանդ    | 13. Պարխար   |
| 3. Արամ     | 14. Վանատուր |
| 4. Մարգար   | 15. Արամազդ  |
| 5. Ահրանք   | 16. Մանի     |
| 6. Մազդեղ   | 17. Ասակ     |
| 7. Աստղիկ   | 18. Մասիս    |
| 8. Միհր     | 19. Անահիտ   |
| 9. Չոպաբեր  | 20. Արագած   |
| 10. Մուրց   | 21. Գրգուռ   |
| 11. Երեմկան | 22. Կորդուիթ |



23. Ծմակ  
24. Լուսնակ  
25. Ցրոն (Սփյուռ)  
26. Նպատ

27. Վահագն  
28. Սիմ  
29. Վարագ  
30. Գիշերավար

Այս օրանունները ոչ միայն արտացոլում են Հայկական լեռնաշխարհի նշանավոր տեղանունները, այլև հայոց յուրովի դիցարան են: Այստեղ են հայոց բոլոր աստվածները և նրանց մեջ ամենահին հայկական աստվածը՝ Վանատուրը, որ հյուրընկալության, ինչպես և նոր տարվա (Ամանորի) աստվածն է: Հին հայերը տոմարի հանդեպ ոչ միայն խստապահանջ, այլև նրբանկատ են եղել: Դրա վկայությունն այն է, որ հայոց ամենահին աստվածը՝ Վանատուրը նվիրված է եղել նոր տարվան, հայկական տարեգլխին:

Հայերը ունեցել են ոչ միայն իրենց ազգային ամսանուններն ու օրանունները, այլև հին եգիպտացիների նման օրը (գիշերն ու ցերեկը) բաժանել են 24 հավասար մասերի (ժամերի) և դրանց տվել հետևյալ անունները.

#### Ցերեկվա ժամանուններ

|             |             |
|-------------|-------------|
| Այգ         | Շանթակող    |
| Ծալգ        | Հրակաթ      |
| Ծայրացյալ   | Հուրփայլյալ |
| Ճառագայթյալ | Թաղանթյալ   |
| Շառավիղյալ  | Արագոտ      |
| Երկրատես    | Արփող       |

#### Գիշերվա ժամանուններ

|           |            |
|-----------|------------|
| Խավարուկ  | Հավաթափյալ |
| Աղջամուղջ | Գեղակ      |
| Մթացյալ   | Լուսաճեմ   |
| Շաղավոտ   | Առավոտ     |
| Կամավոտ   | Լուսափայլ  |
| Բավակաճ   | Փայլածու   |

Այս անունների մեջ ի հայտ է գալիս հին հայերի գեղագիտական ճանաչողությունը ցերեկվա ու գիշերվա առանձին պահերի երանգները նրբաճաշակորեն բնորոշելու գործում: Դրանցից մի

քանիսը ժամանակակից հայերենում պահպանվել են արդեն ոչ թե որպես ժամի անուն, այլ ցերեկվա ու գիշերվա որևէ պահը ցուցանող հասկացություն (օրինակ՝ այգ, աղջամուղջ, առավոտ)։

Հին հայկական օրացույցը նույնպես տառապում էր անշըճ-տույթուններով։ Եվ, չնայած հայերն ունեցել են հմուտ տոմարագետներ, որոնք կարող էին Հուլյան տոմարից օգտվելով ճշգրտել հայկական օրացույցը, բայց հայ եկեղեցին իր ազգային դիմագիծը պահելու համար դավանաբանական պայքար էր մղում բյուզանդական եկեղեցու դեմ և չէր համաձայնում ընդօրինակել օտարների տոմարական ճշտումները։ Վերջապես 584 թվականին, Դվինի ժողովում Մովսես Եղվարդեցի կաթողիկոսի առաջարկով հայերն ընդունում են նոր, ճշտված տոմար, որ կոչվում է Հայոց մեծ թվական։ Ըստ այդ տոմարի առաջին տարին սկսվում է 552 թվականի հուլիսի 11-ից։

Տասնմեկերորդ դարում հայերը շարժական տոմարից անցնում են անշարժ տոմարին։ Հովհաննես Սարկավազը 1085-ին բարեփոխում է Հայոց տոմարը, որ կոչվում է Հայոց անշարժ տոմար, Հայոց փոքր թվական կամ Սարկավազադիր թվական։ Հայկական այս նոր տարեգլխի սկիզբը 1085-ի օգոստոսի 11-ն է։ Հետագա դարերում այդ տոմարը հայերը զուգահեռաբար գործածում են Հայոց մեծ թվականի հետ։

1317-ին Աղանայի ժողովում հայերը որոշում են կիրառել Հուլյան տոմարը։ Սակայն վերջինս չկարողացավ դուրս մղել հայկական ազգային տոմարները՝ Բուն Հայկա թվականն ու Հայկա մեծ թվականը։ Հարկ է նշել, որ մինչև 1317-ը Հուլյան տոմարը անծանոթ չէր հայերին։ Երկրորդ դարի սկզբներին, Տրայիանոս և Ադրիանոս կայսրերի ժամանակ, երբ Հայաստանը հարկատու էր Հռոմին, հայերը պարտադրված առաջնորդվել են նաև Հուլյան տոմարով։ Բայց դա, հավանաբար, եղել է մի կարճ ժամանակամիջոց։

Տասնվեցերորդ դարի նշանավոր տոմարագետ Ազարիա Զուղայեցին կազմում է մի օրացույց, որ հայտնի է Ազարիայի կամ Զուղայեցիների տոմար անունով։ Զուղայեցին «հիմնականում պահպանում էր հայկական նախկին օրացույցի սկզբունքը՝ տարին անշարժ էր, ուներ 12 ամիս՝ 30-ական օրով ու հավելյալ ամիս՝ 5 օրով։ Նահանջ տարիներին 12-րդ ամիսն ունենում էր 31 օր։ Ազարիա Զուղայեցու տոմարով տարեափոխըն օգոստոսի 11-ից տեղափոխված էր աստղագիտական թվահաշիվ՝ դարնանային դիշերահավասարի օրը՝ մարտի 21-ը։ Ամիսների անունները

մեծ մասամբ արաբական էին և հռոմեական (Հուլյան) տոմարի համեմատությամբ ունեին հետևյալ պատկերը.

| Աղարիայի տոմար | Հռոմեական (Հուլյան) տոմար |
|----------------|---------------------------|
| Շամսի 1        | մարտի 21                  |
| Ադամի 1        | ապրիլի 20                 |
| Շբաթի 1        | մայիսի 20                 |
| Նախայի 1       | հունիսի 19                |
| Ղամարի 1       | հուլիսի 19                |
| Նաղարի 1       | օգոստոսի 18               |
| Թիրայի 1       | սեպտեմբերի 17             |
| Դամայի 1       | հոկտեմբերի 17             |
| Համերայի 1     | նոյեմբերի 16              |
| Արամի 1        | դեկտեմբերի 16             |
| Օվդանի 1       | հունվարի 15               |
| Նիրհանի 1      | փետրվարի 14               |
| Հավելյացի 1    | մարտի 16                  |

Աղարիայի տոմարը գործածվել է Նոր Զուղայի և Հնդկաստանի հայկական գաղութներում» («Հայկական սովետական հանրագիտարան», հ. 1, Երևան, 1974, էջ 100): Որոշ ժամանակ անց Զուղայեցիին այս ամիսներին տվել է հայկական գեղեցիկ անուններ, որոնք չեն գործածվել: Ահա այդ ամսանունները.

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| 1. Յողաբեր—Շամս     | 8. Տերևաթափ—Դամալ    |
| 2. Մաղկավետ—Ադամ    | 9. Զյունաբեր—Համիրայ |
| 3. Գետահոս—Շբաթ     | 10. Սառուցյալ—Արամ   |
| 4. Պողավետ—Նախա     | 11. Հողմաշունչ—Օվդան |
| 5. Առատահոս—Ղամար   | 12. Զյունահալ—Նիրհան |
| 6. Գոհություն—Նաղար | 13. Մանիշակ—Հավելյաց |
| 7. Պողակիթ—Թիրայ    |                      |

Հետագայում հայկական ամսանուններ ստեղծելու փորձ է կատարել նաև Նահապետ Ռուսինյանը:

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո գործածվում է Գրիգորյան տոմարը: Հայկական եկեղեցին Գրիգորյան տոմարը պաշտոնապես ընդունել է միայն 1923 թվականին:

Հայաստանում հեթանոսության շրջանում կիրառվող հայկական և օտար տոմարները հաշիվը պահում էին քրմերը: Քրիստոնեությունն ընդունելուց հետո հայկական օրացույցը դարձավ հայ եկեղեցու մենաշնորհը: Մեսրոպյան գրերի գյուտից հետո հայկական տոմարի մասին տվյալներ են պահպանվել գրավոր ձևագրերում և վիճադիր արձանագրություններում:

1513 թվականին Վենետիկում լույս տեսավ «Պարզատուժար»-ը: Դա հայերեն առաջին տպագիր օրացույցն էր:

Անցած 460 տարում լույս են տեսել 1000 անունից ավելի հայերեն օրացույց ու տարեցույց: Մինչև այժմ, սակայն, փորձ չի արվել կազմելու դրանց մատենագիտությունը: Այդ աշխատանքը իրագործելուն խանգարել է երկու հիմնական պատճառ.

Ա. գիտականորեն ղեկավար է որոշել, թե օրացույցներն ու տարեցույցները ինչ «ժանրի» են պատկանում: Դրանք գտնվում են պարբերական մամուլի և տպագիր գրքի սահմանափակին, բայց առանձին վերցրած ոչ պարբերական մամուլ են, ոչ էլ՝ տպագիր գիրք: Հայ մատենագիրները հաշվի առնելով որոշ օրացույցների գիտաձևանշողական արժեքը, դրանք մտցրել են պարբերական մամուլի մեջ, որի շնորհիվ մատենագիտական շրջանառության մեջ են մտել շուրջ հարյուր օրացույց ու տարեցույց: Բայց դա կատարվել է առանց գիտական քննության: Մատենագրման շնորհիվ հարյուրավոր արժեքավոր օրացույցներ ու տարեցույցներ:

Բ. հայկական օրացույցների ղգալի մասը չի պահպանվել: Առանձին օրացույցների մասին էլ կցկտուր տեղեկություններ կան միայն պարբերական մամուլի էջերում, որոնց մատենագիտությունը կազմելու համար պետք է «թերթեր» ամբողջ հայ պարբերական մամուլը: Միաժամանակ եղել են շատ օրացույցներ, որոնց մասին պարբերական մամուլը ոչինչ չի նշել: Դրանք անվերադարձ կորուստ են հայ տպագիր գրքի ամբողջական մատենագիտության համար:

Ականավոր բանասեր ու հանրագիտակ Թևոդիկի 1911-ի «Ամենուն տարեցույց»-ում (էջ 5—9) տպագրված է «Յուդահանդես հայ օրացույցներու և տարեցույցներու» տեղեկատու հոդվածը, որ կազմել է բանասեր Ներսես Ակինյանը (որոշ լրացումներ կատարել է ինքը՝ Թևոդիկը): Դա եղել է օրացույցների մատենագիտություն կազմելու առաջին և վերջին փորձը: Ակինյանը, սակայն, հայերեն օրացույցների ցուցակը «Պարզատուժար»-ից սկսելու փոխարեն սկսել է 1565-ից, Վենետիկում լույս տեսած «Նաու-

նաչլին՝ յուր տոմարի, գեղեցիկ և պիտանի» օրացույցից: Ավելին, 1513-ից մինչև 1910-ը տպագրվել է հայկական ավելի քան 300 օրացույց ու տարեցույց, մինչդեռ Ակինյանի վերոհիշյալ ցանկում տեղ է դրել մոտ 200-ը:

Այս գիրքը հայկական տպագիր օրացույցի պատմությունն ու մատենագիտությունը (1513—1973) ներկայացնելու առաջին փորձն է:

## ՕՐԱՑՈՒՅՑ ՏԵՐՄԻՆԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական տպագիր օրացույցները կոչվել են պարզատոմար, տոմար, տոմար, տոնացույց, տոնացուցակ, հանապաղօրդյան, եղանակ, զազամիա, տարեցույց, ընկեր հայկական, տարեմիջ, հուշատետր, էֆիմերտե, ամսանախ, կաղանդք, կաղանդացույց (նաև՝ կաղանդիկոն), տոնապատճառ, տոնամակ (տոնանամակ), տոնական գիրք, տարեգիրք, տարեգլուխ, նաև՝ տարեմուտ: Այս բառերը, սակայն, հիմանիշներ են դարձել տպագիր օրացույցների անվանումներում: Դրանցից յուրաքանչյուրը ունի իր նրբերանգը: Ահավասրիկ.

Յրացույց. Թևոդիկը հասկացությունն սահմանումը տվել է այսպես. «Տարվան օրերուն, ամսոց, եղանակաց ու տոներու ցուցակը պարունակող մատենիկ», ապա մեկնաբանել. «Օրացույցը, մանավանդ անցյալի մեջ, լի էր աստղագիտական ու մետեորաբանական ցուցմունքներով, այս պատճառով կոչված նաև էֆիմերտե, անծանոթ է հին դարերու բոլոր քաղաքակիրթ ժողովրդաց և տարածվեցավ տպագրության գյուտեն անմիջապես վերջ: Կիմբագրվեր բժիշկներեն և տոմարագետներեն, որոնք հաճախ ախտամոլներ ալ էին, ուստի օգտակար դիտելիաց առընթեր կպարունակեր օդի սուտուիտիլ զուշակութուններ» (տե՛ս «Ամենուն տարեցույցը», 1929, Փարիզ, էջ 53):

Օրացույց, գիրք, որ պարունակում է տարվա բոլոր օրերը հաջորդաբար, բաժանված ամիսների, շաբաթների, լուսնի օրերը, արեղակի ծագումը ամեն օր, տարվա եղանակները, և բացի սրանցից՝ այլ տեղեկություններ, նախելով թե ինչ նպատակով է կազմված: Ամեն տարվա համար նոր օրացույց է պատրաստվում, և մի օրացույցը մյուս տարվան չի հարմարում: Եկեղեցական օրացույց, որ բացի վերահիշյալ նյութերից պարունակում է սրբերի տոները, յուրաքանչյուր օրվա համար, պասքերը, եկեղեցական պաշտամունքի շարահանները ևն: Քաղաքական օրացույց, որ պարունակում է քաղաքական նշանավոր անցքերի տարեդարձները, քաղաքական

կամ պետական տոները են: Պատի օրացույց, բաղկացած 365 կամ 366 թերթից, ամեն մի օրվա համար մի թերթ, որ տվյալ օրն անցնելուց հետո պոկվում դեն է ձգվում: Սեղանի օրացույց, նույնպես բաղկացած 365 կամ 366 թերթից, որոնք անց են կացրած երկու ողորկ ու կոր ճաղերի վրա և կարող են շուռ տրվել ըստ կամի. գործնական և պիտանի է ատյանների, առևտրական հիմնարկությունների համար: Գրքի ձևով կաղմված օրացույցները պարունակում են նաև շատ գործնական պիտանի տեղեկանքներ—վիճակագրական, ֆինանսական, կենսագրական, երկաթուղային կամ ծովային հաղորդակցության, շափերի և կշիռների, ևն» (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 4, Երևան, 1945, էջ 615): «Օրացույց, տոմար, տարեցույց, տոնացույց» (Ա. Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան, 1967, էջ 681):

Պարզատոմար. «Պարզ և համառոտ տոմար, որ գտանի պեսպես յորինեալ ի բազմայ, ի հին և ի նոր մատեանս փոքրկոնս. ի մեջ պարզատոմարիս, յորժամ տարին նահանջ լինի, և այլն: Տոմար» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 634): «Պարզատոմար, պարզ և համառոտ տոմար եկեղեցական տոների» (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 4, Երևան, 1945, էջ 82):

Տոմար. «1. Տոմար, կամ տոմար. գրի և տօմար, կամ տովմար (հուն. *թոմոս*, *թոմոս*—հատոր գրոց, հատված բանից գրելոց ի գլուխս գլուխս. գիրք. մատեան. կոնդակ: 2. Տոմար կամ տոմար. ցուցակ հաշվի և կարգի ժամանակագրութեան, աստղաբաշխութեան, և թվականաց ազգաց, և տոնից սրբ., կաղանդացույց, օրացույց. և թվական» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 889): «Տոմար (հուն. *թոմարիոն*—Հատորիկ, գիրք, վավերագիր). 1. Գիրք, մատյան: 2. Գրքի մի հատված՝ վերնագրով: 3. Գրվածք, թուղթ, նամակ: 4. Վավերական գրություն, փաստաթուղթ, արձանագրություն: 5. Աստղաբաշխական հաշիվների վրա հիմնված ժամանակագրական սխտեմ, տարեցույց: Հին կամ Հուլյան տոմար, նոր կամ Գրիգորյան տոմար, Հին կալկական կամ Շարժական տոմար: 6. (եկեղեց.) Տոմարի վրա հիմնված աղյուսակ կամ գիրք, որտեղ նշանակվում է եկեղեցական տոների կարգը, տոնացույց: Տոմարը լինում է որոշ ժամանակաշրջանի համար կամ մշտնջենավոր: 7. Հաշվապահական մատյան» (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 4, Երևան, 1945, էջ 432): «Տոմար, 1. Տարեցույց, օրացույց, տոնացույց: 2. Թվականություն, տարեհաշիվ: 3. Հաշ-

վեզիրը, հաշվեմատյան, մատյան» (Ա. Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան, 1967, էջ 630):

Տումար. նույնն է, ինչ տոմարը: «Տումար, տես տոմար» (Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 891):

Տոնացույց. «Տոնացույց, ցուցակ տոնից և տոնական պաշտամանց. իբր օրացույց եկեղեցական. կաղանդացույց» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 902): «Տոնացույց, Գիրք, որտեղ նշանակված են եկեղեցու տարեկան տոները և նրանց տոնելու օրերը տարեցտարի, մշտական օրացույց եկեղեցական տոներին» (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 4, Երևան, 1945, էջ 452): «Տոնացույց, տես տոնացուցակ» (Ա. Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան, 1967, էջ 630):

Տոնացուցակ. «Տոնացուցակ, նույնն է ինչ տոնացույցը» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 902): «Տոնացուցակ. 1. Տոնացույց. 2. Հավաքածո մի քանի սրբերի տոներին» (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 4, Երևան, 1945, էջ 452): «Տոնացուցակ, տես Տոնացույց» (Ա. Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան, 1967, էջ 630):

Հանապազօրդյան. «Հանապազօրդյան. որ ինչ լինի անդադար, օրըստօրե. հանապազօրյա. հավերժական» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 55): «Հանապազօրդյան, 1. Մշտական, միշտ կատարվող՝ տեղի ունեցող. 2. Ամեն օրվա կամ ամեն շաբաթվա համար նշանակված, օրըստօրե կատարվելիք» (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 3, Երևան, 1944, էջ 42): «Հանապազօրդյա, տես հանապազօրյա» (Ա. Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան, 1967, էջ 364):

Եղանակ. «Ալլափոխութիւն օդոց, մանավանդ ի չորս ժամանակս տարվոյ» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1, Վենետիկ, 1836, էջ 652): «Եղանակ, օդ, կլիմա, օր» (Ա. Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան, 1967, էջ 179):

Գազամիա. 1854—1866-ին այս անունով հայատառ թուրքերենով օրացույց-տարեցույց է լույս տեսել Կ. Պոլսում:

Տարեցույց. «Տարեցույց, 1. Օրացույց, որ պարունակում է նաև զանազան գիտելիքներ—աստղաբաշխական, օդերևութաբանական, վիճակագրական, նախընթաց տարվա նշանավոր անցքեր են: 2. Հավաքածո վիճակագրական՝ պատմական՝ վարչական՝

տնտեսական և այլ տեղեկությունների, որ տարեցտարի հրատարակվում է և պարունակում է տվյալներ անցած տարվա մասին» (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 4, Երևան, 1945, էջ 386): «Տարեցույց, օրացույց, տոնացույց, տոմար, կադանդացույց» (Ա. Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան, 1967, էջ 619):

Ընկեր հայկական. Այս անունով օրացույց է լույս տեսել Կ. Պոլսում, 1886—1887-ին:

Տարեհիշ. Տարին նշող, տարին ցույց տվող:

Հուշատետր. «Հուշատետր, ծոցատետր, կամ փոքրիկ զրբույց նշումների համար» («Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 3, Երևան, 1974, էջ 400): «Հուշատետր, 1. Հուշարան, հուշագիրք, հիշակ (ալբոմ). 2. Նշատետր» (Ա. Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան, 1967, էջ 407):

Էֆիմերտե. «Էֆիմերտե (հուն. էֆիմերիդոս—օրավեր, առօրյա դեպք): Աղբյւնայեւ նշանակում էր օրացույց, այժմ՝ ժողովածու սնոտիապաշտական տեղեկությունների՝ մոլորակների աղեկցության, անցքերի և եղանակների զուշակության, երազների մեկնության ևն (Ասվում է նաև էֆիմերդի, Եփրեմվերդի ևն)» (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 2, Երևան, 1944, էջ 50): «Էֆիմերտե, տոմարական մի զրվածք է, որի մեջ կան աստղագիտական ծանոթություններ, սուտ զուշակություններ, երազների մեկնություն ևն, և մինչև այսօր էլ գործածական է տգետ տերտերների և պառավների ձեռքում»—Առաջին կադմոդն է Սարգիս արքեպս. Սառաֆյան, Պոլսեցի Գրված է նաև էֆիմերտես, էֆիմերտես (Տաշյան, Յուցակ, էջ 473): Հուն. էմիմերիդոս—առօրյա տեղեկագիր: Եփրեմվերդի (ժողովրդական ստուգաբանությամբ այսպես ձևափոխված, իբր թե Եփրեմ և Վերդի» (Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», հ. Բ, Երևան, 1973, էջ 119): «Հնում հունական, եգիպտական, Պտղոմեան դինաստիայի թագավորների և այլ բարձրաստիճան պաշտոնյաների օրագրերը կոչվում էին էֆեմերիդես: Հայտնի է, որ հին Հունաստանի և Եգիպտոսի թագավորները նման էֆեմերիդներում նշում էին ամենօրյա տեղեկություններ, հաշվետվություններ թագավորի, իշխանավորի գործունեության մասին, իսկ հետագայում ամեն մի նշանավոր մարդու կամ զինվորականի գործունեության մասին: Օրինակ, հայտնի են Ալեքսանդր Մակեդոնացու էֆեմերիդները և այլն: Հետագայում էֆեմերիդ են կոչվել նաև աստղագիտական հատուկ տվյալներ պարունակող աղյուսակները



1036 - 29

և այն հին օրացույցները, որոնց մեջ բացի օրացուցային մասից տեղ էին գտել նաև աստղագիտական տվյալների հետ կապված գուշակությունները: Ավելի ուշ ժամանակաշրջանում էֆեմերիդներում մեծ տեղ են տվել գուշակումներին, երազահանին, գրքացույցյանը, բժշկական գիտելիքներին, փիլիսոփայական դատողություններին և այլն: Հայերեն հրատարակված «էֆեմերտե»-ն ժողովրդի մեջ սովորություն էր դարձել անվանել «Եփրեմվերդի» և շատերը կարծում էին, թե Եփրեմվերդին եղել է գիտուն մարդ և հանդիսացել է այդ գրքի հեղինակը: Սակայն պետք է նշել, որ դա ոչ թե հեղինակի, այլ գրքի անունն է, որը, ինչպես ասացինք, հունական էֆեմերիդն բառից է առաջացել: Այսպես կոչված «Եփրեմվերդին» — «էֆեմերտե»-ն նույնպես գուշակարան-երազահան է, որովհետև այդ գրքում բացի օրացուցային համառոտ տեղեկություններից, հիմնական մասը հատկացված է գուշակություններին, երազահանին, գրքացույցյանը, կապված երկնային լուսատուների հետ: Ահա դրա համար էլ «էֆեմերտե»-ն ավելի շուտ հայտնի է դարձել ոչ թե որպես օրացույց, այլ իբրև գուշակարան, երազահան, որը կրոնի համար հզոր զենք է հանդիսացել աշխատավոր մարդկանց խաբելու, կեղեքելու և նրանց միտքը մթադնելու գործում: Հայերեն լույս տեսած «էֆեմերտե»-ի մեջ հանդամանորեն տրված են նաև հռոմեական և հայոց տոմարների հետ կապված կանոններ, Հայերեն առաջին «էֆեմերտե»-ն տպագրվել է 1748 թվականին Վենետիկում: Հետաքրքրական է նշել, որ առաջին աստղագիտական էֆեմերիդը՝ կազմված 30 տարվա համար, լույս է տեսել Նյուրնբերգում 1476 թվականին: 1481 թ. հրատարակված գերմանական օրացույցում, բացի աստղագիտական տվյալներից, կրոնական տոներից ու գուշակություններից, տեղ էին գտել նաև եղանակի կանխագուշակման և գյուղատնտեսության հետ կապված հարցեր: Հետագայում նույն տիպի օրացույցներ են հրատարակվել 100 տարվա համար, որոնցում առանձին տեղ են հատկացրել գուշակություններին» (Հ. Ս. Բադալյան, «Օրացույցի պատմություն», Երևան, 1970, էջ 16—17): «էֆեմերիդներ (հուն. էֆեմերիդոս — արբայական օրագիր), կարևոր իրադարձությունների ամենօրյա զրառումներ Ալեքսանդր Մակեդոնացու (մ. թ. ա. 4-րդ դար) արքունիքում» («Большая советская энциклопедия», Երկրորդ հրատարակություն, հ. 49, Մոսկվա, 1957, էջ 262):

Ալմաճախ (նաև՝ Ալմաճակ). «Ալմաճակ», օրացույց. ունի միայն Ռեվոլա, Բաղդիք հաշույց, տպ. 1633, էջ 5: Իտալ. արժանակիտ, ֆրանս. արժանակ, լատ. արժանակիտ և հունարեն արժա-



նակոն բառն է: Եվսեբիոս այս անունով կոչում է եգիպտական օրացույցները: Բառի բուն ծագումը անհայտ է: Իրապես նշանակում է «օրացույց՝ աստղաբաշխական ծանոթություններով», բայց հետո այս կարգի հրատարակությանց մեջ ավելացան ամեն տեսակի նյութեր և այժմ ստացել է ընդհանրապես «ժողովածու» նշանակությունը: Ըստ այսմ արեևելյան գրականում ասում ենք արմանախ (ռուսական, որ է գերմանական արտասանությամբ) «գրական ժողովածու իմաստով» (Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», հ. 1, Երևան, 1971, էջ 95): «Ալմանախ, 1. Օրացույց, որ պարունակում է նաև աստղաբաշխական և այլ տեղեկություններ: 2. Ոչ պարբերական գրական ժողովածու, որտեղ զետեղվում են զանազան գրողների երկեր» (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 1, Երևան, 1944, էջ 18): «Ալմանախ, տարբեր գրողների ստեղծագործությունների ոչ պարբերական գրական ժողովածու» («Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 1, Երևան, 1969, էջ 15): «Ալմանախ (լատ. արմանակոս բառից), 1. Տարբեր հեղինակների գրական ստեղծագործությունների ժողովածու. 2. Հնում (հատկապես միջնադարում)՝ օրացույց տարբեր, գլխավորապես աստղաբաշխական դուշակություններ պարունակող տեղեկություններով» («Словарь иностранных слов», Մոսկվա, 1954, էջ 41):

Կաղանդ. «Կաղանդք (հուն. գալանտե), ժամանակ կոչելու զժողովուրդն ի տոն և ի հանդես ինչ. մանավանդ Ամսագրուխ. ամսամուտ. յորմե ի մեկ և տարեմուտ» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1, Վենետիկ, 1836, էջ 1037): «Կաղանդք (լատ. կալենդաա, ամսագլխի օր), 1. Յուրաքանչյուր ամսագլխի առաջին օրը, ամսագլուխ, ամսամուտ: 2. Հունվար ամսվա առաջին օրը տարեմուտ, նոր տարվա առաջին օրը. 3. Կաղանդի տոնի առիթով պատրաստված քաղցրավենի (մեղր նշով կամ կաղնով)» (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 2, Երևան, 1944, էջ 371): «Կաղանդ (հատկապես զործածվում է հոգնակի ձևով), Տոմար (այժմ միայն «ամանոր, տարեգլուխ» նշանակությամբ է գործածվում և այն էլ միայն արեւմտյան գրականում. որից կաղանդացույց, օրացույց, տոմար» (Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», հ. 2, Երևան, 1973, էջ 493—494): «Կաղանդ, նոր տարի, ամանոր, տարեմուտ, տարեգլուխ, նավասարդ, կաղանդիկոն, ծաղատիկ» (Ա. Մ. Սուբխյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան, 1967, էջ 298): Այս բառից է առաջացել ռուսերեն календарь բառը: «Կալենդար (լատ. կալենդարիում—կալենդաա՝ ամսվա առաջին օրը բառից)».

1. Ժամանակը հաշվելու համակարգ («Словарь иностранных слов», Մոսկվա, 1954, էջ 293): «Հնագույն շրջանում հոռմեացիներն ունեցել են օրացույցի յուրահատուկ հաշիվ: Նրանք յուրաքանչյուր ամիսը բաժանել են երեք անհավասար մասի, բոլոր ամիսների առաջին օրն անվանել են կալենդա, որ նշանակում է ամեն ամսվա առաջին օրը: Այդ օրը սովորաբար վճարվում էին տոկոսները» (Ղ. Ս. Բադալյան, «Օրացույցի պատմություն», Երևան, 1970, էջ 158):

Կաղանդացույց (նաև՝ կաղանդիկոն)։ «Կաղանդացույց, մասն տոմարական գիտություն, որ ըստ մտի գուշակն ղհանգամանս տարվոյն, երբ կաղանդն հանդիպի ի կիրակն: Տոմար: Իսկ այլ կաղանդացույց կոչեցին առ մեօք ղտոմարն տարեկան ևս և ամսացույց, լուսնացույց, որպես և յաւուր յայսմիկ օրացույց ասի: Կաղանդիկոն, կաղանդ՝ ըստ որում տարեգլուխ, որոշեալ ի հասարակ կաղանդաց՝ որ են ամսագլուխք» («Նոր բառգիրք հայկաղեան լեզուի», հ. 1, Վենետիկ, 1836, էջ 1037): «Կաղանդացույց, 1. Եկեղեց. տոմարով կաղանդը ցույց տվող. հին տոմարի մի մասը, որտեղ գուշակություններ էին գրված՝ նայելով թի ամսագլխի կաղանդը շարաթվա որ օրը կգա: 2. Տարեցույց կամ օրացույց» (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 2, Երևան, 1944, էջ 37): «Կաղանդացույց, տարեցույց, օրացույց, տոմար, տոնացույց» (Ա. Մ. Սուբխասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան, 1967, էջ 298):

Տոնապատճառ. «Տոնապատճառ կամ պատճառ տոնից, նոյն ընդ վ. Անուն մատենին, ուր լինին ճառք մեկնողականք ի վերա տոնից և պահոց» («Նոր բառգիրք հայկաղեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 901): «Տոնապատճառ (եկեղեց.), Տոների պատճառ, մի գիրք, որ պարունակում է ղանազան անձերից և ղանազան ժամանակ գրված մեկնողական ճառեր այս կամ այն տոնի, պասքերի և ընթերցվածքի մասին. կոչվում է նաև պատճառ տոնից» (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 4, Երևան, 1945, էջ 452): «Տոնապատճառ, Տոնական գիրք, տոնանամակ, պատճառանամակ» (Ա. Մ. Սուբխասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան, 1967, էջ 630):

Տոնամակ (տոնամամակ)։ «Տոնամակ, տոնից ամեն կարգ և ցուցակ ընթերցուածքովք. այն են ճաշոյք ամի ամի տոնից տարեկանաց. որ առ ետինս Ճաշոց գիրք ասի. Յիշատակարան տոնից տերունական և սրբոց» («Նոր բառգիրք հայկաղեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 901): «Տոնանամակ—տես՝ Տոնապատ-

ճառ» (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 4, Երևան, 1945, էջ 452):

Տոնական գիրք. «Տոնական գիրք, տ. տոնամակ. և տոնանամակ. և տոնացույց» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 901): «Տոնական գիրք, տես Տոնապատճառ» (Ա. Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան, 1967, էջ 630):

Տարեգիրք. «Տարեգիրք, Տարեգիր, տարեգրություն, ժամանակագրություն» (Ա. Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան, 1967, էջ 619):

Տարեգլուխ. «Տարեգլուխ, գլուխ տարվոյ. կաղանդ, տոմար» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 856): «Տարեգլուխ, տարվա սկիզբը, նոր տարվա առաջին օրը, կաղանդ» (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 4, Երևան, 1945, էջ 385): «Տարեգլուխ, Տարեմուտ, տարեսկիզբ» (Ա. Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան, 1967, էջ 619):

Տարեմուտ. «Տարեմուտ, կաղանդ» («Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Վենետիկ, 1865, էջ 777): «Տարեմուտ, Այն օրը, երբ մտնում են նոր տարին, տարեգլուխ, կաղանդ» (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան», հ. 4, Երևան, 1945, էջ 386): «Տարեմուտ, տարեգլուխ, տարեսկիզբ» (Ա. Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան, 1967, էջ 619):

## ԱՌԱՋԻՆ ՓՈԽ. 1513—1800

Հայկական տպագիր օրացույցի 460-ամյա շրջանը մինչև այժմ չի պարբերացվել։ Այն մենք բաժանել ենք երեք փուլի։ Առաջին փուլ. 1513—1800, երկրորդ փուլ. 1801—1915, երրորդ փուլ. 1916—1973։

Հայկական օրացույցի տպագրությունը սկզբնավորվել է «Պարզատումար»-ով։ Մինչև վերջերս «Պարզատումար»-ը համարվում էր նաև հայերեն առաջին տպագիր գիրքը։ Սակայն այժմ, համարյա «պաշտոնապես» հայերեն առաջին տպագիր գիրքը ընդունվում է «Ուրբաթագիրք»-ը։ Ինչո՞ւ «Պարզատումար»-ը հայ տպագրության առաջնեկի իր դիրքերը զիջեց «Ուրբաթագիրք»-ին։ Զիջե՞ց, թե ինչ-որ բան ճշտվեց։ Հայկական տպագրության սկզբնավորման պատմության մասին առաջինը հանդես է եկել Ղևոնդ Ալիշանը 1865-ին։ Անցած 100 տարում այդ հարցով դրադ-

վել են բազմաթիվ հայ բանասերներ: Նրանք պարզել են, որ հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտը 1512—14-ին տպագրել է «Ուրբաթագիրք»-ը, «Պատարագատետր»-ը, «Աղթարք»-ը, «Պարզատումար»-ը և «Տաղարան»-ը: Սակայն թե այդ հինգ գրքերից որն է հայ տպագրության երախայրիքը՝ միշտ էլ եղել է վիճաբանության տեղիք տվող հարց: 1889-ի հոկտեմբերի համարում «Հանդես ամսօրյա» ամսագիրը տպագրում է բանասեր Գ. Գոմբիկյանի «Հայ տպագրության ամենահին երախայրիքը» հոդվածը (էջ 209—212), որտեղ առաջին անգամ նկարագրում է «Պազատումար»-ը և հայտնում, որ այն տպագրվել է 1512-ին և դա հայերեն առաջին տպագիր գիրքն է: Նույն ամսագրի 1890-ի հուլիսի համարում (էջ 161—163) տպագրվում է Գ. Գալեմբյարյանի «Հայ տպագրության երախայրիք մ'ալ» փոքրիկ հոդվածը, որի մեջ, տողատակի ծանոթագրությամբ նշվում է, թե ինչու է «Պարզատումար»-ը զիտվում որպես հայ առաջին տպագիր գիրքը. «Ամենն են յառաջ դնելնուս պատճառն է՝ որ Ուրբաթագիրքը կը սկսի զարգացրով, իսկ Պարզատումարը՝ պարզ երկաթագրով, և հազիվ մատենին կիսեն ևտքը կը գրվի զարգացիր, որ անշուշտ տպագրական յառաջագիմության նշանն է»: Գ. Գալեմբյարյանի տողատակի այս ծանոթագրությունը բանասիրական հայտնադործության ուժ է ստանում և 1512-ը դառնում է հայկական տպագրության սկզբնավորման տարի: Այդ «ծանոթագրության ուժով» էլ 1912—13-ին տոնվում է հայկական տպագրության 400-ամյակը: Սակայն, ըստ էության հայկական տպագրության սկզբնավորման հիմնավոր ու գիտական վերլուծությունը տալիս է հմուտ բանասեր-մատենագետ Ռաֆայել Իշխանյանը: «Բանբեր Մատենադարանի» № 7-ում (1964 թ.) տպագրվում է Իշխանյանի «Նորը հայ հնագույն տպագրությունների վերաբերյալ» հոդվածը (էջ 275—298), որը նոր լույս է սփռում հայ տպագրության սկզբնավորման մեղ համար մութ շրջանին: Քննաբար ուսումնասիրելով այդ ուղղությամբ հայ բանասերների կատարած բոլոր աշխատանքները և մասնագիտական փորձաքննության ենթարկելով Հակոբ Մեղապարտի տպագրած գրքերը, Իշխանյանը դրեթե սպառիչ պատասխան է տալիս հայ մշակույթի պատմության համար կարևոր նշանակություն ունեցող այդ հարցին և դառնում հայ տպագրության պատմության գրադոկումների մեջ ամենակրթատալը: Ի՞նչ է ապացուցում նա: Նախ՝ Հակոբ Մեղապարտի բոլոր գրքերը չէ, որ հասել են մեզ: Հակոբ Մեղապարտը հայերեն տպագրությունը ոչ «Պարզատումար»-ով է սկսել, ոչ էլ՝ «Ուրբաթագիրք»-ով: 16—17-րդ դարերում նվորայայի կաթոլիկական երկրներում բոլոր հայ տպա-

գրիչները իրենց տպագրական գործունեությունն սկսել են Սաղմոս-ով: Հետևապես Հակոբ Մեղապարտը չէր կարող բացառություն վազմել և իր տպագրությունն սկսել ուրիշ գրքով: Այդ ժամանակներում Սաղմոսարանը տարածված գրքերից էր, որն օգտագործում էր ոչ միայն եկեղեցին: Այն նաև դասագրքի դեր էր կատարում: Բացի այդ, քրիստոնեական աշխարհում Սաղմոսարանը անվնաս էր դավանաբանական տեսակետից և զրաքննությունն այն արդելքի տակ դնել չէր կարող: Կ. Գաբրիկյանը «Հայ բժշկության շուրջ» հոդվածում (տե՛ս «Բյուզանդիոն», 1906, № 2963) նշում է, որ ինքը տեսել է «Պարզատումար»-ի տպագրությամբ մի սաղմոս, «բայց նա ալ ծայրե ճոթն պակսած էր»: Իշխանյանը իրավացիորեն եզրակացնում է, որ այդ Սողմոսը տպագրել է Հակոբ Մեղապարտը 1509 թվականին և դա էլ պետք է համարել հայ տպագրության առաջին տարին: Կ. Գաբրիկյանի՝ Սեբաստիայում տեսած այդ Սաղմոսը անհետացել է Մեծ եղեռնի տարիներին, բայց և այնպես չի բացառվում, որ այն լույս աշխարհ գա մի օր:

Ռ. Իշխանյանը, առաջին հայկական տպագիր գրքերի տառերն ու զարդագրերը քննելով, հետեցնում է, որ մեզ հասած առաջին հայերեն տպագիր գիրքը «Ուրբաթագիրք»-ն է: Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանի նախաձեռնությամբ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ֆոնդով 1975-ին Վենետիկում նմանահանվեց Հակոբ Մեղապարտից մեզ հասած առաջին և վերջին գրքերը՝ «Ուրբաթագիրք և Տաղարան» (մեկ գրքով): Հրաշալի տպագրությամբ նմանահանված այդ գրքի առաջաբանում բանասեր Բաբկեն Չուգասըղյանը գրում է. «ԺՁ դարի սկզբներին իտալական քաղաքները, մասնավորապես Վենետիկը, արդեն դարձել էին տպագրական գործի կարևորագույն կենտրոններ, որտեղ հրատարակիչները արտակարգ ոգևորությամբ, կրոնա-եկեղեցական գրականությունը զուգահեռ, լույս էին ընծայում համաշխարհային գրականության գլուխ-գործոցներ, գիտական երկեր, գործարարական նպատակներին ծառայող հանրամատչելի գրքույկներ ու մատյաններ: Եվ ահա Վենետիկում գոյություն ունեցող հայկական փոքրիկ գաղութում Հակոբ անունով պայծառամիտ ու լուսատենչ մի անձնավորություն կարողանում է խիղախել ու դառնալ հայկական տպագրության առաջամարտիկը. 1512 թվականին արդեն նրա ջանքերով հրապարակի վրա է դրվում հայերեն առաջին տպագիր մատյանը՝ Ուրբաթագիրքը: Մոտ երկու կամ երեք տարի տևած իր հրատարակչական գործունեության կարճ ժամանակա-

միջոցում Հակոբը, որ համեստաբար իրեն «Մեղապարտ» է անվանում, բացի Ուրբաթագրքից տպագրում է ևս շորս գիրք՝ Պատարդատետր, Աղթարք, Պարզատումար և Տաղարան, թերևս նաև՝ մի «Սաղմոսարան»։ Չուզասրգյանի ասածի մեջ պետք է մի կարևոր ուղղում մտցնել։ Ուրբաթագիրքը ոչ թե առաջին, այլ մեզ հասած կամ մեզ հայտնի առաջին հայերեն տպագիր գիրքն է։

Անդրադառնալով մյուս գրքերին՝ իշխանյանը հայտնում է, որ «Պարզատումար»-ը հավանաբար տպագրվել է 1513-ին։

Առաջին հայերեն տպագիր օրացույցը փոշվում է «Այս է պարզայտումար հայոց», կարճ՝ «Պարզատումար»։ Տպագրվել է 1513-ին, Վենետիկում, տպարանը D. I. Z. A.: Բանասերները քննել են այս սկզբնատուները և վերջնական եզրակացություն չեն եկել, ի՞նչ են նշանակում այդ նշանագրերը։ Հայ տպագրիչի՝ Հակոբ Մեղապարտի անունը չկա՞ արդյոք դրանց մեջ, թե՞ այդտեղ թաքնված է իտալացի տպարանատիրոջ կամ տպագրիչի անունը։ Զարմանալին այն է, որ այդ դրոշմանիշը կրող տպարանից մինչև այժմ ոչ մի ուրիշ տպագիր գիրք չի հայտնաբերվել։

Հակոբ Մեղապարտը նշում է, որ «Պարզատումար»-ը Հայոց 961 տարվոյն համար է։ Հայկական թվականը Գրիգորյան տոմարով արտահայտելու համար բանասերները 961-ին գումարել են 551 և ստացել 1512 թվականը։ Բայց, ըստ երևույթին, պետք է գումարել ոչ թե 551, այլ 552։ Որով կստացվի 1513, այսինքն հայերեն առաջին տպագիր օրացույցի տարին։ Եթե նույնիսկ ընդունենք, որ 551 գումարելը ճիշտ է, նշանակում է Հակոբը չի հասցրել 1512-ին լույս ընծայել, այլ հրատարակել է 1513-ին։ Այստեղ ոչ մի արտառոց բան չկա։ Նույնիսկ մեր օրերում հաճախ գիրքը լույս է տեսնում մի քանի ամիս հետո այն տարուց, որ նշված է գրքի վրա։ «Պարզատումար»-ը ստորաբաժանված է չորս մասի. 1. Կաղանգացույց, 2. Երազացույց, 3. Մենդյան տղայոց, 4. Մարմնախաղաց։

Գիրքը բաղկացած է 118 էջից, տպագրված է նույն տեսակի սև ու բոսոր տառերից։ Հայտնի է, որ Յոհան Գուտենբերգը տպագրության գյուտը կատարեց 1440—48 թվականներին։ Գուտենբերգի տպագրած գրքերի մեջ կային նաև օրացույցներ։ 60—65 տարի հետո ճիշտ այդպես վարվեց նաև հայ առաջին տպագրիչը՝ Հակոբը, տպագրելով «Պարզատումար» օրացույցը։ Իր ժամանակի տպագրական տեխնիկայի մակարդակի շափանիշներով «Պարզատումար»-ը բարձր կարգի տպագրություն է, և այսօր էլ հիացնում է ընթերցողին։

1513—1800 թվականներին լույս է տեսել հայերեն 76 օրացույց։ Դրանք տպագրվել են վենետիկում, Կ. Պոլսում, Հռոմում, Նոր Զուլայում, Ամստերդամում, Մարսելում, էջմիածնում, Տրիեստում, Պետերբուրգում, Նոր Նախիջևանում, Աստրախանում, Կալկաթայում։ Հայ տպագրության սկզբնավորումից հետո հայկական տպագրության երկրորդ կենտրոնը դառնում է Կ. Պոլիսը։ Եվ պատահական չէ, որ առաջին փուլում տպագրված 76 օրացույցից 32-ը բաժին է ընկնում Կ. Պոլսին։

Հայ տպագիր օրացույցի զարգացման առաջին փուլը հետաքրքրական է մի այլ կողմով. տարբեր կարգի հրատարակությունների մեջ աշխարհաբար լեզուն ավելի շուտ է մուտք գործել օրացույցի մեջ։

Այլևայլ անուններով տպագրված առաջին հայկական օրացույցները մեծ մասամբ կրկնօրինակումներ էին (նույն բովանդակությամբ, հաճախ մասնակի լրացումներով)։

Հայկական երկրորդ օրացույցը («Խառնայինթուր տումարի, զեղեցիկ և պիտանի») լույս է տեսել 1565-ին, վենետիկում։ Այն հրատարակել է Աբգար Դպիրը։ Ուշագրավ է, որ Կ. Պոլսում տպագրված առաջին հայերեն զրքերի մեջ է նաև մի «Պարզատումար», որ տպագրել է նույն Աբգար Դպիրը 1868-ին։ Աբգար Դպիրն է նաև հայկական չորրորդ տպագիր օրացույցի հեղինակը («Տոնացույց», 1568, Կ. Պոլիս)։ Այս տոնացույցի առաջին գիտական նկարագրությունը տվել է Գ. Գալեմբյարյանը (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1890, հուլիս, էջ 162—163)։

Հայկական հինգերորդ տպագիր օրացույցը կոչվում է «Տոմար Գրիգորյան», որ լույս է տեսել 1584-ին, Հռոմում։ Սա 1582-ին Գրիգորյան տոմարին անցնելու կապակցությամբ իտալերին լույս տեսած օրացույցի թարգմանությունն է, որ կատարել է Հովհաննես Տերզեցին։

Հայկական տպագիր օրացույցի առաջին փուլում դրվեց ամենաերկարակյաց տպագիր օրացույցի հիմնաքարը։ 1757-ին վենետիկում սկսեց լույս տեսնել Մխիթարյան միաբանության օրացույցը։ Դա աշխարհի ամենաերկարակյաց տպագիր օրացույցն է, աշխարհի ամենաերկարակյաց պարբերական հրատարակությունը, որը ոչ մի տարի չի ընդհատվել։ Իր երկարակեցությամբ երկրորդ տեղը գրավում է «Գոթայի արմանախը» (լույս է տեսնում 1763-ից Գոթա (այժմ՝ ԳԴՀ-ում) քաղաքում, գերմաներեն և ֆրանսերեն, տարեգիրք է՝ զանազան կենսագրականներով և դիվանագիտության վերաբերյալ հորվածներով։ Ընդհատվել է 1944-ին, նորից



սկսել վերահրատարակվել 1956-ից: Ընդամենը լույս է տեսել առ այժմ (1973) 198 տարի): Իսկ Մխիթարյանների հայկական օրացույցը լույս է տեսել 217 տարի:

Հայ տպագիր օրացույցի պատմության մեջ նշանակալից երևույթ էր Սիմեոն կաթողիկոսի «Տօնացույց»-ը: «1774-ին Սիմեոն կաթողիկոսը ձեռնարկեց հաստատուն տոնացույց մը կազմել, որուն տպագրութիւնը ավարտվեցավ 1775-ի ապրիլի 7-ին և գործադրութեան դրվեցավ 1777-ին: Սիմեոն կաթողիկոս, հիմնվելով տարեգիրներում գրութեանց վրա, աշխատեցավ ըստ յուրաքանչյուր տարեգրի բոլոր տարեկան տոները կարգադրել: պատրաստեց Հինգհարյուրակի ամբողջական ցուցակն ալ, որով ունեցանք մշտնջենական օրացույց մը: Իր տոնացույցը, որուն մեջ փոփոխած էր մինչև նույն ատեն գործածված տոնացույցին ինչ ինչ կետերը, շնորհովեցավ Կաղզվանցի Զաքարիա Կ. Պոլսոս պատրիարքի կողմն, բայց Դանիել պատրիարք 1799-ին հաջորդելով Զաքարիա պատրիարքին, հրամայեց անոր գործադրութիւնը» («Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», 1900, Կ. Պոլս, էջ 94): «Սիմեոն կաթողիկոսը 1774 թվականին տպեց իր պատրաստած «Տօնացույց»-ը, որ իր անունով էլ կոչվում է Սիմեոնյան տոնացույց: Այդ տոնացույցը ինքն էր կարգավորել և երկու հատորի բաժանել: Տոնացույցի հրատարակութիւնը յուր ժամանակին մեծ աղմուկ հանեց ազգի մեջ: Մեր եկեղեցու տոնացույցը յուր սկիզբն առնելով Ս. Գրիգոր Լուսավորչից, այնուհետև մինչև անցյալ դարն քանի մը անգամ ենթարկվել է նշանավոր կամ աննշան փոփոխութեանց, որոնց գլխավոր պատճառը եղել է տոների կատարման ժամանակի անկանոն հաջորդութիւնը, որով եկեղեցական տոները ետ ու առաջ էին շարժվում: Տոնացույցի հրատարակութիւնը ունեւ նաև կրօնական-ազգային նպատակ: Դրանով պայքար էր տարվում Երևանում բույն դրած կաթոլիկութեան դեմ և մերժվում էր գործածութիւնը նրանց տոնացույցների, որտեղ ազավադվել էին մեր տոները: Տոնացույցի մեջ խիստ դատապարտվում է կաթոլիկ կղերը: Կաթոլիկները 1786-ի սեպտեմբերի 3-ին «իւղեքս»-ի (արգելքի) տակ են դնում Սիմեոնյան տոնացույցը Կոստանդնուպոլսում» («Էջմիածին» ամսագիր, էջմիածին, 1958, է համար, էջ 52):

Առաջին փուլում տպագրված հայկական օրացույցների տպաքանակի մասին քիչ բան գիտենք: Համենայն դեպս դրանցից յուրաքանչյուրի քանակը չէր անցնում 300-ից: Խոսքն այն մասին է, որ առաջին տպագիր հայկական օրացույցները մեծ տարածում չեն

ունեցել և չէին կարող կատարել օրացույցի այն դերը, ինչ կատարում են ժամանակակից օրացույցները:

Առաջին փուլում տպագրված բոլոր օրացույցները հայ մատենագիրները մտցնում են հայ հնատիպ գրքի ցուցակի մեջ, Դրանք իր ոք կարելի է համարել առաջին հայերեն տպագիր գրքերից, որոնք են և՛ իր ժամանակին, և՛ հետո դրանք հայի համար ավելի շուտ եղել են տպագիր, «սրբազան» դիրք, քան որպես օրացույց:

## ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ. 1801—1915

«Բարեշրջություն հայ օրացույցի» հոդվածում Թեոդիկը գրել է. «Շուրջ մեկ ու կես դար հառաջագուն, երբ օրացույցին տրվեցավ որոշ տարազ մը՝ տերունական տոներու և տոնախմբությանց դատավորումներով, նշանախեց մը իսկ փոխված շտեսանք ցարդ անոր մանրիկ էջերեն, ուր հանդիսավորապես բազմած կան հայուկան անժանոթ սուրբերու հոգնախոսուն երամներ՝ վարք սրբոցներե փունջ-փունջ քաղված: Հոն են դարձյալ նոսր արձանագրություններ դրացի ազգաց և հեթանոսաց տոներու, ժամերգության և փոխասացության դպրապետական հրահանգներ, օղի մտացածին գուշակություններ, ամեն ինչ որ իրար գալով պիտի կրնային հորինել լաբիրինթոս մը» («Ամենուն տարեցույցը», 1916—20, Կ. Պոլիս, էջ 285—286):

Իրոք, իր զարգացման երկրորդ փուլում հայկական տպագիր օրացույցը որոշ տարազ հագավ, բայց դեռ հեռու էր կատարյալ լինելուց: 1801—1915-ին ընթերցաստահ մտան 150 անունից ավելի հայկական տպագիր օրացույցներ, որոնք, սակայն, չէին բավարարում ընթերցողների պահանջները և հայ առաջադեմ թերթերը քննադատում էին օրացույցների հրատարակիչներին և նոր պահանջներ առաջադրում նրանց:

«Մշակ» թերթը հաճախ է անդրադարձել օրացույցային խնդրին. «Ծշմարիտ է, որ օրացույցները շատ տարածվելով ժողովրդի մեջ, կարող են կրթության զորեղ միջոց դառնալ» («Մշակ», Թիֆլիս, 1872, դեկտ. 20, № 50): «Ամենքին հայտնի է, որ մեր մեջ ոչ մի գիրք այնպես տարածված չէ, ինչպես օրացույցը» («Մշակ», Թիֆլիս, 1873, հունվ. 25, № 3): «Մինչև 1896 թ. Սիմֆերոպոլի հայ հասարակության և մեր պանդուխտ հայ եղբայրների մեջ, բացի տարվա օրացույցներից, ուրիշ ոչ մի հայերեն գիրք չէիք գտնի» («Մշակ», Թիֆլիս, 1899, մարտի 25, № 55): Ընդունելով

օրացույցի «կրթողական ուժը», «Մշակը» քննադատել է նրանց բովանդակությունը և ցույց տվել, որ դրանք մատչելի չեն ժողովրդական ղանգվածներին. «Զարմանալի է, որ այդքան օրացույցներ կազմողներից և ոչ մեկը հանձն չի առնում մի օրացույց կազմել աշխարհաբար լեզվով, և եկեղեցական սուրբերի ու երգերի վերաբերյալ մանրամասնությունների փոխարեն ավելի պիտանի և հետաքրքիր տեղեկություններ հաղորդել ամսաթվերի դիմացը» («Մշակ», Թիֆլիս, 1887, նոյեմբ. 12, № 128):

Իհարկե, չի կարելի ժխտել, թե 1801—1915-ի ժամանակահատվածում հայկական տպագիր օրացույցները փոփոխության չեն ենթարկվել ձևով ու բովանդակությամբ, բայց նրանց մեծ մասը պահել է մանվածապատության ու խորհրդավորության բողոք, ժողովրդական ղանգվածներին անհասկանալի շարադրանքի մոտեցում էին օրացույցի դասական ավանդույթները. Ահա դրանցից մի քանիսը. 1. Հայկական օրացույցները կիրառում էին Գրիգորյան տոմարը, նրան զուգահեռ՝ Բուն Հայկա թվականն ու Հայկա մեծ թվականը: Բայց ընթերցողների մեծ մասը ոչինչ չէր հասկանում այդ թվականներից: 2. Յոթնեռեակ, շաբաթվա յուրաքանչյուր օրը ցույց տալու համար օգտագործվում են հայկական այբուբենի առաջին յոթ գրերը՝ Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, սրանք կոչվում են յոթներեակ կամ շաբաթագիր, այսինքն՝ յոթնյակին օրերը ցույց տվող գրեր: 3. Իննևտասնյակ կամ Իննևտասնեռեակ: Բաբկեն Նայակոպուսը «Մեկնություն տոմարական բառերու» հղվածում գրում է. «Արևային և լուսնային տարիներն իրարու հետ համաձայնեցնելու պետքեն առաջ եկած է Իննևտասնեռեակ կոչված տոմարական շրջանը 19 տարիներու: Քրիստոսն 430 տարի առաջ, աթենացի Մեթոն անուն աստղաբաշխը դիտած է, որ Արեն ու Լուսինը 19 տարիներում շրջանի մը մեջ կուգային ու կու միանային մեկ կետի վրա: Ասիկա ապացույց հետևյալ կերպով. Արեն իր տարեկան շրջանը կրողորն 365 օրեն և 6 ժամեն. այս թիվը բազմապատկելով 19 տարիներու թվի հետ՝ ունեցավ 6939 օր և 18 ժամ: Իարձյալ Լուսինն իր ամսական շրջանը կրողորն 29 օրեն, 12 ժամեն 44 և 3 վայրկյանեն. այս թիվ ալ բազմապատկելով 235-ի հետ (235-ը գումարն է Լուսնի 19 տարիներու ընթացքին բոլորած շրջաններուն) ունեցավ 6939 օր, 16 ժամ, 31 և 45, որ գրեթե հավասար է 6939 օր և 18 ժամին, որով կապացուցվի, թե Արևու 19 տարիներու միջոցին Լուսինը գրեթե 235 անգամ շրջան կընե, շատ փոքրիկ տարբերությամբ մը, այսինքն 1,30 ժամ ավելի բան մը 19 տարիներու վերջը: Մեթոնի գտած այս շրջանն է, որ կոչվեցավ շրջան Իննևտասնեռեակաց կամ շրջան Լուսնի,

ինչպես նաև Ոսկեգիր, որով ամենացիք յուրաքանչյուր տարվան իննետասներեակը ոսկի գրով գրեցին և դրին հրապարակներովրա, որ ժողովուրդը գիտնա: Մեթոնի գրության մեջ ուրեմն Արև և Լուսին 19 տարիներու շրջանի մը մեջ, 19-րդ տարին, կուգան միեկուն կետին՝ նույն ամուսն, նույն օրվան և նույն ժամուսն, թեև ոչ բացառաձև ճշտությամբ» («Ամենուն տարեցույցը», 1929, Փարիզ, էջ 23): 4. Վերադիր, «Գիտենք, որ արևային տարին ունի 365 օր, / սկ լուսնային տարին՝ 354 օր. ըսել է Արևն ավելի ունի 11 օր, և այս թիվն է վերադիր ըսվածը, որ կբարդվի լուսնային տարվո օրերուն վրա՝ դանոնք հավասարեցնելու համար արևային տարվուն օրերուն» (նույն տեղը, էջ 23): 5. Տանուտե, աստղագետները աստղային դրության մեջ ենթադրած կամ երևակայած են 12 կենդանակերպեր (զոդիակոս), որք են՝ 1. Խոյ, 2. Յուլ, 3. Երկավոր, 4. Խեցգետին, 5. Առուծ, 6. Կույս, 7. Կշիռն, 8. Կարծ, 9. Աղեղնավոր, 10. Այծեղջուր, 11. Զրհոս, 12. Զուկն: Իբր թե ամեն մեկը տարվան մը տեղն է, կամ իշխանը, իբրև տանուտե, որ փոխաբերաբար կգործածվի: Ըստ հին հավատալիքի այս կենդանակերպերեն յուրաքանչյուրը կիշխե նաև մարդոց ծննդյան վրա, և զոր օրինակ երբ տարվուն տեղը կամ տանուտեը Առուծ ըլլա, ասոր իշխանության ներքո ծնվողն ալ թագավոր կըլլա: Այս սնահավատության դեմ մեր ոսկեգրիչ Եզնիկն իր «Եղծ աղանդոց» ծանոթ գրքին մեջ գրած է ուժգին հերքումներ» (նույն տեղը, էջ 23): 6. Գիր տարվո կամ Տարեգիր, հայկական աբուգենի տառերից յուրաքանչյուրը տարին մեկ անգամ օրացույցում նշանակվում է որպես տվյալ տարվա գիրը կամ տարեգիրը: Եկեղեցականները ղեկավարվում են այդ գրով և որոշում Զատիկի ժամանակը: Հակոբ Պարոնյանը իր «Սույլ» և «Սրկե երկե» մանրապատումներում օրացուցային «Գիր տարվուն» դարձնում է տարվա սոցիալական իրավիճակի չափանիշ: Ահավասիկ. «—1877-ի օրացույցները ելա՞ն մի:

— Կը կոխվին կոր:

— Այս տարվան Գիր Տարվոյնը ի՞նչ է արդյոք:

— Թ. Ղ. Թ. Ա. Դ. Բ. Ա. Մ. (Հակոբ Պարոնյան, Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 7, Երևան, 1969, էջ 194):

— Եղբայր, 1876 տարվուն օրացույցն ունի՞ս:

— Զէ, տակավին, ինչո՞ւ հարցուցիր:

— Բան մը պիտի հարցնեի:

— Հարցուր, կրնա ըլլալ, որ գիտնամ:

— Երեկ մեկու մը հետ վիճաբանության բռնվեցանք 1876-ի

Գիր Տարվոյնի վրա, անոր վրայոք պիտի հարցունեի, թե գիտես  
այս տարվան Գիր Տարվոյնը:

— Ան գիտեմ:

— Օրացույց չառի կըսես կոր նե:

— Ամեն բան օրացույցեն շտրվիր ա, մարդս քիչ մ'ալ, ինք-  
նիրմեն գիտնալու է. այս տարվա Գիր Տարվոյն է Զ.Ք.Ա.Վ.Ո.-  
Ր.Ու.Թ.Յ.Ու.Ն., Ս.Ն.Ա.Ն.Կ.Ու.Թ.Յ.Ու.Ն., Գ.Ի.Ն.Ու.Վ.Ու.Թ.Յ.Ու.Ն.  
(նույն տեղը, էջ 233):

Հայտնի է, որ նույն օրացույցը կարելի է գործածել 28 տարին  
մեկ (կրկնալուսնի շաբաթվա օրերը): Օրացույց հրատարակող-  
ները հաճախ օգտվել են այդ հանգամանքից, իսկ հաճախ էլ վա-  
ղահաս զուգահեռալուսնոյններից և վաճառել տարիներ առաջ լույս  
ընծայված օրացույցները: Ահա մի օրինակ. «Ներկա 1903 թ. օրա-  
ցույցը նույնն է, ինչ յոթ տարի սրանից առաջ՝ 1897 թ.: Օգտվելով  
այդ բարի զուգահեռալուսնոյնից, ուղարկում ենք զավառական մեր  
բաժանորդներին (բացի Թիֆլիս, Մոսկվա, Պետերբուրգ և արտա-  
սահման) 1897 թ. մեր ընծա տախտակ օրացույցը՝ Հարեմի աղջի-  
կը ոսկե շղթաներում, պարտավորեցնելով նրանց, որ միշտ աչքի  
առաջ ունենան Աղբյուր ամսագիրը և Տարագ շաբաթաթերթը ու  
յուրաքանչյուրը իր ուժերի չափ անկեղծորեն աշխատի Աղբյուր—  
Տարագը տարածել իր շրջանում» («Տարագ» շաբաթաթերթ, Թիֆ-  
լիս, 1903, № 6, փետրվարի 23, էջ 74):

Օրացույց հրատարակողները ամիսների և օրերի մասին գի-  
տական մեկնաբանություններին խառնել են սրամիտ մեկնաբա-  
նությունները կամ ինչպես Թեոդիկն է ասում «օրացույցային զար-  
մանալիքը».

1. Հոկտեմբեր ամիսը կակսի միշտ շաբաթվան այն  
միկնույն օրով, որով սկսած էր հունվար ամիսը:
2. Հուլիսը կակսի  
միշտ շաբաթվան այն միկնույն օրով, որով սկսած է ապրիլը:
3. Դեկտեմբերը կակսի միշտ շաբաթվան այն միկնույն օրով, որով  
սկսած էր սեպտեմբերը:
4. Փետրվարը, մարտն ու նոյեմբերը  
կակսին միշտ շաբաթվան միկնույն օրով:
5. 12 ամիսներն մա-  
յիսը, հունիսն ու օգոստոսն են միայն, որ կակսին տարբեր օրե-  
րով:
6. Տարին կվերջանա միշտ այն միկնույն օրով, որով սկսած  
էր:
7. Վերի օրենքներուն շին հպատակեր միայն ամիսները նա-  
հանջ տարիի մը:
8. Դար մը երբեք չի կրնա սկսիլ չորեքշաբթի,  
ուրբաթ կամ կիրակի օրով մը» («Ամենուն տարեցույցը», 1929,  
Փարիզ, էջ 9): Այդ «զարմանալիքներից շատերը ճանաչողական  
արժեք ունեն. «Բ գիրն ընեցող ամիսներուն ոտքդ ու մարմինդ  
տաք պահիր, չունեցողներուն, ուղածիդ պես վարվե» (նույն տեղը,  
էջ 9): «Ենեմք մարտ, տարվա 12 ամիսներեն 3-րդը եղող ու զար-

նանամուտին զուգահեռ պող մարտն այսպես կոչված է ժողովրդեն իր հարափոփոխ և անհանգիստ օգավիճակներուն պատճառով, օր մը անձրեւ, որ մը ձյուն, պահ մը արեւ, հանկարծ փշում ու փոթորիկ, կարծես արդարացնելու համար Հոռոմայեցվոց պատերազմի շարունակութեամբ՝ որմն ստացած է իր անունը: Պոլսահայը նախօրոք միտքը կպահէ այս ամսվան 31 օրերեն մին, որուն նպաստավոր կամ աննպաստ հանգամանքեն կդատեն իր բախտը, բաց կամ զոց: Դարձյալ ժողովրդայն լեզվի մեջ «մարտի օդ է» կնշանակեն փոփոխամիտ մարդ է» (նույն տեղը, էջ 67):

Տոմարական զանազան տեղեկութիւնների ու եկեղեցական տոների կողքին 19-րդ դարի սկզբներին օրացույցներում սկսեցին երևալ վիճակագրական տեղեկութիւններ, պատմա-բանասիրական հոգւածներ, գեղարվեստական գործեր: Կալկաթայում տպագրված 1816—1874-ի օրացույցներում տրվում էին այդ տարիների հնդկահայերի ծնունդները, ամուսնութիւնները, մահերը: Վենետիկի Միխիթարյանների օրացույցը բացվում էր բանաստեղծութեամբ (այդ սովորույթը պահպանվում է այժմ էլ): Պոլսում տպագրվող Գևորգ Մյուհենտիսյանի օրացույցում (1828—1842) առաջին անգամ էջեր դրվեցին նոթագրութեան համար: Իսկ Արամյանների տպագրած օրացույցներում երևացին այսպիսի խորագրեր: «Հայ նվիրապետութիւնը, կրօնական ու քաղաքական ժողովրդ անդամք», «Յուցակ դահակալութեան թագավորաց և իշխանաց», «Անվանի տիրող տանց և ժամանակագրութիւնը նոցա», «Թիվ բնակչաց երկրին», «Քաղաքական ժամանակագրութիւն» և այլն: Միաժամանակ այս օրացույցի մեջ տրվում էին Թուրքիայի դրամները, շափերը, կշիռները: Աղդ-ը (հայտարարութիւն իմաստով) առաջին անգամ կիրառվել է Արամյանների օրացույցում: 1870-ին Արամյան օրացույցը մտցրեց մի նորութիւն ևս՝ «Յանկ տոներ ի անուններու», «Հայերեն լրագիրներ», «Ծանուցումներ»:

19-րդ դարի վերջում և 20-րդ դարի առաջին քառորդում հայկական օրացույցներն ու տարեցույցները դարձան յուրատեսակ տեղեկատու-հիշատակարաններ, որոնք պարունակում էին հանրագիտական բազմաբնույթ հոգւածներ, պատմա-բանասիրական մեծ ու փոքր հետազոտութիւններ, վիճակագրական տեղեկանքներ, բոլոր ժանրերի գեղարվեստական գործեր, լրագրային նյութեր: Այդ հրատարակութիւններից շատերը ստանձնեցին հայ ժողովրդի, հայ մշակութի պատմութեան սկզբնաղբջուրների դեր:

Առաջին փուլում հայկական օրացույցները տպագրվում էին բացառապես հայերեն: Երկրորդ փուլում երևան եկան եկեղեցյան, եռալեզու, քառալեզու հայկական օրացույցներ: Հրատարա-

կողները հաշվի էին առնում ստեղծված քաղաքական պայմանները և գրաքննության «խուժեքից» անցնելու համար իրենց օրացույցների որոշ նյութեր տպագրում այն երկրի պաշտոնական լեզվով, որտեղ տպագրվում էր հայկական օրացույցը: Բացի այդ, օտար երկրներում ապրող շատ հայեր մոռացել էին մայրենին և հայկական օրացույցի օգնությամբ փորձում էին վերագտնել իրենց ազգային դիմագիծը: Օտար լեզվի կողքին նրանք ձգտում էին խմանալ, թե հայերեն ինչպես են կոչվում Նոր տարին, Զատիկը, ամիսը, օրը ևն: Համադրում էին հայերեն ու օտար գրերը, ջանում սովորել հայերեն:

Այդ նույն ժամանակամիջոցում Կ. Պոլսում սկսեցին տպագրվել հայատառ թուրքերենով օրացույցներ: Դա ամենևին էլ առանձին հրատարակիչների անձնական նախաձեռնության արդյունք չէր, այլ ուներ իր պատմական դրդապատճառները: Ա. 19-րդ դարում ազգային զարթոնք ապրող արևմտահայության մի մասը խոսում էր թուրքերեն: Թրքախոս հայերին հայախոս դարձնելու, նրանց մեջ հայկական ոգին արթնացնելու համար անհրաժեշտ էր թուրքերենով պատմել հարազատ ժողովրդի սրբությունների մասին: Ի դեպ, հայատառ թուրքերենով տպագրվող օրացույցները որոշ բառեր ու արտահայտություններ գրում էին բացառապես հայերեն: Բ. 19-րդ դարի վերջում Թուրքիայում նշաններ երևացին թուրքերի արաբատառ այբուբենը հայկական այբուբենով փոխարինելու համար: Դա կարող էր դրական դեր խաղալ հայ և թուրք ժողովուրդների բարեկամության գործում և ինչ-որ շափով կանխել շատ արհամարհանքներ:

1801—1915-ին շարունակվում էր 1757-ից վենետիկում տպագրվող Մխիթարյանների օրացույցը: Հայ օրացույցի պատմության մեջ հետաքրքրական երևույթ է 1841-ից առ այսօր վիեննայում լույս տեսնող օրացույցը (տոնացույցը), որ երկրորդ հայ երկարակյաց տպագիր օրացույցն է:

1834-ին, ամիսը, մեծահարուստ Հարություն Պեզճյանի (1771—1834) դրամական միջոցներով Կ. Պոլսում հիմնադրվեց Սուրբ փրկչի ազգային հիվանդանոցը, որը գործում է առ այսօր: Փրկիչ բառը հայերենում ունի նաև գծանոց իմաստը: Այս հիվանդանոցը Փրկչի կամ Փրկչյան է կոչվում այն պատճառով, որովհետև ունի հոգեբուժական բաժին: Այս հաստատությունը պոլսահայ կյանքում միայն հիվանդանոցի դեր չի կատարել: Այն եղել է հայ մշակույթի յուրովի կենտրոն, որը տպագրել ու տպագրում է բազմաթիվ գրքեր, պարբերականներ, օրացույցներ: 1860-ից հիվանդանոցը հրատարակում է համառոտ (պարզ) օրացույց, որը

երրորդ հայ երկարակյաց տպագիր օրացույցն է և որի հրատա-  
 րակումը առ այսօր ոչ մի տարի չի ընդհանաւել։ Պոլսում օրացույց-  
 ցի հրատարակութեան մենաշնորհը պատկանում էր պատրիար-  
 քարանին։ Այդ արտոնութիւնը 1865-ին պատրիարքարանը տվեց  
 հասագլուղի քահանա Երեմիային, պայմանով, որ նա «տարեկան  
 80000 դրուշ վճարե կեդր. Սնդուկին ի նպաստ այդի երիցուհայցի  
 Տ. Երեմիա չհարգեց այդ պայմանը և 15 տարի շահագործեց իր  
 մենաշնորհը։ Սույն քահանային այս շահագործումը կընդվզեցնե-  
 մյուս օրացուցագիրները ու վարչական շրջանակներու մեջ զանգա-  
 տեցան։ Տ. Խորեն արքեպ. Նարայեյ հարցում կուղղե Ազգային ժողո-  
 վին մեջ, որո հետեանքով վարչութիւնը այս խնդրով կզբաղի ու  
 1879-ի օգոստոսին հտ կառնե այդ արտոնութիւնը տ. Երեմիա-  
 յին» (Հակոբ Վարժապետյան, «Հիշատակարան Հայրաւորմյա հո-  
 բելյանի հասագլուղի Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ, 1831—1931»,  
 Կ. Պոլիս, 1931, էջ 41—42)։ Այդ նույն թվականից էլ պատրիար-  
 քարանը օրացույց հրատարակելու մենաշնորհը տվեց Սուրբ  
 փրկչյան ազգային հիվանդանոցին։ Բայց մինչ այդ Պոլսում և  
 Երուսաղեմում Երեմիա քահանայի շուրջը բուռն վեճեր են տեղի  
 ունեցել, որով Երեմիան դարձել է հայ տպագիր օրացույցի պատ-  
 մութեան վիպական կերպար։ Նա եղել է հմուտ տոմարագետ և իր  
 ձեռքն է վերցրել Պոլսում և Երուսաղեմում տպագրվող բոլոր օրա-  
 ցույցների մենաշնորհը։ 1869 թվականին «Սինոն» ամսագիրը  
 տպագրում է «Օրացուցական խնդիր» ընդարձակ հոդվածը։ Հոդ-  
 վածից երևում է, որ հասագլուղի քահանա Երեմիան 1865-ից Երու-  
 սաղեմի ս. աթոռի հետ պայմանագիր է կապել ս. աթոռում  
 տպագրվող հայերեն օրացույցների տոմարական բաժինը կազմե-  
 լու համար։ Ըստ երևութիւն, Երեմիան խիստ դաժան պայմաններ  
 է դրել, որի պատճառով Երուսաղեմի ս. աթոռը կանգնել է դժվա-  
 րութիւնների առջև։ Ամսագիրը գրում է. «Տեր Երեմիայի պայմա-  
 նագրեն կերեկի, որ հինգ հազար դրուշի սակարկութեամբ խոս-  
 տացած է օրացուցական ուսումն ուսուցանել մահտեսի պ. Հարու-  
 թիւն Զինճիբճյանին, որպեսզի այս եղանակով ս. աթոռս ևս կա-  
 րողանա օրացույց տպագրել։ Գոհունակութեան նամակն կերեկի,  
 որ սրբազան պատրիարքը ցուցած է յուր մարդասիրութիւնը տե-  
 ր Երեմիա քահանային, որը պարտավորված է եղեր աննախանձա-  
 րար ուսուցանել հիշյալ գիտութիւնն և նվիրել միաբանութեանս  
 աստղաբաշխական հաշիւները ի նշան երախտագիտութեան։ Իսկ  
 դատախազութեան թղթն կերեկի, որ ծերունի հայր տե-  
 ր Երեմիան կփափագի դատ բանալ սրբազան պատրիարքի հետ և փաստաբան  
 մը կպահանջե աթոռոս կողմն։ Թե որքան երեւակայական է տե-



Երևմտյան դատը և իրավունքը այս յուր գրությանց հակասութենն հայտնի է: Բայց զարձալ մի քանի խոսքով պատասխանել ավելորդ չենք համարիլ: Տեր Երեմիան դատ բանալու իրավունք չունի, որովհետև սակարկյալ գումարեն ավելի գումար ստացած է սուրբ աթոռես, այն է հինգ հազար ղուրուշ ինքն և հազար ղուրուշ յուր որդին: Հնդկաստանի մեջ սուրբ աթոռես կտակներեն: Տեր Երեմիա դատ բանալու իրավունք չունի, որովհետև յուր խոստացած ուսումն լիովին ուսուցած չէ: Տեր Երեմիան դատ վարելու իրավունք չունի վերջապես, որովհետև մեր անցած տարվան օրացույցի կազմութիւնն աթոռես միաբան արժանապատիվ Մկրտիչ վարդապետի քրտնաջանաց աշխատանաց արդյունքն է, ուրիշ աղբյուրներն քաղված, քան թե ծերունադարդ հոր ավանդած թերակատար հաշիվներեն: Մենք տեր Երեմիայի դատախազության մեջ ուրիշ իրավունք չենք տեսներ, բայց միայն մենավաճառության տենչ, վասնզի տեր հայրը կզանգատի, որ անցած տարի աթոռոյս օրացույցը յուր օրացույցեն առաջ տպագրված և ի վաճառս հանված է, վասնզի կխնդրեն, որ այս տարի Երուսաղեմը օրացույց չհրատարակեն» («Սիոն», Երուսաղեմ, 1869, № 2, էջ 30—31):

1873-ին «Սիոն»-ը նորից է անդրադառնում Երուսաղեմի ս. աթոռի և Երեմիա քահանայի վեճին: Ամսագիրը նշում է, որ տեր Երեմիան պետք է տոմարագիտութիւն սովորեցներ Հարութիւն Զինճիրճյանին, սակայն վերջինիս նա պարզապես խաբել է, հայտնելով, թե արդեն ամեն ինչ սովորեցրել է: Զինճիրճյանը երբ վերադարձավ աթոռ, զգաց, որ ոչինչ չգիտէ և ճարահատյալ ասաց «տետրակս ալեցեղավ», այսինքն Երեմիայից սովորած գիտելիքների գրառումների տետրը իբր այրվեցավ (տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, 1873, № 4, էջ 83—88): «Տպարան առաքելական աթոռոյն սրբոց Հակոբյանց Երուսաղեմի (հարյուրամյա հոբելյանի առթիւ, 1833—1933)» հոգւածում «Սիոն»-ը գրում է. «Ճնասպառն Ս. Ստեփանոս եկեղեցու տեր Երեմիա քահանան, որ իբրև քաջ տոմարադետ օրացույց կազմելու մենաշնորհ ուներ, 1866-ին իր ուսումը կավանդե Երուսաղեմի միաբանության, ու կհավանի որ ս. աթոռոյս տպարանն ալ օրացույց հրատարակեն ու վաճառեն Պոլսո մեջ, պայմանով որ տոմարական ուսման հետևող հոգևորականները հիշեն միշտ իր անունը իրենց սուրբ պատարագներումն մեջ ու միաբանութենեն դուրս ուրիշներուն շարվեցնեն այդ ուսումը: Այսպես 1867 տարվո օրացույցը առաջին անգամ լոյս կընծայվի Երուսաղեմի տպարանն: Այդ տարիին մինչև առաջիկա 1934 թվականը՝ 68 տարվան մեջ տպված է 57 օրացույց, տասնմեկ տարվան ընդհատումով (այդ ընդհատումները եղած են 1896 և

1916—1925 տարիներով, 1925-ի օրացույցը տպել տրված է Կահիրե՝ Երուսաղեմի եկեղեցիներուն համար)։ Օրացույցները շատ անգամ ունեցած են գրացուցակներ, վիճակագրական տեղեկություններ և կրոնական հոդվածներ ու մանր ուսումնասիրություններ պարունակող հավելվածներ («Սիրոն», Երուսաղեմ, 1933, № 11, էջ 352)։ Երեմիան, սակայն, անհանգիստ անձնավորություն էր։ Նա չէր հանդուրժում մրցակցությունը։ 1871—73-ին Երեմիան լույս է ընծայում իր նշանավոր «Սխալացույց»-ները, որոնց մեջ ուղղում է Երուսաղեմի, Մյուհենտիսյանի, Տերոյենցի, Արամյանի և Ռ. Քյուրքճյանի 1871, 1872 և 1873 թվականներին լույս տեսած օրացույցների սխալները։

Տպագիր օրացույցի համաշխարհային պատմության մեջ Երեմիա քահանայի այդ «Սխալացույց»-ները աննախագեղ երևույթ էին։

Երեմիան, սակայն, օրացույցների հրատարակման մենաշնորհը իր ձեռքում պահել չէր կարող։ Շուտով նրա «Սխալացույց»-ների դեմ դուրս եկավ հմուտ տոմարագետ Մարուգե Հովսեփյանը։ Վերջինս 1873-ին լույս ընծայեց «Ուղղացույց Սխալացույցի»-ն, որի մեջ գրում է. «1873 տարվան նոր Սխալացույց մ'ալ տեսանք, յորինեալ Երեմիա քահանայ խասգլուղի։ Յիշյալ քահանայի անցյալ տարվան մեկ երկու շնչին և անտեղի դրպարտություններով լի Սխալացույցին ինչ աստիճան էրդ ունենալը ընթերցողաց դատմանը հանձնած էինք։ Ուստի ներկա 1873 տարվոյն համար յորինած Սխալացույցին մեջ ալ շարականներե ի զատ (ըստ տեր Երեմիայի դատման) ուրիշ սխալներ չտեսնվիր...» Այնուհետև Հովսեփյանը ավելացնում է «Տեր հայրը երեք տարի է, որ Սխալացույց կհանե և անանկ հավատացնել կուզի, որ ըրածը ազգային մեծ ծառայություն մըն է»։ Հավանաբար օրացուցային մրցապայքարում Երեմիայի դիրքերի թուլացումն է նկատի ունեցել Հակոբ Պարոնյանը, որը 1877-ին իր մանրապատումներից մեկում գրել է. «Մեյ մ'ալ, ասկից վերջը լուսինը օրացույց կարդալով, վիշապներեն բռնվելիք օրը առաջուց կիմանա, կզգուշանա և յաշտափ վառողի սպառման պատճառ չըլլար։ Սակայն կխրատենք զինքը, որ տեր Երեմյա հոր օրացույցին շնայի, որովհետև անոր ժամացույցը քիչ մը առաջ կքալի կոր աս տարի» (Հակոբ Պարոնյան, Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 4, Երեվան, 1965, էջ 184)։

Իր մանրապատումների մեջ Հ. Պարոնյանը հաճախ է անդրադարձել տեր Երեմիային, տարբեր դիրքերից գնահատել նրա դերը. «—Ստեփան էֆենդի Փափազյանը ազգասեր՝ է։

— էջմիածին տսված օրացույցը բեր, մեջը նայինք, ազգասեր է նե՝ հարկավ մեջը գրված է:

— Ի՞նչ կըսես, օրացույցի մեջ անանկ բան կգրվի՞:

— Գրես նե չգրվի՞ր: Մինչև հիմա մեկու մը ազգասեր ըլլալը անոր գործերեն կհասկացվեր, ասկից փերջը օրացույցեն պիտի հասկացվի:

— Ատ ինչ ըսել է:

— Ահա՛վասիկ էջմիածնա օրացույցին գրածը. հինգերորդ տարեդարձ օծման վեհափառ Դեորգ ազգասեր կարողիկոսին: Ո՛ւր ես, տեր Երեմիա, ո՛ւր է Սխալացույցդ» (Հակոբ Պարոնյան, Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 7, Երևան, 1969, էջ 102):

«— Այսօր ամսուն քանիսն է:

— Չեմ կըրնար ըսել:

— Ինչո՞ւ:

— Տեր Երեմիան իմանալու ըլլա՛ նե՝ դատ կբանա ինձի դեմ:

— Ինչո՞ւ:

— Օրացույց հրատարակելու արտոնություն չունի՞ մի տա» (նուն տեղը, էջ 194):

19-րդ դարում, տեր Երեմիայից հետո, հայկական տպագիր օրացույցի պատմության մեջ մեծ առաջընթաց էին նահապետ Ռուսինյանի օրացույցները: Բանաստեղծ-բանասերը փորձեց շարժել կղերական ճահիճը և նոր ձև ու բովանդակություն տալ օրացույցին: Սակայն դա արտաբուստ էր միայն նմանվում օրացույցային սլոյքաբի: Իրականում Ռուսինյանը առաջ էր քաշում ազգային առաջադիմության շատ հարցեր: 1855-ին Կ. Պոլսում լույս տեսավ նրա «Տարեցույց»-ը, որը մեծ աղմուկ հանեց: Պատրիարքարանը հեղինակին մեղադրեց հերետիկոսության մեջ և արգելեց «Տարեցույց»-ի վաճառքն ու գործածությունը: Այս տարեցույցի մեջ Ռուսինյանը ամիսների օտար անունները տալիս է հայերեն թարգմանությամբ. միամիս, երկամիս, եռամիս, քառամիս, հինգամիս, վեցամիս, յոթամիս, ութամիս, ինամիս, տասամիս, տասնեկամիս, տասներկուամիս: «Բացի այս անունները Ռուսինյան բանաստեղծական անուններ ալ կորոշե ամիսներուն համար, համաձայն տարվա շորս եղանակներուն: Այս ամսանուններն ալ դարձյալ ֆրանսիական հասարակապետության 1773 նոյեմբերի 24-ին ընդունած տարեցույցին բառերն են, Ֆապուր տ, էլլանթին ֆրանսիացի բանաստեղծեն (1752—1794) հնարված, զորս Ռուսինյան հացուցած է իր ուսանողական տարիներուն. Բուսին՝ բուլսի ամիս,

Սաղկին՝ ծաղկի ամիս, Մարգին՝ մարգի ամիս, Հնձար՝ հնձի ամիս, Տոթար՝ տոթի ամիս, Պտղար՝ պտղի ամիս, Կթոն՝ կթոց ամիս, Թափոն՝ թառամելու ամիս, Միգոն՝ մեզի ամիս, Ձյուներ՝ ձյունի ամիս, Սառներ՝ սառի ամիս, Մրրկեր՝ մրրկի ամիս» («Հանդես ամսօրյա», Վիեննա, 1902)։ Ռուսիսյանի հորինած, ավելի շուտ՝ ֆրանսերենից թարգմանած այս ամսանունները կիրառություն չգտան, ընայած դրանք, նորից տպվեցին նրա 1871—1872-ի «Բնական տարեցույց»-ների մեջ։ Հակոբ Պարոնյանը իր «Ազգային ջոջեր»-ի մեջ զավեշտով է արտահայտվել Ռուսիսյանի հնարովի ամսանունների մասին։ Ռուսիսյանի հնարած ամսանուններով ապրիլը համընկնում է Սաղկինին, Երգիծաբանը գրում է. «Տոթթոր նահապետ Ռուսիսյան ծնավ ի Կեսարիա 1819-ին, ապրիլի 1-ին և ծաղկինի 5-ին»։ Խոսելով Ռուսիսյանի հրատարակությունների մասին Պարոնյանը շարունակում է՝ «Երկու տարի վերջ 1855-ին Ռուսիսյանը աստղաբաշխության հտեհ ըլլալով, Տարեցույց մը հրատարակեց, որուն մեջ որչափ բառ, այնչափ ալ ուղղախոսություն կար։ Այս տարեցույցին մեջ ամիսներն ալ Մարգին, Բուսին, Կթոն, Միգոն, Տիտոն անուններով նորեն մկրտված էին։ Ռուսիսյան՝ տարեցույց մ'ալ 1871-ին հրատարակեց, սակայն ասիկա Բնական տարեցույց էր, առաջինի պես արվեստական չէր։ Այս տարեցույցի մեջ ուրիշ խել մը փոփոխություններն զատ Բուսինը Ձարթինի և Պտղարն ալ Մրգարի փոխված էին բարեբախտաբար։

Այս տարեցույցներուն մեջ սխալներ կային, բայց տեղ Երեմիա հայրը անոնց սխալացույցը չհանեց, ոչ ալ անոնց հրատարակության դեմ բողոքեց, և շիտակը ըսելու համար այս տարեցույցները այնչափ նմանը չի տեսնված ընդունելություն գտան, որ հեղինակը՝ քաջալերված երգում ըրավ այլևս օրացույց չի հրատարակել» (Հակոբ Պարոնյան, Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 2, Երևան, 1964, էջ 274)։

Երեմիա քահանայից և Նահապետ Ռուսիսյանից հետո հայկական օրացույցի հրատարակության բնագավառում երրորդ և ամենախոշոր դեմքը Թեոդիկն է։ Նրա «Ամենուն տարեցույց»-ները (1907—1929) իրենց համապարփակ, հանրագիտական բնույթով փայլուն էջ գրեցին հայ տպագիր խոսքի պատմության մեջ։

Թեոդիկը ոչ միայն «բարձրացրեց» հայկական օրացույցի հեղինակությունը, այլև իր հրատարակությանը տվեց այնպիսի ձև ու բովանդակություն, որ նրա տարեցույցները դարձան հայկական մշակութային կյանքի անփոխարինելի հիշատակարան-հանրագիտարաններ։ Դրանց մեջ կան հայերենի, հայ մատենագիտության,

երաժշտության, թատրոնի, գրականության, պատմության վերաբերյալ վավերագրական արժեք ունեցող բազմաթիվ հոդվածներ ու փաստաթղթեր:

Մինչև «Ամենուն տարեցույց»-ների հրապարակ զալը արդեն տպագրվում էին հանրագիտական բնույթի մի քանի օրացույցներ: Դրանցից է Կ. Պոլսում լույս տեսնող «Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի»-ն: Հետևյալ բովանդակությունն ունի 1901-ի օրացույցը: Տպագրված է 1901 թվականի օրացույցը ըստ ամիսների, ապա սրբերի տոնակատարություններն ու օրերը: Այնուհետև «Եկեղեցական, դպրոցական, բարեգործական, գրական, գիտական և արվեստագիտական թվականներ» խորագրով օրացույցը տպագրել է տարվա բոլոր ամիսներին վերաբերող մի տեղեկատու: Ներկայացնենք հունվար և դեկտեմբեր ամիսների բաժինը:

«Հունվար 1.—1839. Իզմիրի մեջ կակսի հրատարակվիլ Շտեմարան հանդեսը: Դադրած է 1854-ին:—1851. Կ. Պոլսո առաջին հայ հանդեսը, Բանասեր, կը սկսի հրատարակվիլ Յովհաննես Հիսարյանի ձեռքով: Դադրած է 1852-ին:—1857. Տերոյենց կը սկսի հրատարակել Երևակ հանդեսը Կ. Պոլսո մեջ: Դադրած է 1866-ին:—1858. Ստեփաննոս Նազարյանց կը սկսի հրատարակել Հյուսիսափայլ հանդեսը՝ Մոսկվայի մեջ: Դադրած է 1864-ին: 1860. Մարկոս Աղաբեկյան կը սկսի Կոունկ հանդեսը հրատարակել Թիֆլիսի մեջ: Դադրած է 1863-ին վերջը:—1866. Սիոն ամսագիրը կը սկսի հրատարակվիլ Երուսաղեմի միաբանության ձեռքով: Դադրած է 1878-ին:—1871. Արևելյան մամուլ հանդեսը կը կակի հրատարակվիլ Իզմիրի մեջ:—1883. Երկրագունդ նորեն կ'հրատարակվի իբր ամսօրյա հանդես գրասեր խմամբի մը կողմէն, տնօրենությամբ Հակոբ Պարոնյանի, որուն հաջորդած է իբր տնօրեն-խմբագրապետ Եղիա Տեմիրճիպաշյան 1884-ին: Դադրած է 1888-ին վերջը:—1883. Եղիա Տեմիրճիպաշյան կը սկսի հրատարակել Գրական և իմաստասիրական հանդեսը, ամբողջապես իր խմբագրությամբ: Դադրած է 1888-ին:

Հունվար 2.—1777. Երևանցի Սիմեոն կաթողիկոս կը հրամայե գործադրության դնել իր պատրաստած Նոր Տոնացույցը:—1863. Ստեփան Փափազյան կը սկսի հրատարակել Կ. Պոլսո մեջ ժամանակ հանդեսը: Դադրած է 1869-ին:—1868. Մահ Արիստակես Ալթուն Տյուրիի, նախկին պաշտոնատար Եգիպտոսի, լեզվագետ, խմբագիր Եգիպտոսի պաշտոնաթերթին, հետո Պոլսո մեջ Գերագույն ժողովի և Պատրիարքարանի ուրիշ ժողովներու գործուն անդամ: Մնած է 1804 մարտ 18-ին:—1884. Արևելք օրաթեր-

թը կը սկսի հրատարակվիլ Կ. Պոլսո մեջ:— 1899. Նուպար փաշա կմեռնի Փարիզի մեջ: Մնած է 1825-ին:

Հունվար 3.— 1834. Ետի Գուլեի Ազգ. հիվանդանոցի հիմնադիր Յարություն ամիրա Պեղճյան կը մեռնի Կ. Պոլսո մեջ և կթաղվի Գում Գաբուի Մայր եկեղեցին: Մնած էր 1771 ապրիլ 10-ին:— 1855. Ավետաբեր կը սկսի հրատարակվիլ Կ. Պոլսո մեջ:— 1870. Շահնազարյան վարժարանի աշակերտները խառնակութի մեջ կըսկըսին հրատարակիլ Երկրագունդ հանդեսը: Դադրած է 1871-ին:

Հունվար 7.— 1824. Վիեննայի Մխիթարյանց արդի արքահայր հ. Արսեն արքեպիսկոպոս Այտընյան, մատենագիր, հմուտ հայկաբան և բանասեր, կը ծնի Կ. Պոլսո մեջ:

Հունվար 8.— 1863. Թունիկ Պեհասյան, կը սկսի հրատարակվիլ Կ. Պոլսո մեջ, խմբագրությամբ Գրիգոր Ելաթճյանի, յետո Գրիգորիս արքեպիսկոպոս Ալեաթճյան: Դադրած է 1866-ին:

Հունվար 9.— 1858. Մահ Մանուել բժիշկ Շաշիյանի, որ 1775 ղեկտ. 26-ին ծնած և ԺԹ դարուն սկիզբները Բատուալի բժշկական համալսարանին վկայված է: Նախապատճառ եղած է 1836-ին Բանկալթիի Ս. Հակոբյան Անկեղանոցին հիմնարկության:

Հունվարի 12.— 1846. Ռուսահայոց երկրորդ լրագիրը, Կովկաս, ակսավ հրատարակվիլ Թիֆլիսի մեջ, զորաբար խմբագրված Հակոբ վարժապետ Կարինյանցե և Պ. Միքայելի: Դադրած է 1848-ին:

Հունվար 13.— 1832. Կ Պոլսո առաջին հայ թերթը՝ Լրո գիր Մեծի Տերության Օսմանյան (Թաղվիմը Վաղայի) կը սկսի հրատարակվիլ: Դադրած է 1833-ին:— 1888. Գրիգոր Մարկոսյան, 1852-ին հրատարակվող Նոյան աղավնի հանդեսին խմբագիրն էրեն, և 1860-ի առաջին Քա. ժողովին ատենապետ, լեզվագետ և ուսումնական, կվախճանի Կ. Պոլսո մեջ:— 1893. Մահ Սարգիս Կյուլպենկյանի, որ իր եղբոր՝ Սերովբե Կյուլպենկյանի հետ սատարած է Ազգ. հիվանդանոցի վերաշինության, և հիմնած Զոմախլըի եկեղեցին, ինչպես նաև Կեսարիո Թալաս դյուղի աղջկանց վարժարանը՝ որուն ծախքերը կը հոգան իրենց զավակները: Մնած էր 1836 հունվարի 28-ին:

Հունվար 14.— 1897. Մահ Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ բանասեր հ. Ղեռնդ Վ. Հովնանյանի. իր ամենեն կարևոր երկը եղած է ուսումնասիրություն մը «Նախնեաց ուսմորեն»-ի վրա: Մնած էր Կ. Պոլիս 1817 հոկտեմբերի 28-ին:

Հունվար 17.— 1824. Մահ Ազոնց Գյուլբեր արքեպիսկոպոսի, մատենագիր, արքահայր Վենետիկի Մխիթարյանց: Մնած էր 1740 նոյեմբեր 20-ին:— 1869. Կ. Պոլսո պատրիարք Թաթևաբյան Պո-

ղոս արքեպիսկոպոսի հրաժարականը կընդունվի և Ադրիանուպոլսո առաջնորդ Արիստակես արքեպիսկոպոս Կ. Պոլսո պատրիարքական տեղապահ կկարգվի:

Հունվար 20.—1838. Մահ տ. Անտոն Նուրիճան արքեպիսկոպոսի, որ 1830-են ի վեր կը վարեր Հոռմեական Հայոց նախագահի պաշտոնը:

Հունվար 21.—1872. Պետրոս Դուրյան, բանաստեղծ ու թատերագիր, կը մեռնի 21 տարեկան և կը թաղվի Սկյուտար: Ծնած էր 1851 մայիս 20-ին:

Հունվար 22.—1885. Ծերենցի աղջիկը, տիկին Թագուհի Մելիք-Ազարյանց (օրիորդ Մենիկ), նորահաս գրագիտուհի, կը վախճանի 25 տարեկան:

Հունվար 24.—1826. Մահ Յովակիմ Հազարյանցի, որ իր եղբոր՝ Յովհաննես Հազարյանցի կտակը գործադրելով կառուցած է Մոսկվայի Հազարյան ճամբարանը 1815-ին: Ծնած նոր Զուղա, 1843 սեպտ. 5-ին:

Հունվար 25.—1855. Կ. Պոլսո պատրիարքարանը պաշտոնական հայտարարությամբ կարգիլն Ռուսիայանի Ուղղախոսության և Տարեցույցին ազգային վարժարաններու մեջ գործածությունը, դատապարտելով անոնց նորելուկ ոճը և պատվիրելով հայ գրողներուն՝ աշխարհաբարը մոռեցնել «նախնյաց բուն լեզվին».—1885. էրզրումի նախկին առաջնորդ տ. Յարություն արքեպիսկոպոս Վեհապետյան (հիմա պատրիարք Երուսաղեմի) Կ. Պոլսո պատրիարք կընտրվի:

Հունվար 28.—1837. Կ. Պոլսո հասքոյ գյուղին եկեղեցվոյն մեջ կը մկրտվի Պողոս Վարժապետյան, որ հետո եղավ Ներսես պատրիարք Կ. Պոլսո:

Հունվարի 31.—1856. Միսաք ամիրա Միսաքյան, նեղանավոր, որ միջոց մը մյուսեմբելի եղած է Ազգ. հիվանդանոցի և ազդեցիկ դեր ունեցած է Պատրիարքարանի գործերուն մեջ, կ'մեռնի և կը թաղվի Պոյաճը գյուղի իր կառուցած եկեղեցվոյն շքափակին մեջ: Ծնած էր 1790-ին:

Դեկտեմբեր 3.—1883. Համբարձում Իփեքճյան, ուսասհայ ուսուցիչ, որ ունի մանկավարժական գրվածքներ, կը վախճանի Կ. Պոլսո մեջ, 45 տարեկան:—1889. Տոբթ. Վիլեն Օրմանյան, եղբայր Կ. Պոլսո պատրիարք Օրմանյան սրբազանի, հմուտ և խղճամիտ բժշկապետ Ազգ. հիվանդանոցին, որուն բժշկական ճյուղը բարեկարգած էր, կը վախճանի 45 տարեկան:—1894. Տոբթ. Տիգրան փաշա Փեշտիմալճյան, հմուտ բժիշկ, որ թողած է բժշկական գրվածքներ, կ'մեռնի 57 տարեկան:

Դեկտեմբեր 4.—1870. Թեոդոսիո Խալիպյան վարժարանը կը փակվի:—1892. Յրանսացի հայագետ Գ. Շրումբֆ կը վախճանի (ն. տ. 16 դեկտ.): Մնած էր 1844 հունվար 25-ին: Գրած է պատմությունը այն ուսումնասիրությունաց, որոնք եղած են Արևմուտքի մեջ հայ լեզվի և մատենագրության վրա:

Դեկտեմբեր 5.—1826. Հմուտ հայագետ Շահան Զրպետ, Ներսես Աշտարակեցիի հրավերով, Փարիզին Թիֆլիս կերթա իբր ուսուցիչ Ներսիսյան վարժարանին:

Դեկտեմբեր 6.—1882. Մահ Գեորգ Դ. Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսին՝ էջմիածնա մեջ:

Դեկտեմբեր 7.—1885. Ամենապատիվ տ. Յարություն արքեպիսկոպոս Վհապետյան, պատրիարք Կ. Պոլսո, Երեստղեմի պատրիարք կընտրվի, երկու տիտղոսները շմիացնելու պայմանով:—1888. Տիգրան Մանավյան, հայ ուսուցիչ և գրող, կը վախճանի Կ. Պոլսո մեջ 47 տարեկան:—1898. Յարություն Թյուլյան (Մյուսիվ Պասկալ), ծանոթ քանակագետ և բազմարդյուն ուսուցիչ, կը վախճանի Կ. Պոլսո մեջ: Մնած էր 1832 ապրիլի 22-ին:

Դեկտեմբեր 9.—1838. Հանդիսավոր բացում Սկյուտարի ճեմարանի, որ հիմնված է նախաձեռնությամբ Կարապետ Պալյան և Սերվերյան Հովհաննես ճարտարապետ ամիրաներուն:—1871. Խաչատուր Լազարյանց, Ռոսսիո պետական խորհրդական բարեգործ հայազգին, որ մեծ զումարներ նվիրած է իր հոր և հորեղբոր հիմնած Լազարյան ճեմարանին, կը վախճանի Պետերբուրգի մեջ: Մնած էր 1789 հունիս 1-ին:—1881. Մահ Ֆրանսացի հայագետ էտուառ Տյուլօդիեի (ն. տ. 21 դեկտ.): Հայերենի ուսուցիչ էր Փարիզի Արևելյան կենդանի լեզուներու վարժարանին մեջ: Հրատարակած է կարևոր ուսումնասիրություններ հայ գրականության և հնախոսության վրա: Մնած էր 1807-ին:

Դեկտեմբեր 10.—1860. Պետրոս Խորասանճյան, որ քաջալերող եղած է հայ լրագրության, պատրիարքարանի ժողովներու անդամ և հմուտ տաճկագետ, կվախճանի 51 տարեկան:

Դեկտեմբեր 11.—1798. Շահան Զրպետ հայ լեզվի դասախոսության կը սկսի Փարիզի Արևելյան լեզուներու վարժարանին մեջ:—1830. Փիրղալեմյան Ղևոնդ վարդապետ, բանասեր, կը ծնի Վանա մեջ:

Դեկտեմբեր 12.—1841. Պաշտոնապես կը հաստատվի 27 էսնաֆներու ժողովը, որ կոչված էր վարել պատրիարքարանի գործերը:—1866. Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ հ. Արսեն վ. Բագրատունի, նշանավոր հայկաբան, բանաստեղծ, տաղաչափ, լեզվագետ և մատենագիր, կը վախճանի:



Դեկտեմբեր 13.—1876. Մատթեոս Այվատյան, խմբագիր, կը վախճանի Կ. Պոլսո մեջ և կը թաղվի Ղալաթիո եկեղեցվոյն շրջափակին մեջ:—1890. Մահ ռուսահայ պրոֆեսոր Մկրտիչ էմինի, պատմագետ, բանասեր: Ունի կարևոր երկասիրություններ հայերէն և ռուսերէն: Մնած էր 1815 նոյեմբեր 25-ին Նոր Զուղայի մէջ:

Դեկտեմբեր 14.—1876. Մահ Աբեր արքեպիսկոպոս Մխիթարյանի, որ ունի կրօնական երկասիրություններ:

Դեկտեմբեր 15.—1815. Աղբիւնուպոլսեցի Պողոս պատրիարքը կը հաջորդէ Աբրահամ պատրիարքին:

Դեկտեմբեր 17.—1876. Աբրահամ Սաքայան, նշանավոր նկարիչ, կը վախճանի Սկյուտար, ուր թաղված է:

Դեկտեմբեր 18.—1879. Մահ արևելագետ Մորթմանի:

Դեկտեմբեր 19.—1772. Յակոբ Շահան Զրպետ, ուսուցիչ և բանասեր, կը ծնի Ուրֆայի մեջ:—1878. Մանուկ աղա Մնակյան, որ հայ վարժարանի մը հիմնարկութեան համար կարևոր գումար մը կտակած է, կը վախճանի և կը թաղվի Սամաթիո ս. Գեորգ եկեղեցին, որուն շինութեան համար ալ 500 ոսկի կտակած էր:

Դեկտեմբեր 20.—1858. Ստեփան Ռական կսկսի Փարիզի մեջ հրատարակել Արեւմուտք հանդես (ն. տ. 1 հունվար 1859), որ վերջնապէս դադրած է 1865-ին:—1886. Վիեննայի Մխիթարյան միաբանութիւնը կը սկսի հրատարակել Հանդես Ամսօրյա պարբերականը (ն. տ. 1 հունվար 1887):—1891. Հ. Սերովբե վ. Տերվիշյան, Վիեննայի Մխիթարյան, հմուտ բանասեր և լեզվաբան, կը մեռնի Կ. Պոլսո մեջ: Մնած էր 1846 հունվար 10-ին:

Դեկտեմբեր 22.—1835. Հ. Մանուել վ. Զախչախյան, Վիեննայի Մխիթարյան միաբան, մատենագիր, բանաստեղծ և լեզվագետ, կը վախճանի:—1887. Իզմիրցի հայ բարերար Յովհաննես Սպարթալյան, որ իր եղբոր՝ Յակոբ Սպարթալյանի հետ նորին կառուցած է Իզմիրի Ազգ. հիմնադրանոցը, կը վախճանի: Մնած էր 1831 հունվար 10-ին:

Դեկտեմբեր 23.—1860. Ազգ. հիմնադրանոցի Տիկնանց առաջին խնամակալութեանը, որուն գլխավոր գործիչն էր տիկին Էպրու Երամյան, կը կազմվի:—1860. Մահ Երուսաղեմի Հովհաննես պատրիարքին, որուն հաջորդին ընտրութեան առթիւ ծագեցած ընկերսէն դուրսէն»-ի վեճը:—1886. Մաղիկ կսկսի հրատարակվի Կ. Պոլսո մեջ:

Դեկտեմբեր 24.—1837. Մահ Փեշտիմալճյան Գրիգոր վարժապետի, հայկաբան, կրօնագետ, բանաստեղծ և մատենագիր: Մնած էր 1773-ին:

Դեկտեմբեր 25.—1859. Փարիզ շաբաթաթերթը կը սկսի հրատարակվիլ Փարիզի մեջ խմբագրությամբ Աբրահամ Մուրադյանին (ն. տ. 6 հունվար 1860): Դադրած է 1863-ին:— 1868. Յարություն Տետեյան, իզմիրցի տպարանպետ, խմբագիր, հեղինակ և թարգմանիչ, կը մեռնի 28 տարեկան:

Դեկտեմբեր 26.— 1882. Թիֆլիսի մեջ հրատարակվող Մեղուօրաթերթին քսանհինգամյա հոբելյանը կկատարվի:

Դեկտեմբեր 27.— 1799. Մահ Ղուկաս Կարենցի կաթողիկոսին, որ ընտրված էր 1780-ին:

Դեկտեմբեր 28.—1881. Լ. Յովսէփ Վ. Գաթրճյան, միաբան վիճենայի Մխիթարյանց, հմուտ մատենագիր, կվախճանի:

Դեկտեմբեր 29.— 1843. Մահ Պողոս պեյ Յուսուֆի, որ վարած է պետական կարևոր պաշտոններ Եգիպտոսի մեջ: Մնած էր 1768-ին:— 1894. Տ. Յովհաննէս Հյունքյարպէյենտյան, նախկին ուսուցիչ, լեզվագետ՝ որ դբադած է հայ բառերու ստուգաբանությամբ, կը վախճանի: Մնած էր 1818 նոյեմբեր 25-ին:

Դեկտեմբեր 31.— 1779. Էդուարդ Ռափայել Ղարաֆյան, հնդկահայ վաճառական, կարևոր գումար մը կը կտակէ, որով կը հիմնվի Ռափայելյան վարժարանը:— 1882. Իզմիրցի հայ բարերար Յակոբ Սպարթալյան, կը վախճանի: Մնած էր 1825 հոկտեմբեր 25-ին:

Օրացույցում տպագրված է «Կ. Պոլսո հայերը և իրենց պատրիարքները» (էջ 77—258) ընդարձակ ուսումնասիրությունը, որտեղ տրված են 1461—1858 թվականների Կոստանդնուպոլսի 66 պատրիարքների հանգամանալից կենսագրությունները: Իս, իհարկե, միայն պատրիարքների կենսագրություններ չեն: Դա մի երկ է, որ կարելի է անվանել պոլսահայ կյանքի 400 տարվա տարեգրություն-հիշատակարան: Սկզբնաղբյուրների վրա ստեղծված այդ աշխատությունը թանկարժեք փաստաթուղթ է հայ ժողովրդի պատմության համար:

Այդ հիշատակարան-տարեգրության մեջ կարևոր տեղեկություններ կան նաև Թուրքիայի պատմության վերաբերյալ:

Օրացույցը տպագրել է «Ժամանակի բաժանումը և չափը» (էջ 259—261), «Արևդակնային դրությունը» (էջ 262—281), նոր դուռներ (էջ 282—296), «Գործի մարդոց համար» (էջ 297—337) հոգվածները: Պոլսահայ կենցաղի մասին ուշագրավ տեղեկություններ է պարունակում օրացույցում տպագրված «Ամուսնությունը» հոգվածը (էջ 339—342): Ահա երկու փոքրիկ ենթաբաժիններ այդ հոգվածից.

1. «Լեռնհուղմներ ամուսնության համար.— Ամուսնության վրա գրող հեղինակները շատ մը խորհուրդներ տված են այս մասին: Անոնցմէ մեկ քանին կհամառոտենք հոս:

1. Պետք է որ ամուսինները պատկանին միեւնոյն ընկերական միջավայրին: Տարբեր միջավայրերու պատկանողները հաճախ առօրյա բաներու մեջ տեսակ տեսակ հուսախաբությանց կհանդիպին:

2. Պետք է որ ամուսինները միեւնոյն կրօնքը ունենան, հակառակ պարագային կրնա ընտանիքին մեջ անհամաձայնություն ծագիլ զավակներու մասին: Հայտնի է, թէ Հայ եկեղեցին ամուսնությունը կօրհնէ այն ատեն միայն, երբ այր ու կին հայ եկեղեցու զավակ են:

3. Պետք է որ այրը իր կնոջմէն 5 կամ 6 տարի ավելի տարիքոտ ըլլա:

4. Պետք է որ այր ու կնոջ հարստությունները համեմատական ըլլան: Տարակույս չկա որ խելացի և հրապուրիչ ըլլալը, տաղանդներ ունենալը հաճախ աղջկան մը համար օժիտին տեղը կրննէ, սակայն աղքատ երիտասարդի համար նույնը չէ:

2. Կ. Պոլսո հայ ամուսնությունները.— Հայ ամուսնությունները վերջին հիսուն տարիներուն, զարգացած կենտրոններու մեջ, հետզհետե քիչցած են: Այս երևույթը շատ ուշագորավ է: Մասնավորապէս Կ. Պոլսո վրա խոսելով, տարակույս չկա, որ ասկէ հիսուն տարի առաջվան բնակիչներուն թիւը նկատողության առնելով, համեմատաբար շատ ավելի ամուսնություն տեղի կունենար: Ըստ պատրիարքարանի փոխանորդարանին արձանագրությանց, վերջին երեք տարիներուն ամուսնությունները հետզհետե շատցած են սակայն. այսպէս, 1897-ին՝ 349, 1898-ին՝ 396, 1899-ին՝ 418 ամուսնություն արձանագրված են: 1899-ի 415 ամուսնացածներէն 112-ը ձրի, մնացած 280-ը Ե աստիճանէ վար «խաչ» ընտրած են, և հազիվ 10-ի չափ ամուսնություններ արձանագրված են Ե աստիճանէ վեր «խաչ»-ով: Այս 415 ամուսնություններէն տեղի ունեցած են 75-ը Բերայի, 71-ը Գում գափուի, 47-ը Կետիկ փաշայի, 46-ը Սամաթիո, 29-ը Սկյուտարի, 23-ը Գատը գյուղի մեջ, և այլն»:

Օրացուցցի հաշորդ էջերում տպագրված են մանր հոգվածներ ու վիճակագրական աղյուսակներ և զանազան ազդեր:

Կ. Պոլսի Ս. Փրկչան հիվանդանոցի այս օրացույցը յուրաքանչյուր համարում ունեցել է մի քանի հետաքրքրական և ինքնատիպ հոգվածներ ու հաղորդումներ: Այսպէս, 1905 թվականի համարում օրացույցը տպագրել է «Կ. Պոլսո բանաստեղծ հայ

պատրիարքները» հոգւածը (էջ 406), որտեղ հանգամանորեն տրված են Գրիգոր Կեսարացու, Զաքարիա Վանեցու, Մելքիսեդեկ Սուպհի—Ավետիք Նվդոկացու, Գալուստ Կալծակնի, Հակոբ Նալանի կենսագրութիւնները և հատվածներ նրանց ստեղծագործութիւններից:

Նույն տարվա օրացույցում ուշադրութիւն է գրավում Թուրքիայի վարչական բաժանմանը նվիրված վիճակագրական տեղեկանքը. այստեղ տրված են Թուրքիայի բոլոր կուսակալութիւնները, սանճակները, գաղաներն ու քաղաքները, նշված է նաև, թե որ գաղան քանի գյուղ ունի:

Օրացույցը տպագրել է Պոլսի հայ բժիշկների, հայ փաստաբանների, նկարիչների, երաժշտագետների, ճարտարապետների, փորագրիչների ու քանդակագործների, ուսուցիչների ցուցակները, Թուրքիայում 1905-ին լույս տեսնող հայերեն թերթի ցանկը:

Կ. Պոլսում և ուրիշ վայրերում լույս տեսնող հայկական մի շարք օրացույցների հոգւածների ընտրութիւնն ժամանակ առանձնակի ուշադրութիւն էին դարձնում բարոյա-խրատական թեմաներին: Հաճախ այդ կարգի հոգւածները ընդարձակ տալու նպատակով օրացուցագիրները հավելվածներ էին կազմում և կցում տվյալ տարվա օրացույցին: Կ. Պոլսի «Համաազգային օրացույց հանրագիտական»-ի (խմբագիր-հրատարակիչ Գ. Պաղտասարյան) 1910 թվականի համարում տպագրված է մի ընդարձակ հավելված, որ կրում է «Բարոյախոսական» խորագիրը: Գ. Պաղտասարյանը տարբեր տեղերից քաղել է կարճ զրույցներ ու առածներ, թեև վոր խոսքեր ու հնօրյա ճշմարտութիւններ: Խմբագիր-հրատարակիչն ամեն ինչ անում է ընթերցողների սիրտը շահելու համար: Ահա մի քանի նմուշներ այդ «Բարոյախոսական»-ից:

«ՆԵՐԷՒ ԿՈՐՈՍԱՄԵՆ: Բարոյական զգացումը կորսցնողը նման է զինվորին, որո երկու սրունք ունի կտանի և չը կրնար այլևս կանգնիլ:

Հավատքը կորսցնողը նման է զինվորին, որ իր երկու ձեռքերը կը կորսցնեն պատերազմի դաշտին վրա և այլևս չը կրնար կռիւլ: Իսկ նա, որ հուլաւ կը կորսցնեն, նման է զինվորին, որ երկու աչքերն կորսցնելով, այլևս կտեսնեն ոչինչ»:

«ՇՈՂՈՔՈՐԹԻՆ պատկերը: Շողոքորթ մարդոց բարեկամութիւնը նման է սառն շինված տան, որ արևի ջերմութիւնը տեսնելուն պես կանհետանա: Մի վստահի շողոքորթներուն»:

«ՁՈՐՍ ԲԱՆ: Երկրիս վրա երեք բան կա, որ անօգուտ է, և չորս են, որ զգվելի կըլլան,

Գլուխ, առանց ուղեղի,  
Խելք, առանց դատողության,  
Սիրտ, առանց սիրո, և  
Քսակ, առանց դրամի»:

«Պտղատու ծառ: Մեծ մարդոց բաժինն է անարգ թշնամիներ ունենալ, ինչպես պտղատու ծառ մը միշտ ունի զինքը քարկոծողներ և դավազանի հարվածներ տեղացողներ»:

«Ռեամ և իրավունք: Կան հիմար մարդիկ, որ կը կարծեն թե ամեն բանի մեջ իրավունք ունին, որովհետև դրամ ունին»:

Ի դեպ բարոյախրատական հոգվածներ էին տպագրում ոչ միայն օրացույց-տարեգրքերը, այլև պատի օրացույցները: Ներկայացնենք Կարապետ Ափինյանի «Շիրակ» պատի օրացույցի 1907, 1908 և 1910 թվականների պատի օրացույցների մանրապատումներից մի քանիսը, որոնք տպագրվել են յուրաքանչյուր օրվա համար նախատեսված թերթիկի հաջորդ երեսին:

#### «Արդար դատաստան

Մի գյուղացի, ներկայանալով շինական դատարան, դիմում է տանտիրոջ և ասում.

— Պարոն տանուտեր, մի անբախտություն է պատահել:

— Ի՞նչ անբախտություն, — հարցնում է տանուտերը:

— Իմ կովը քու կովին հարու է տվել և սատկացրել... հիմա ի՞նչ պիտի անեմ:

— Ոչինչ չպիտի անես, վճարես իմ կովի գինը և այնպես էլ կվերջանա բանը:

Գյուղացին բարկությունից գլխարկը գետին է խփում և զայրացած ասում.

— Ես քեզ այդպես չասացի, պարոն տանուտեր:

— Հապա ինչպե՞ս ասացի:

— Ես ասացի, թե քու կովն է հարու տվել իմ կովին և սատկացրել... այժմ ի՞նչ պիտի անեմ:

— Նու, բարեկամ, ես այդ չգիտեմ: Ես հո չեմ սովորեցրել իմ կովին, որ հարու տա քու կովին» («Շիրակ», 1970, նոյեմբերի 30):

## «Ռուս գրողների կարծիքը կանանց մասին

Գոնչարով. Կինը սառչում է, երբ տղամարդը ասում է ամեն բան:

Դոստոևսկի. Կինը խաբում է ամենատես աչքին անգամ:

Ժուկովսկի. Ընտանեկան կյանքը համբերության դպրոց է:

Կոիլով. Թեև առաջին հայացքից կարծում են, թե տղամարդիկ են, որ կառավարում են ամեն բան, իսկ կանայք ոչինչ նշանակություն չունեն, բայց լավ որ նայես, կտեսնես, որ տղամարդիկ ոչ այլ ինչ են, եթե ոչ նրանց զործակատարը:

Լեւմոնով. Կանայք սիրում են միայն նրանց, որոնց չեն ճանաչում:

Տուրգենև. Իբրև ամենաթույլ արարած կինը միշտ ճշմարիտ է, մինչև անգամ, եթե նա... ճշմարիտ չէ: Նրան մատչելի է ճշմարտությունը, բայց ոչ արդարացիությունը, այդ նրա առաքինությունը չէ:

Տուրգենև. Ամեն մի դժբախտության պատճառը կինն է. հարկավոր է միայն խոքը մտածել» (Շիրակ», 1907, մարտի 23):

## «Զվարճալիք

Մի տեղ մի քանի կինտո հավաքված ականջ են դնում լրագիր կարդացողին: Լրագրի մեջ հաճախ կրկնվում էր նեյտրալիտետ խոսքը:

Լսողներից մեկը հարցրեց նշանակությունը:

— Վահ, չիս գիդի, այ ասեմ,— ասաց կինտոներից մեկը:— Գիքոն, Կարապետն ու Բաշխոն քնած ին մի վերմակի տակ: Գիքոն վերմակը քաշում է, Բաշխոն է մրսում, իժում Բաշխոն է քաշում՝ Գիքոն է մրսում, ամա Կարապետը, որ մեղտեղում տաք տեղում է, նեյտրալիտետ է էլի» («Շիրակ», 1907, ապրիլի 9):

## «Զինացիները կանանց մասին

Եթե կինը ոչ մի բանի մասին չի մտածում, այդ նշան է, որ նա որևէ մարդու մասին մտածում է:

Կինը սիրուց խելոքանում է, տղամարդը՝ հիմարանում:

Եթե ուզում ես արգելված գրքեր կարդալ, նայիր կանանց աչքերին:

Կինն իր բնավորութիւնը ցույց չի տա մինչև որ շամուսնանաւ։ Մի բանում կանայք միշտ մեղավոր են. նրանք երբեք չեն հարցնում տղամարդուն, թե որտեղից է նա փողեր ձեռք բերում։ Ամուսնանալուց առաջ հայելու առջև այնքան մի կանգնիր, որքան դրամարկղիդ առաջ։

Կնոջ բնավորութիւնը կարելի է իմանալ նրա հին կոշիկից։ Սիրահարված տղամարդը հիշեցնում է չոքած ուղտին, որի վրա բեռ պիտի բարձեն։

Եթե օձը շխաբեր Եվային, Եվան կխաբեր օձին։

Մի կաթիլ սերը արտասուքների ծով է գոյացնում։

Կինը որքան շատ գիտենա սիրո մասին, այնքան ավելի կուզենա իմանալ» («Շիրակ», 1907, հոկտեմբերի 13)։

### «Հին իմաստասերները կանանց մասին

Իմաստասերները առհասարակ շատ էլ բարեհաճ աչքով չեն վերաբերվել կանանց։

Սոկրատեսն ասում էր. «Կինը ամեն տեսակ շարիքի աղբյուր է։ Կնոջ սիրուց ավելի շատ պետք է վախենալ, քան տղամարդու ատելութունից։ Կնոջ սերը թույն է և այնքան ավելի վտանգավոր թույն, որ նա քաղցր է։

Տակառի մեջ ապրող Դիոգենեսը, որ երբեք ամուսնութեան համը չէր առել, կանանց հետևյալ հաճոյախոսութիւնն է արել. «աշխարհիս ոչ մի գանձով թույլ չէի տա, որ տակառս կին մտներ»։

Արիստոտելը հայտարարում է, որ «կինը բնութեան գործած մի սխալմունք է»։

Եվրիպիդեսն ասում է. «Բնութիւնը կնոջը տվե՛լ է նուրբ հնարագիտութիւն, ճարպիկութիւն և խելահասութիւն ամեն... դատարկ և վատ գործերում»։

Այն հարցին, թե ինչն է ավելի վտանգավոր մարդու համար, Դեմոկրիտը պատասխանեց. «Կրակը, ջուրը և... կինը» («Շիրակ», 1907, հոկտեմբերի 15)։

Յուլիանայն ասում է. «Ինչն է փետուրից ավելի թեթև.— Փոշին։— Ի՞նչն է փողուց ավելի թեթև.— Քամին։— Ի՞նչն է քամուց ավելի թեթև.— Կինը։— Իսկ կնոջից ի՞նչն է ավելի թեթև.— Ոչինչ...»։

Դեմոսթենես. «Կանանց մեջ առավելագույն զորեղ են կործանիչ ձգտումները. ինչ որ տղամարդը խորհում է ամբողջ տարիներով, կինը պատրաստ է մի օրում կործանելու»։

Հիպպոկրատ. «Երկնքի վրա ինչքան որ աստղ կա, այնքան էլ խարեություն կա կնոջ սրտում»:

Կատոն. «Վախեցեք երեք դժբախտություններից՝ աստվածների բարկությունից, հայրենիքի դավաճաններից և... կնոջ սիրուց» («Շիրակ», 1907, հոկտեմբերի 28):

— Ընտանեկան կյանքի մասին ընդհանրապես դուք ի՞նչ կարծիքի եք, — հարցրին հայտնի ոուս վիպագիր Տուրգենևին.

— Այդ կյանքը կարելի է համեմատել կաթի հետ... բայց կաթը շուտ է թթվում» («Շիրակ», 1908, մայիսի 3):

### «Լեզու

Կուզեք մարդուն ճանաչել՝ լեզվին նայեցեք. եթե լեզուն երկար է՝ նշանակում է մարդն անկեղծ է, եթե կարճ է՝ կեղծավոր է: Նեղ լեզուն ընկերության նշան է, իսկ լայնը՝ ինքնասիրության: Միևնույն ժամանակ երկար ու լայն լեզու ունեցողը անկեղծ է մինչև միամտության աստիճան և խոսելիս՝ խելքից-զլխից դուրս է տալիս: Երկար ու նեղ լեզու ունեցողը չափավոր անկեղծ է և միշտ մտածում է իր ասելիքի վրա, բայց շատ անգամ մտածածը չի ասում: Կարճ ու լայն լեզվով մարդը շատ է խոսում, ասում է յուր մտածածը, իսկականը չի հայտնում: Իսկ կարճ ու նեղ լեզու ունեցողը խորամանկ է խիստ և միշտ ստում է, բայց խիստ զգույշ, այնպես որ դիմացինը չի կարող նրան չհավատալ: Սրանցից պետք է զգույշ լինել: Այսպես ուրեմն, մինչև այժմ մարդու բնավորությունը կարող էին որոշել նրա ձեռագրով կամ ձեռի ափի մեջ եղած գծերը քննելով, այժմ դրանց վրա ավելացել է նաև լեզվի կազմությունը» («Շիրակ», 1908, սեպտեմբերի 17):

### «Մի Բանի մեծ մարդկանց ռաբլի կշիռը

Շիլլեր 1750 գրամ

Վոլտեր 2055 գրամ

Կրոմվել 2231 գրամ

Բայրոն 2238 գրամ

Մարդու ուղեղի միջին կշիռը 1250 գրամ է» («Շիրակ», 1910, փետրվարի 6):



## «Մտածումներ

Այն սերը որ շուտ է ծնվում, ամենից դժվար բուժելին է:

Սերը այն բնն է, որ աստված տվել է մեզ մինչև իրեն բարձրանալու համար:

Կինը կատարելագործված սատանա է:

Կանայք երբ չեն կարողանում իրենց խոսքը առաջ տանել, լալով են հաղթում:

Կնոջ բնավորությունը և չրի արագ ընթացքը միշտ ենթակա են փոփոխվելու» («Շիրակ», 1910, փետրվարի 26):

## «Հայ բանաստեղծների սրախոսություններից

Սիմֆերոպոլում հասարակական մի ժողովում «Ծիծեռնակ»-ի հեղինակը՝ Գևորգ Դոդոխյանը, վեճի է բռնվում մի հայտնի շատախոս պարոնի հետ: Դոդոխյանը, տեսնելով, որ պարոնը միշտ շեղվում է բուն մտքից և աշխատում է շատախոսություններով, թողնել, ինքը կանգնում է և իր սովորական ժպիտով դառնում շատախոսին ու ասում.

— Լավ ես խոսում, Հակոբ ջան,

Հատրդ չրկա, հավատա,

Մեկ կույեկի բան կանես,

Մեկ մանեթի շամայա» («Շիրակ», 1910, մարտի 12):

## «Լ. Տոլստոյի մտքերից

Կյանքը կորցնում է իր նշանակությունը, երբ մարդ հանդարտ սրտով մտածում է մահվան մասին» («Շիրակ», 1910, մարտի 19):

## «Կանանց շուրջը

Կանայք ավելի մեծ թշնամիներ չունեն՝ բացի կանանցից.

Ամենից պարկեշտ կինը նա է, որի մասին քիչ է խոսվում:

Երկրորդ անգամ ամուսնացող կինը մի անգամ ամուսնացողներից ավելի օգտակար և պատվավոր պիտի համարվի, որովհետև

գրքի երկրորդ տպագրութիւնը առաջին տպագրութիւնից ավելի լավ ընդունելութիւն է արժանանում» («Շիրակ», 1910, մայիսի 7)։

Հայկական տպագիր օրացույցների մեջ արժեքավոր հրատարակութիւն է Դանիել Վարուժանի և Հակոբ Սիրունու խմբագրութեամբ լույս տեսած «Նավասարդ» գրական և գեղարվեստական տարեգիրքը (Կ. Պոլիս, 1914)։ Այստեղ տպագրված են Դանիել Վարուժանի «Նավասարդյան», Սիւսաննայի «Նավասարդյան աղոթք առ դիցունհին Անահիտ» բանաստեղծութիւնները, Ռուբեն Զարդարյանի «Ով որ սուլիւն մը ունի իր հոգիին մեջ» խոհական պատկերը, Սիւլիի «Հնչակ», Ռուբեն Որբերյանի «Մենեւիք», Վահան Թեքեյանի «Վրեժի գինին», Շուշանիկ Կուրդիյանի «Գիշեր», Զարուհի Գալեմբարյանի «Երազ», Վիկտորիա Աղանուրի «Մարիամ քրոջս» բանաստեղծութիւնները, Վրթանէս Փափագյանի «Եղեղիկը» դրույցը, Վահան Մալեզյանի «Տարագրի մը հուշատետրը», Զապէլ Եսայանի «Երեկոյան ժամուն», Տիգրան Զոքրիւրյանի «Ճամփուս վրա» հուշագրութիւնը, Հակոբնու Մառքի «Միջատներու նիրհը», Ասորուլանի «Աստղիկի մահապարտութիւնը», Ե. Սրմաքեշխանլյանի «Սերինա»-ն, Մ. Սալբիի «Խենդեցած արտույտը», Կարապետ Գաբիկյանի «Ընկողաց՝ գտնողաց» գործերը, Գեղամ Կարապետյանի «Իննականեաց մեհայանները և Նավասարդի տունը Տարունի մեջ» ազգագրական ուսումնասիրութիւնը, Մ. Մեծարեւելի գրական առաջին գործերից մի քանիսը, Մորիս Մետերլինգի «Ինքնամուտը» դրաման (որ թարգմանել է Դանիել Վարուժանը), Ադամ Միցկէլի «Հարեմին շիրիմները», Վիթունական գեղուն», Օսկար Ուայլթի «Մտածումներ արվեստի մասին», Հովհ. Գաղանճյանի «Միջնադարյան սիրերգուներ», Վահան Գուլումճյանի «Անտունի»-ն (Ժողովրդական երգին նվիրված ծավալուն հոդված) և արվեստին ու գրականութեանը վերաբերող բազմաթիվ ուրիշ հոդվածներ ու հաղորդումներ։

Հայկական տպագիր օրացույցի զարգացման երկրորդ փուլում հայ իրականութեան մեջ օրացույցները կատարեցին նաև դասագրքի, գիտական ամսագրի, նորութիւնների տեղեկատուի դերը։ 1801—1915 թվականների օրացույցներում տպագրվել են հարյուրավոր գիտական լուրջ հոդվածներ ու հաղորդումներ։ Նման հոդվածների տպագրութիւնը հետագա տարիներին դարձավ գիտական ամսագրերի կամ գիտական ձեռնարկներ ու գրքեր հրատարակող կազմակերպութիւնների սեփականութիւնը։ Հետեւապես 1801—1915 թվականների հայ մշակութի, պատմութեան, գրականութեան, գիտութեան տարրեր բնագավառների մասին համընդ-

հանուր պատկերացում կազմելու համար անհնար է շրջանցել այդ տարիների օրացույցները: Հասկանալի պատճառով դրանք հաջորդ փուլում չէին կարող նույն դերը կատարել: Հասարակական կյանքի զարգացումը նոր պահանջներ էր առաջադրում և օրացույցի «գիտական տեղեկատուի» դերատանձման շրջանը պետք է ավարտվեր:

## ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ. 1916—1973

1915-ին կատարվեց մի ոճի, որն իր նախագիծը չի ունեցել մարդկային հասարակության ամբողջ պատմությունը: Թուրքիայի կառավարող շրջանները մշակեցին և իրագործեցին արևմտահայությունը բնաջնջելու հրեշավոր ծրագիրը: Կատարվեց հայ ժողովրդի մեծ եղեռնը: Բայց դա միայն 1915-ով չսահմանափակվեց: 1915-ը սկիզբն էր: Փաստորեն Մեծ եղեռնը շարունակվեց մինչև 1922-ը: Թուրքերը սրի քաշեցին մի ամբողջ ժողովուրդ: Ամայացավ Արևմտյան Հայաստանը: Թուրքական հրոսակները չքավարվեցին միայն Արևմտյան Հայաստանով: Նրանք փորձեցին մուտք գործել նաև Անդրկովկաս և իրենց նախճիրը շարունակել նաև այստեղ: 1918-ի մայիսին տեղի ունեցավ Սարգսրապատի հերոսամարտը, որտեղ հայ ժողովուրդը փայլուն հաղթանակ տարավ: Այդ հաղթանակը, սակայն, բնաջնջվող մի ազգի վերընձյուղվելու նշանաբան չէր դառնա, եթե չլիներ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և նրա՝ հայ ժողովրդին ազատություն բերող վարկերից մեկը՝ նոյեմբերյան հեղափոխությունը: Արևելյան Հայաստանն անցավ Հոկտեմբերի դրոշի ներքո, ուս ժողովրդի օգնությամբ դրեց իր նոր պետականության հիմքերը և լծվեց ավերված երկիրը վերաշինելու մեծ գործին: Բայց Արևմտյան Հայաստանի սպանդից ազատված ժողովրդի մի մասը՝ մոտ 600 հազար մարդ, ցրվեց աշխարհով մեկ: Իրենց հնամյա հայրենիքից բշված, բնահան արված հայերը բնակություն հաստատեցին աշխարհի տարբեր կողմերում: Ստեղծվեց երկու Հայաստան:

Այս պայմաններում, մայր հողից կտրված հայերը, ընկնելով օտար երկրների տակ, ամեն կերպ ձգտում էին պահել իրենց ազգային դիմագիծը և առաջին հերթին մայրենի լեզուն: Օտար երկրներում հրատարակվում են դասագրքեր, թերթեր ու ամսագրեր, նաև՝ օրացույցներ: 1916-ից հետո հայկական տպագիր օրացույցի քարտեզը ընդգրկում է գրեթե ամբողջ աշխարհը: Մի քանի տասնամյակում լույս են տեսնում մոտ 300 անուն հայերեն օրացույցներ ու տարեցույցներ: Բայց դա զարգացման ու առաջադիմության

ցուցանիշ չէ: Դա տարագիր դարձած հայի ճակատագրի դառն արտահայտությունն է, որովհետև աշխարհի ամենամեծ ժողովուրդն անգամ այդ տարիներին 300 օրացույց չէր հրատարակում:

Արտասահմանում այժմ լույս տեսնող հայկական օրացույցներն ու տարեցույցները սփյուռքահայ հայրենակցական, մշակութային, կրթական, մարզական միությունների ու ընկերությունների պատմության համար անփոխարինելի աղբյուրներ են: Միաժամանակ այդ օրացույցները կարևոր գործոններ են հայ խոսքը սփյուռքում անմար պահելու համար, ուժացման դեմ պայքարող փոքրիկ կանթեղներ: Ժամանակակից սփյուռքահայ օրացույցների մեծ մասի հիմնական նպատակն է անշեղ պահել հայրենական հիշատակները և ամրապնդել սփյուռքահայության կապերը մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ:

Սփյուռքում հայկական օրացույցները նաև հկամտի աղբյուր են ղանաղան անձերի ու կազմակերպությունների համար: Դրանք այդպիսի աղբյուր են եղել նաև 1916-ից առաջ: Օրացույց ու տարեցույց հրատարակողներին միշտ մտահոգել է իրենց հրատարակությունների վաճառքն ու եկամուտը: Այդ պատճառով հաճախ նրանք տպագրում են էժանագին հոդվածներ, «գայթակղեցնող նորություններ», անարժեք զրույցներ ու ներբողներ: Այսպես, «Սուրեն Պարթևյանը, 1914-ին, իր փոքին սպաստվել միայն մտահոգ, անիկա պիտի չվարանի Եդիպտահայ իր տարեցույցներու մեջ հասարակություններ, գրեթե ոչնչություններ պսակազարդելու, դերձակներ, նույնիսկ նպարավաճառներ ազգային դեմքերի փառքին բարձրացնելու, իր գիրքը վաճառելու անպատում տկարամրտություն մը ենթակա» («Սիոն» ամսագիր, Երուսաղեմ, 1956, № 2—3, էջ 59): Օրացույց հրատարակողի էությունը ահա թե ինչպես է բացահայտված 1934-ին Հալեպում լույս տեսած «Պատի օրացույց մշտահուշ»-ի «Պատի օրացույց» վերնագրով բանաստեղծության մեջ, որի հեղինակը օրացույցի խմբագիր-հրատարակիչ Ղ. Տեր-Ղազարյանն է.

«Պատի օրացույցս նվեր համարե,  
Քանզի հայ ազգիս օգտին համար է,  
Սուրիա, Պաղեստին, Եդիպտոս, Իրաք,  
Ընդունելություն գտած է արագ.  
Մեկ կողմ Պարսկաստան, մյուս կողմ՝ Ֆրանսա,  
Կըսեն ինչ սիրուն օրհնություն մէ սա,  
Զույգ Ամերիկան և երկիրն Պալքան  
Սիրով տարածող բարեկամներ կան:

Իր հոգեշինիչ և ընտիր նյութեր  
Կպարունակեն տասն ու յոթ թերթեր,  
Այդքան ծավալով ու ածանցին  
Հուսո ջահ մը է նա հայ ընտանիքին:  
Կուղեր պահել իր հավաքածոներ,  
Փութացեր ինձ ձերին հասցեներ,  
Կուղարկեմ ընդ փուլթ սուրհանդակով  
Հատի գին երեք ֆրանկ ստակով:  
Ասկի վաճառել ամեն ուզողին  
Տասնեն մեկ սքոնթո կուտամ կամովին,  
Իսկ թե շատ առեն մին կանխավճառ  
Տասնեն երկուք կա անոր անպատճառ:  
Լըսեր սուրբ խոսքին. «Մեն բան փորձեցեր»  
Կըսե, իսկ «Բարին ամուր բռնեցեր»:

Սփյուռքում օրացույցներ ու տարեցույցներ են հրատարակում նաև դաշնակցականները: Հակակոմունիզմի դիրքերի վրա կանգնած դաշնակցական կուսակցությունը, որը շրմբունեց պատմության վարդապետան ընթացքն ու հայ ժողովրդի ճակատագիրը, իր այս կարգի հրատարակությունների մեջ էլ հավատարիմ է մնացել իր բուն էությունը, չնայած ընթերցողներ չկորցնելու համար փորձում է խուսանավել: Առատորեն հոգավածներ ու նյութեր է տպագրում սոցիալիստական Հայաստանի տնտեսության, գիտության ու մշակույթի նվաճումների մասին, բայց հայհոյում է կոմունիզմը, առանց հասկանալու, որ Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ կործանումից փրկված հայ ժողովուրդը, Սովետական Հայաստանը այսօրվա նվաճումները բնավ չէին ունենա առանց կոմունիզմի, առանց ռուս մեծ ժողովրդի և Սովետական Միության բոլոր ժողովուրդների եղբայրական, անշահախնդիր օգնության: Դաշնակցականները չեն հասկանում, որ Սովետական Հայաստանն այսօր զարգացած երկրի մակարդակ է ձեռք բերել և անուն հանել այն բանի շնորհիվ, որ Հայաստանի աշխատավորությունը զինվորազորվել է կոմունիզմի գաղափարախոսությանը:

Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների ու միությունների հրատարակած օրացույցներում զգալի տեղ է տրվում Սովետական Հայաստանի տնտեսության ու մշակույթի նվաճումներին:

1916-ից հետո արտասահմանում տպագրվող հայկական օրացույցները դարձել են բազմազան: Բայց այդ բազմազանությունը

նպատակամղված է սփյուռքում հայության դիմագիծը պահելու դժվար ու ծանր գործին:

1916—73-ին արտասահմանում տպագրվող ամենաարժեքավոր օրացույցը շարունակում էր մնալ Թեոդիկի «Ամենուն տարեցույցը», որ լույս տեսավ մինչև 1929-ը: 1920-ից հետո Թեոդիկը ավելի հստակ էր դարձրել իր ծրագիրը և հրատարակում էր բազմաբնույթ հայագիտական ու մշակութային նյութեր: Իրականում Թեոդիկի հրատարակած տարեցույցը միայն անունով էր տարեցույց, դա ամենամյա, իր ձևով ու բովանդակությամբ ինքնատիպ հանրագիտարան էր: Ահա 1926-ի «Ամենուն տարեցույցը»: Ա մասում տպագրել է տոմարագիտական բաժինը, Ի մասում՝ կենցաղագիտական: Այս երկրորդ բաժնում «Փաղաքավարությունը տունեն դուրս» խորագրի տակ Թեոդիկը տալիս է, թե տղամարդն ու կինը ինչպես պիտի քայլեն, ինչպես բարենեն, ինչպես օգտագործեն հովհարն ու զավաղանը, ինչպես պահեն հանրակառքի մեջ, թատրոնում, ճաշելիս և այլն: Ապա տալիս է «Մանրավիպեր քաղաքավարության վրա», որոնցից մեջքերենք մեկը: 1. «Տապանաքարերու վրա անտեղի է ավելորդ գովեստներ շռայլել հանգուցյալ ազգականներու հասցեին. արժեցուցած կըլլանք ատով «Գնա մեռիք, եկուր սիրեմ» հեղնական առածը»:

Տարեցույցի Գ մասում Թեոդիկը տպագրել է իր իսկ կազմած «Որթն ու տունկը» ընդարձակ հոդվածը, որը առանձին վերցրած գյուղատնտեսական գիտելիքների մի առանձին գիտական տեղեկատու է: Այս բաժնում տրված են աշխարհում աճող խաղողի բոլոր տեսակները, այդ թվում՝ նաև հայկականը (300-ից ավելի անուններով): Հոդվածի վերջին մասը պատմագիտական ուսումնասիրություն է՝ նվիրված գինու պատմությանը, Բաքոսին, Բաքոսատոնին ու խաղողօրհներին և այլն:

Դ մասը կոչվում է «Զվարճական»:

Հետաքրքրական նյութեր են տպագրված Ե՝ «Գրական» մասում: Դրանցից են Վիկտոր Հյուգոյի «Եղբայրություն» բանաստեղծությունը (Արշակ Զուպանյանի թարգմանությամբ), Եղիա Տեմիրճիպաշյանի 1894-ին գրած մի քանի նամակները, նշան Պեշկեթաշյանի «Հիվանդանոց» բանաստեղծությունը, Հ. Հինդլյանի «Պերպերյան իբրև դաստիարակ» հոդվածը, Լամարթինի «Խաչելությունը» բանաստեղծությունը (Մեսրոպ Նուպարյանի թարգմանությամբ), Սրբուհի Տյուսաբի «Կանանց անգործությունը» հոդվածը, Ավետիք Իսահակյանի «Գրական նախանձ»-ը, Կարապետ Սիտալի Ալեքսանդր Մյասնիկյանին նվիրված «Մյասնիկյան» բանաստեղծությունը, Արշակունհի Թեոդիկի (Արշակունհի Ճեղ-

զեճյան, Թեոդիկի կինը) «Օշական, Աշտիշատ, Վանատիկ»-ը, Ջապել Եսայանի «Հակոբ մորեղբայրս», Գառնիկ Ֆետգլյանի «Հաջ իշխանավորք ի Ռավեննա և ի բյուզանդական կայսրության մեջ» ուսումնասիրությունը, Վիկտորիա Աղանուրի անտիպ բանաստեղծություններից (Արսեն Ղազիկյանի թարգմանությամբ) և այլն:

Զ՝ «Գեղարվեստական» մասում մեծ թվով նյութեր կան հայ թատրոնի պատմության վերաբերյալ, Կոմիտասի մասին: Այստեղ տրված են նաև Ալեքսանդր Սպենդիարյանի, Ռոմանոս Մելիքյանի, Օվսաննա Տեր-Գրիգորյանի, Սպիրիդոն Մելիքյանի, Արշակ Ադամյանի, Տիգրան Զուխաճյանի, Արմենակ Շահմուրադյանի, Մաննիկ Պերպեյանի, Արմեն Թոգայանի, Ջապել Արամի (Փանոսյան), Թադևոս Ավագյանի, Ռոզ Զուլպյանի, Ալիծ Քյուրեճյանի, Թորգոմ Պեղազյանի, Ստեփան էմասի, էդգար Մանասի, Վարդան Մախոխյանի, Արշակ Ֆեթվաճյանի, Հովսեփ Փուշմանի, Հայկ Կյուտենյանի, Հակոբ Գյուրջյանի, Թորոս Թորամանյանի, Արա Սարգսյանի և այլոց հանգամանալից կենսագրականները:

Ե մասում տարեցույցը վիճակագրական տեղեկություններ է հաղորդում Սովետական Հայաստանի 1924—25 թվականների տնտեսական ու մշակութային կյանքից:

Այս բաժնում տպագրված է Բաբկեն Կյուլեսերյանի «Կիլիկիո Աշպահանց ծագումն ու համանուն կաթողիկոսներ», Արշակ Այվոյաճյանի «Պարսկահայ գործիչներ», Երվանդ Շահազիզի «Մկրտիչ էմինի ճանապարհորդությունը Կալկաթայից մինչև Մոսկվա», Մինաս Զերազի «Խղճի ազատություն» հոդվածները:

1938-ին Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում լույս տեսավ Զ. Մարաշլյանի և Ն. Գասպարյանի «Հայրենի տարեցույց»-ը: Ի միջի այլոց նշենք, որ այդ տարեցույցի կազմողն ու խմբագիրը սիվյուրքահայ ականավոր մատենագետ ու բանասեր Ներսես Գասապյանն է: Զ. Մարաշլյանը հազիվ գրաճանաչ մարդ է և որևէ բան կազմել կամ խմբագրել չէր կարող: Նա օգտվել է տպարանատիրոջ իր իրավունքից և անունը դրել Ներսես Գասապյանի կողքին որպես տարեցույցի հեղինակ: Ինչևէ. այս տարեցույցում թանկարժեք տեղեկություններ կան բուլղարահայ գաղութի մասին: Մասնավորապես արժեքավոր է «Հայերու թիվը Պուլկարիո մեջ» վիճակագրական տեղեկանքը (էջ 69—73):

Սիվյուրքահայ հրատարակություններից է «Արմավենի» տարեգիրքը (Ա տարի, 1937—1938, Կահիրե): Նախորդի պես այս տարեցույցն էլ արժեքավորվում է նրանով, որ փաստագրական տվյալներ է պարունակում եգիպտահայ գաղութի պատմության վերաբերյալ:

1939—40-ին Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում լույս տեսան «Գաղութահայ տարեգիրք»-ի երկու հատորները, որի խմբագիրն է Մկրտիչ Պոտուրյանը։ Սա հանրագիտական բնույթի հրատարակություն է և արժեքավոր աղբյուր ոչ միայն ռումինահայ, այլ ընդհանրապես գաղութահայ կյանքի պատմության համար։

Իր ընտրած նյութերի գիտական արժեքով աչքի է ընկնում «Հասկ հայագիտական տարեգիրք»-ը (Բեյրութ, 1948), որ լույս է տեսել միայն մի հատոր։ Այստեղ տպագրված է Գարեգին կաթողիկոսի «Տարսայիճ Օրբելյանի և Մինա Խաթունի սերունդը» ծանրակշիռ ուսումնասիրությունը, Հրանդ Ք. Արմենի՝ Արտավազ Բ Երկրորդին նվիրված «Առաջին հայ մատենագիրք» ընդարձակ հոդվածը (էջ 37—50), Հ. Քյուրտյանի «Կեսարիո ոսկերչական դպրոցին արծաթ կաղմերը» (էջ 51—61), Հ. Թուրչյանի «Արմաշի ձեռագրերը», Արտավազ արքեպիսկոպոսի «Միջագետքի ամենահին քաղաքը՝ Որեդ կամ էրիտու» (էջ 104—106), Գ. Գյոզալյանի «Մանուկ Աբեղյան» ընդարձակ կենսագրականը (էջ 116—129), Գնել վարդապետի «Հայ պատարագի ծագումն ու զարգացումը», Բյուզանդ Եղիսյանի «Դաստիարակությունը հեթանոս հայոց մեջ», Շ. Ռ. Պերպիրյանի «Հայ իմաստասիրական եզրաբանություն մը համար» (էջ 177—179), Գևորգ Մըսրոյանի «Մատենագիր իպն Խալտուն՝ հայերու մասին» (էջ 180—186), Աշոտ Պատմագրյանի «Պալեստրինա և Շնորհալի» (էջ 187—191), Գարեգին կաթողիկոսի «Մխիթար Անեցի գրիչ և նկարիչ» (էջ 192—219) հոդվածները։

Արտասահմանում հրատարակվող հայկական օրացույցները հաճախ փորձում են առանձին տարիների համարներ դարձնել թեմատիկ։ Այսպես. «Օրացույց-ալպոմ՝ նվիրված Մեծ եղեռնի հիսնամյակին (1915—1965)»-ը (Բեյրութ, 1965) ավելի շուտ բանաստեղծությունների ինքնատիպ ժողովածու է, քան օրացույց։ Այստեղ տպագրված են Համո Սահյանի «Հայաստանը երգերի մեջ», Ավետիք Իսահակյանի «Արարատին», Եղիշե Չարենցի «Գովք Հայաստանի», Ղևոնդ Ալիշանի «Պալույն Ավարայրի», Եղիշեի «Վարդանի խոսքը», Մարո Մարգարյանի «Աշխարհի մանուկներին», Հովհաննես Շիրազի «Օրորում էր մայրս անքուն», Գեղամ Սարյանի «Դեպի կառավարարան», Պարույր Սևակի «Ղողանջ եղեռնական», Սիամանթոյի «Գլուտին փառք», Սիլվա Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն», Վահան Թեքեյանի «Հարության շունչն է ահա», Ավետիք Իսահակյանի «Մեր պատմիչներն ու գուսանները», Դանիել Վարուժանի «Անդաստան», Գևորգ էմինի «Երգ կոունկի մա-



սին», Հրաչյա Հովհաննիսյանի «Ճանապարհը հայոց», Եղիշե Չա-  
րենցի «Դեպի ապագան», Մաքսիմ Գորկու «Մրրկահավի երգը»,  
Հովհաննես Թումանյանի «Հայրենիքիս հետ», Համո Սահյանի  
«Երբ Հայաստանի», Սողոմոն Տառնցու «Նոր տարվա ուղերձ»  
ստեղծագործությունները:

«Միօրյա ազգային վարժարաններ» (Սիդնեյ, 1971) օրացույց-  
ը շապիկի վրա տպագրել է խաշատուր Աբովյանի դիմանկարը և  
մեջ բերել նրա խոսքը. «Զեկ եմ ասում, ձեզ՝ հայոց նորահաս  
երիտասարդը՝ ձեր անումին մեռնիմ, ձեր արևին ղուրպան, շատ  
լեզու սովորեցեք, ձեր լեզուն, ձեր հավատը ամուր բռնեցեք»:

«Ազգ. Քարեն Եփփե ճեմարան» օրացույցը (Հալեպ, 1971)  
նվիրված է հայկական ձեռագրերում հանդիպող մեսրոպյան այ-  
բուրենի թվանագրերին:

Ալպեո Շամվոնյանը իր հրատարակած 1963-ի օրացույցում  
(Եդիպոսոս) առաջին տախտակի վրա տալիս է բանաստեղծու-  
թյունների մի փունջ՝ նվիրված հայոց լեզվին (Արշալույս Մարգար-  
յանի «Ծշականում», Վաղարշակ Նորենցի «Ուսուցիչ», Վահան  
Թեքեյանի «Տաղ հայերեն լեզվին», Ժակ Հակոբյանի «Ով հայ,  
խոսե հայերեն», Պարույր Սեակի «Մեսրոպյան լեզու» և հատված  
«Այր մի՛ Մաշտոց անուն»-ից), երկրորդ տախտակի վրա՝ հայկա-  
կան 48 ճաշատեսակների եփելու եղանակները:

Բարոյախրատական, սիրո, ընտանիքին վերաբերող մի շարք  
թեմավոր խոսքեր իրենց մշտական տեղն են գտել սփյուռքում  
տպագրվող մի քանի տասնյակ օրացույցների էջերում: Ահա այդ  
թեմավոր խոսքերից մի քանիսը.

Մուլությունն այնքան ծանր է քայլում, որ աղքատությունն  
անմիջապես հասնում է հետևից:

Աշխարհիս մեջ ամենից պարզ բանը ապրելն է՝ և ամենից  
կնճռոտ բանը՝ կյանքը:

Ձղաստիարակված, բայց գեղանի աղջիկը նման է այն նրբի-  
րանգ վարդին, որը հոտ չունի:

Ձախորդության ժամանակ պահիր արժանապատվությունդ:

Ցանկանում ես երջանիկ ապրել՝ ջանացիր երջանկացնել  
ուրիշներին:

Արձանն աչքիդ կփոքրանա ինչքան հեռանաս նրանից, մարդը  
կփոքրանա՝ ինչքան մոտենաս նրան:

Համբերություն չունես, ուրեմն ոչինչ չունես:

Ուրիշներին հաճախ ներիր, բայց ինքդ բնավ քեզ մի ներիր:

Հրապարակով մի հանդիմանիր նրան, ում կարող ես հանդի-  
մանել ծածուկ:

Բարի լինելը դյուրին է, արդար լինելը՝ ահա թե ինչն է դժ-  
վարը:

Ծույլ հողագործի ցանած սերմերը մկները միշտ կփչացնեն:  
Նախանձը տկար սրտերի տենդ է:

Ավելի լավ է բախտավոր լինել, քան թե խելացի (իտալա-  
կան):

Վատ գրքերը նմանվում են ժանտ խոտերին՝ ամենուրեք տա-  
րածվելու հնարքը գիտեն:

Մազը որքան էլ բարակ է՝ ստվեր է տալիս:

Զայրացած պահիդ հաշվիր մեկից մինչև տասը (անշլիական):

Թեթևսովիկ մարդու եռանդը նման է հարդի բոցին:

Գինին այնքան մարդ է խեղդել, որքան չի ընկղմել ծովը:

Լոռթյունը անկատար ինքնարդարացումից ավելի լավ է:

Միայն նա գիտե, թե ինչ է սերը, ով սիրում է առանց հույսի  
(Շիլլեր):

Ամուսնական սիրո կրակը վառվում է խոհանոցի մեջ (ֆրան-  
սիական):

Կա երեք տեսակ տգիտություն. ոչինչ չիմանալ, սխալ բաներ  
իմանալ և պետք չեղած քաններ իմանալ:

Երջանիկ կյանք գոյություն չունի. երջանիկ օրեր կան միայն  
(Լայպնից):

Ավելի լավ է ոտդ սահի, քան լեզուդ (արամեական):

Ամուսնությունը մի գիրք է. առաջին գլուխը բանաստեղծու-  
թյուն է, մնացածը արձակ են (Ջոն Սմիթ):

Բուրսա էլ լուսնի նման ենք. ունենք մի մութ կողմ, որ ոչ ոքի  
ցույց չենք տալիս (Մարկ Տվեն):

Ամուսնությունը նման է պաշարված բերդի. դրսում գտնվող-  
ները ցանկանում են ներս մտնել, ներսում գտնվողները՝ դուրս  
գալ (արաբական):

Կինն ու դանակը լավ են, երբ հեռվից ես նայում նրանց  
(պարսկական):

Սիրո մեջ երջանիկ լինելու համար պետք է ամեն ինչ տալ և  
ոչինչ չպահանջել (Պոլ Բուրժե):

Ամուսնությունը քսանեն առաջ խենթություն է, քսանհինգեն  
երեսուն՝ պարտականություն և քառասունեն հիսուն՝ խալսառա-  
կություն (Հակոբ Պարոնյան):

Վրեժխնդրության պատճառած զոհունակությունը միայն մի  
պահ է տևում, ներողամտության պատճառած ուրախությունը  
մշտատև է:

Բարի համբավը ավելի արժե, քան ոսկի դոտին:

Ավելի լավ է անոթի պառկել, քան պարտքով արթնանալ:

Մի կարծիք, թե ամեն ժպիտ ուրախություն և ամեն արցունք սուղ է:

Կատերու մեջ ամենն ուշ հասնողը արդարությունն է:

Աղջիկները ծաղիկների նման են, ոմանք իրենց գույնին համար կը սիրվեն, ոմանք ալ՝ իրենց հոտին:

Օգտակար գրքերը անոնք են, որոնք ամենն ավելի խորհիլ կուտան մարդուս:

Իմաստության առաջին քայլը սխալը ճանաչելն է, երկրորդը՝ ճշմարիտը որոշելը:

Գողը իբ համար տուն չի կարող շինել, բայց տուն ունեցողի տունը կքանդի:

Ավելի հեշտ է վառված ծծուխը լեղվի վրա պահելը, քան թե գաղտնիքը:

Վերջին տասնամյակներում սփյուռքահայ օրացույցները սկսել են Թեոդիկի արտահայտությամբ «օրացուցային զվարճալիքներ» հայթայթել օտար օրացույցներից: Ահա դրանցից մեկը: Սփյուռքահայ բազմաթիվ օրացույցներ «Ամիսները և երակնոմարդկությունը» խորագրի տակ տպագրում են, թե տվյալ ամսում ծնվածը բնավորության ինչ գծեր է ունենում, ինչպիսի ճակատագիր է սպասվում նրան և այլն: Այսպես.

Հունվարին ծնված կանայք լինում են զվարթ, ազնիվ, համակրելի, անկեղծ և իրենց սիրո մեջ հարատևող, հանդարտ, կորովով: Հաճոյասեր լինելով հանդերձ՝ լուրջ են: Այդ ասին ծնվող տղամարդիկ լինում են խելացի, աշխույժ, ազնիվ և գորովալիր: Օժտված են առողջ ուղեղով, ընդունակ են դատելու, սեր ունեն քաղաքականությամբ զբաղվելու: Պաղարյուն են և հփքարտաբարո՝ իրենց արտահայտությունների և գործի մեջ: Փառասեր են, բայց վստահելի, հավատարիմ իրենց բարեկամների հանդեպ:

Փետրվարին ծնված կանայք ունենում են աչքի ընկնող գեղեցկություն: Նրանց դատողությունը լավ է, սիրտը պատվական, բայց ընդհանրապես շատ խնայողասեր են: Բարեկամներին հավատարիմ են, սիրո մեջ հարատևող և օրինակելի ամուսին: Տղամարդիկ փոփոխական, ազդվող բնավորություն ունեն, խանդավառվող են, համարձակ, մեծամիտ և փառասեր: Վստահում են ուրիշներին, միամիտ են, սիրալիր և զգայուն, բայց միաժամանակ շատ բարկացկոտ:

Մարտին ծնված կանայք սիրուն են: Ունեն անփայլ մորթ և թեթևորեն ավշային խառնվածք: Պըրասեր են, հետաքրքիր և փափկաճաշակ: Միրում են լավ ուտել և ուրախ ժամանցներ ունե-

նալ: Հակամետ են փոքր խնդիրները շափազանցելու և անդգա-  
լաբար ստում են: Բարկացկոտ են և զգայուն, բայց ընդհանրապես  
անհամո ընավորութուն չունեն: Տղամարդիկ չղային են, դյուրա-  
զրգիւ: Օժտված են կրքոտ խառնվածքով, հաճոյասեր են, նա-  
խանձախնդիր իրենց արժանապատւության և ազատության՝ որ-  
քան զազափարների, նույնքան զգացումների տեսակետից: Հաջող  
են ճառարտեսելու մեջ, բայց իրենց խոսքի տերը չեն մնում և հա-  
ճախ թերանում են խոստումների մեջ: Ուսումնասեր են, սիրում  
են փխրստփայտութունը և գիտութուններ: Գործի ընդունակ և  
առաջադիմող մարդիկ են. սիրում են ղեկավարել ուրիշներին:

Ապրիլին ծնված կանայք ունեն խելացի և լուրջ գեմք, ուժեղ  
նկարագիր և լավ դատողութուն: Հրամայող են, գործնական, բայց  
դյուրաբորբոր: Հակառակ այս շեղումներին, որոնք վնասում են  
տան խաղաղութունը, լավ սիրտ ունեն, հավատարի՜ և անձնվեր  
ամուսին են: Տղամարդիկ խիստ, զայրացկոտ, բուռն և երբեմն չոր  
ընավորութուն ունեն: Անկախ մտածող, քիչ ընկերական, բայց  
գորովալիք և զգայուն խառնվածքի տեր են: Նրանց մտածելակեր-  
պը հաստատուն է, սիրում են կարգ ու կանոն: Գործնական են,  
աշխատասեր, հաստատուն կամքի տեր, բայց ոչ նախաձեռնող:

Մայիսին ծնված կանայք գեղեցիկ են, ունեն լավ կազմվածք.  
Ընավորությամբ սիրալիք են, զգայուն, պարզ: Հավակնոտ չեն,  
օժտված են համակրելի նկարագրով: Բարեսիրտ են, շնորհալի, ճաշ-  
պիկ, բայց թուլակամ: Տղամարդիկ զվարթ են, աշխույժ, տպավոր-  
վող, դյուրափոփոխ նկարագրի տեր: Սրանցի սիրտ ունեն և սի-  
րում են օգտակար լինել ուրիշներին: Ամեն բանի հարմարվել  
գիտեն, կազմում են մեծ ծրագրեր, բայց հաճախ ոչ իրականալի:  
Խելացի են, խոսող, խանդավառվող, սիրում են արվեստները,  
գրականութունը: Հանդուգն են, բայց միաժամանակ՝ խոհեմ:

Հունիսի ծնված կանայք բավական գեղեցիկ են. ունեն ան-  
փայլ գույն, նուրբ մորթ, ձվաձև դեմք, փոքրիկ բերան: Չափա-  
զանց զգայուն են: Շատ սիրալիք են, հաճույքների մեջ կրակոտ:  
Պշտասեր են, մի քիչ խաբող ընավորութուն ունեն: Թեև մտածկոտ  
են ու մտազբաղ, բայց կարող են կյանքի դրական կողմը տեսնել:  
Շատ անփույթ են, բայց հաճախ համառ, գործունյա և աշխատա-  
սեր: Տղամարդիկ կենսունակ իմացականության տեր են, բայց  
իրենց կրքոտ և զգայուն ընավորության պատճառով հաճախ են-  
թարկվում են շեղումների: Շատ են փնտրում կյանքի հուզումնա-  
լից կողմերը, մանավանդ նոր մտայնութուններ: Վիճաբանող են  
և կռվասեր, տրամաբանութունից ալելի՜ իրենց քմահաճույքով և  
առաջնորդվում: Կասկած են ընտանիքին, նախաձեռնող ոգի ունեն:

Հուլիսին ծնված կանայք սովորաբար դեղեցիկ են, շատ սիրող և շատ սիրված, բայց երբեմն իրենք իրենց մոլորվելու պատճառ են դառնում: Համարձակ են, աշխույժ, քինախնդիր, բայց միաժամանակ անկեղծ և կարեկցող: Տղամարդիկ հպարտ են, պարծենկոտ, բայց քաջ: Ազնիվ զգացումների տեր են, անկեղծ և արդարասեր: Սիրալիր են և կրքոտ: Ամեն բանի մեջ ներդաշնակություն են սիրում: Դրական, նախաձեռնող, կարգապահ և զգուշավոր բնավորություն ունենալով՝ կյանքում հաջողակ են:

Օգոստոսին ծնված կանայք դեղեցիկ են լինում, անուշ, ճանաչագեղ աչքերով և կանոնավոր դիմադծերով: Երկշոտ են, համեստ և քաղցրաբարո: Հակամետ են շուտ ամուսնանալու, սեր ունեն տնտեսության և կապված են լինում ընտանիքին: Սիրում են հանդարտ կյանք: Շատ լավ սրտի տեր են, գորովալիր, հարատևող, անկեղծ ու պարկեշտ, երբեմն ենթակա մեկամաղձոտության: Տղամարդիկ սիրում են այն բոլորը, ինչ փայլուն է և գեղեցիկ: Խոհեմ են, սովորաբար զվարթ և հեղինակ: Գորովալիր են և կրքոտ: Շատ կապված են ընտանիքին: Թեև ամաշկոտ և երկշոտ են, բայց ազնիվ նկարագիր ունեն և հեշտությամբ խաբվում են: Համբերատար են և գործնական:

Սեպտեմբերին ծնված կանայք զվարթ են, ազնիվ, գորովալիր: Պշտասեր են և ունեն շնորհալի շարժումներ: Զգայուն են իրենց ընծայված պատիվների նկատմամբ, ուզում են հաճելի լինել և շատերից սիրվել: Հաճույասեր են, բայց լավ տանտիկին, միայն մի քիչ առատորեն ծախսող: Տղամարդիկ համակրելի են և ազնիվ: Գեղեցիկ խոսքերով ուրիշին գրավել գիտեն, բայց ընդհանրապես իրենց խոստումները հարգող չեն: Խոհեմ են և վարանոտ: քննադատական շատ սուր միտք ունեն: այնքան միամիտ չեն և որոշ չափով հոռետես են: Դատող միտք ունեն և արդարասեր են, բայց միաժամանակ կովասեր և խնդիրներ հարուցանող: Համբերատար են, կարգապահ և գործի մեջ ճարպիկ:

Հոկտեմբերին ծնված կանայք անհանդարտ միտք ունեն, այդ պատճառով հեշտությամբ և անզգալի կերպով ստում են: մտադրաղ են և մղվում են խորհրդածությունների: Հաճելի են իրենց պշտասիրության և ազնիվ շարժումներով: Ճարպիկ են, նվաղ աշխատասեր, բայց դրամասեր: Չեն ներում ուրիշներին: Տղամարդիկ խելացի են, գործունյա, ծրագրեր կազմելու տրամադիր, հակամետ գաղտնի գործերի: Հաճույասեր են, սիրվում են իրենց խոսակցության և ազնիվ շարժումների շնորհիվ: Հանդուգն են և անվախ, բայց միաժամանակ խոհեմ և զգուշ: Գիտեն ծածկել իրենց մտադրությունները: Անկախ մտածելակերպի տեր են:

Նոյեմբերին ծնված կանայք խելոք են, անհանդարտ, խանդավառվող և հետաքրքիր, բայց քիչ հոռետես: Աշխույժ են և տպավորվող, ինքնիշխան և ըմբոստանալու պատրաստ: Շատ հնազանդ են այն մարդկանց հանդեպ, ովքեր հասկանում են իրենց: Աշխատասեր են, ճարպիկ, հրամայելու ընդունակ և մեծամիտ: Տղամարդիկ աշխույժ են, խանդավառվող, լավ դատողության տեր: Օժտված են ուժեղ կազմվածքով և սպորտի սիրահար են: Շատ նախանձախնդիր են իրենց արժանապատվության: Թեև հակամետ են ինքնիշխանության, բայց կարգապահ են և արդարամիտ, որովհետև գիտեն երևույթները ճշգրիտ ըմբռնել: Ցուցամուլ են և հաճախ իրենց ուժերը վատնում են սաստիկ գործունեության: Ընդունակ են հարատև աշխատանքի, նախաձեռնող են և խոհեմ:

Դեկտեմբերին ծնված կանայք գեղեցիկ են և լավ կազմվածքի տեր: Պճնամուլ են, թեթևամիտ: Զգայուն են իրենց ընծայված պատիվների նկատմամբ, հաճոյասեր, գորովալիր: Երիտասարդ տարիքում շատ երկշոտ են, բայց հետո դառնում են հպարտ, գործնական, համարձակ, ճարպիկ և խորամանկ: Հակամետ են բարձրանալու և փայլելու: Ամուսնական կյանքում խանդոտ են, բայց գիտեն այդ զգացումը թաքցնել: Տղամարդիկ գործնական են և փառասեր: Պատրաստ են ամեն բան անել հաջողության հասնելու և բարձրանալու համար: Սեր ունեն քաղաքականությանը զբաղվելու: Զննող են և խոհեմ: Ուսումնասեր են և համառ աշխատող: Ծնթակա են բախտի հանկարծակի փոփոխություններ:

Սփյուռքում առանձին հաստատություններ օրացույցներ են տպագրում և պրոպագանդում իրենց հաստատությունը: Բեյրութի հայ կույրերի և խուլ-համբերի հաստատության 1969-ի օրացույցում կարգում ենք. «Հայ կույրերու և խուլ-համբերու հաստատության պատմությունը կը սկսի այն կուրանոցով, զոր Մերձավոր Արեւելքի Ամերիկյան նպաստամատուցը հիմնած էր Ղազիր գյուղի մեջ, Լիբանան, 1926-ին այս կուրանոցին հոգատարությունը ստանձնեց Զվիցերիայի Հայասերներու միությունը և 1946-ին՝ գործը փոխադրվեցավ իր ներկա վայրը՝ Պուրճ Համուտ: Այս վերջին տարիներուն՝ խուլ, դժվար լսողներու և մտքով տկար պզտիկներու համար մասնավոր դասարաններ կազմված են: Ներկայիս հաստատությունը կրադկանա հետևյալ բաժիններեն. գիշերօթիկ բաժին՝ աշակերտներու և շափահաս աշակուղիներու համար. խուլ և դժվար լսող աշակերտներ (գիշերօթիկ և ցերեկօթիկ). մտքով թերաճ աշակերտներ (գիշերօթիկ և ցերեկօթիկ). աշակուղի գործավորներ, որոնք վրձիններ, փայտի զանազան առարկաներ և

եղեգև կողովներ ու կարասիներ կպատրաստեն: Աշխատանքները մնալուն արհեստ կտրվեցնեն աշաղուրկ խողանակագործներուն, կողով հյուսողներուն և աթոռ շինողներուն: Մոտավորապես 45 աշաղուրկ գործավոր տնականորեն կաշխատին: Տարեկան գործառնութունը մոտավորապես 156 հազար լիբանանյան ոսկի է (55 հազար դոլար)»:

Նոր Զուղայում տպագրվող 1969-ի գրականի օրացույցը տպագրել է վիճակագրական մի աղյուսակ, որով կարելի է պատկերացում կազմել նոր Զուղայի հայության մասին:

### ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՈՒԹ ԹԱՂԵՐԻ ՀԱՅԵՐԻ ԾՆՈՒՆԴԸ, ՊՍԱԿԸ ԵՎ ՄԱՀԸ

1967-ի նոյեմբերի 1-ից մինչև 1968-ի հոկտեմբերի 1-ը

| Թաղ            | Ծնունդ | Պսակ | Մահ |
|----------------|--------|------|-----|
| 1. Մեծ Մեյդան  | 16     | 12   | 10  |
| 2. Փոքր Մեյդան | 12     | 2    | 4   |
| 3. Հակոբջան    | 27     | 9    | 6   |
| 4. Զարսու      | 19     | 11   | 9   |
| 5. Ղարազել     | 4      | —    | —   |
| 6. Քոչեր       | 14     | 8    | 6   |
| 7. Դավրեժ      | 25     | 4    | 7   |
| 8. Երևան       | 6      | 1    | 2   |
| Ընդամենը       | 123    | 47   | 44  |

Փարիզի Սուրբ Հովհաննես-Մկրտիչ մայր եկեղեցու 1969-ի տոնացույցը տպագրել է մի անվանացանկ, որի նպատակն է ֆրանսահայության շրջանում հայկական անձնանունների պահպանումը:

### ԱՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՔՆԵՐ

|          |          |
|----------|----------|
| Ազատ     | Արթուն   |
| Անդրանիկ | Ավետիս   |
| Արա      | Բարունակ |
| Արեգ     | Գառնիկ   |

Գարեգին  
Գեղամ  
Եզնիկ  
Եղիշե  
Երվանդ  
Դարև  
Զավեն  
Զուլալ  
Թորգոմ  
Խաժախ  
Կարապիտ  
Կոմիտաս  
Համազասպ  
Հայկ  
Մասիս  
Մեսրոպ

Մուշեղ  
ՄՀԼԲ  
Ներսես  
Շահե  
Ռսկան  
Պատրիկ  
Սահակ  
Սեպուհ  
Վաղդեն  
Վահագն  
Վահե  
Վարդան  
Վարուժան  
Տիգրան  
Օշական  
Օշին

#### Իգական անուններ

Աղգանույշ  
Ալթեմնիկ  
Անթառամ  
Աստղիկ  
Արաքսի  
Արփինե  
Գայանե  
Գոհար  
Զարուհի  
Զեփյուռ  
Զվարթ  
Թադուհի  
Թալին  
Լուսինե  
Հայկուհի  
Հեղինե  
Հեղնար  
Հոփսիմե  
Հրանուշ

Մարալ  
Մելինե  
Հասֆիկ  
Նեկտար  
Շաքե  
Շնորհիկ  
Շողակաթ  
Շուշան  
Պայծառ  
Պերճուհի  
Սեդա  
Սևան  
Սիրարփի  
Սոսի  
Վարդուհի  
Վահանուշ  
Տիրուհի  
Ցուլինե  
Քնարիկ



Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո օրացույցները նոր ձև ու բովանդակություն ստացան: Երեւանում սկսեցին լույս տեսնել պատի ու սեղանի օրացույցներ: Ուշագրավ է, որ հայ սովետական առաջին պատի օրացույցները պատկերազարդել է աշխարհահռչակ դեղանկարիչ Մարտիրոս Սարյանը: «Լույս տեսավ 1924 թ. պատի հատվածական օրացույցը: Օրացույցը ունի 4 տեսակ տակտակ—Լենինի, Կ. Մարքսի և Ստ. Շահումյանի նկարներով: Տախտակները նկարել է Մ. Սարյանը» (տե՛ս «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, Երևան, 1923, դեկտ. 26, № 289): Երևանյան օրացույցները տարեցտարի դարձել են հետաքրքրական, բազմազան, բովանդակալից: «Հ. Ս. Խ. Հ. պետական հրատարակչություն: Լույս տեսավ 1925 թ. պատի օրացույցը. տախտակը՝ ութ տեսակ—Բանվոր գյուղացիությունը» (վիճատիպ), Ընկ. Ընկ. Վ. Ի. Լենինի, Ստ. Շահումյանի, Ա. Մյասնիկյանի, Լուկաշինի, Ա. Համբարձումյանի, Ա. Հովհաննիսյանի և Ա. Մուվյանի նկարներով» (տե՛ս «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, Երևան, 1925, հունվարի 1):

Հայ սովետական օրացույցները սոցիալիստական իրականության ծնունդ են: Նրանք իրենց ստեղծման հենց առաջին տարիներից դեն նետեցին եկեղեցական տոներն ու սրբերի վարքագրությունները, առասպելախառն զրույցներն ու աստվածաշնչային քաղվածքները և տոմարական պարզ տվյալների հետ սկսեցին ընթերցողներին հաղորդել տեղեկություններ Հոկտեմբերյան ու Նոյեմբերյան հեղափոխությունների, Լենինի ու հայ լենինյանների, սովետական տոների, աշխարհի մեծ մտածողների, գրողների, արվեստագետների, սոցիալիստական շինարարության նվաճումների մասին: Հայ սովետական օրացույցներն, այսպիսով, դարձան յուրատեսակ փոքրիկ տարեգրություններ, որոնք առատ տեղեկություններ են պարունակում սովետական պետության անցած ճանապարհի, սովետական ժողովուրդների մեծ հաղթանակների մասին:

Մեր ժամանակներում տմենատարածված հայկական օրացույցը 1922 թվականից Երևանում լույս տեսնող պատի օրացույցն է: 1972-ին այն լույս է տեսել 400.000 տպաքանակով: Դա ամենաբարձր տպաքանակ ունեցող հայերեն գիրքն է Հակոբ Մեղապարտի ժամանակներից մինչև մեր օրերը: Եթե որևէ մեկը փորձի կազմել Սովետական Հայաստանի 1920—1973 թվականների տոն-տեսական ու մշակութային կյանքի նոթագրությունը՝ ապա նա կարող է դա անել թերթելով երևանյան պատի օրացույցի այդ տարիների համարները: Այնտեղ նա կարող է գտնել ընդհանրաց-

ված թվեր ու տեղեկություններ հանրապետության դուրստնա-  
ստության ու արդյունաբերության մասին, տարբեր ժամանակներում  
շարք մտած նորակառույցների նկարագրություններ: Այդ օրա-  
ցույցներում 1922—1972-ին տպագրվել է համաշխարհային, սո-  
վետական և հայ բանաստեղծների 1221 ստեղծագործություն:  
Բանաստեղծությունների այդ մեծ փունջը յուրատեսակ պատկե-  
րացում է տալիս, թե հայ սովետական ընթերցասրահում առանձին  
տարիներին ինչ հարգ է ունեցել այս կամ այն բանաստեղծությունը:  
Երևանյան պատի օրացույցները Սովետական Հայաստանի անցած  
ճանապարհի ամենասեղմ հիշատակարաններն են: 1973-ի պատի  
օրացույցում «Հայկական աստմայինը» փոքրիկ հաղորդագրու-  
թյան մեջ նշվում է, որ Արարատյան հարթավայրում վեր է խոյա-  
նում մի նոր քաղաք, որի հիմքերը դրվել են 1971-ին: Այստեղ  
կառուցվում է հայկական աստմային էլեկտրակայանը, որն ունե-  
նալու է 815 հազար կիլովատ կարողություն: Նույն տարվա օրա-  
ցույցում հաղորդվում է, որ Երևանի փորձնական «Հիդրոհաղոր-  
դակ» գործարանի պոմպերն ու հիդրավլիկ կարգավորիչ-փական-  
ները առաքվում են ՍՍՀՄ տարբեր քաղաքներ և արտասահմանյան  
37 երկրներ: Մի այլ հաղորդագրության մեջ նշվում է, որ Սովե-  
տական Հայաստանի ընդերքը այժմ հետախուզում է 1500 երկ-  
րարան:

1948 թվականից Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հանրա-  
պետական գրադարանը հրատարակում է «Նշանավոր և հիշարժան  
տարեթվերի օրացույց»-ը: Սա օրացույցային արժեքավոր հրա-  
տարակություններից է, որն ամփոփ տվյալներ է տալիս ամենամ-  
յա նշանավոր իրադարձությունների, հիշարժան տոների ու հո-  
բելյանների մասին, որոնք ուղեկցվում են ընդարձակ մատենագի-  
տությամբ և վավերագրական քաղվածքներով: Այսպես. օրացույցի  
1971-ի № 3-ում տպագրված է «Հայրենադարձություն սփյուռքից»  
բաժինը՝ նվիրված հետպատերազմյան տոնադարձի 25-ամյակին:  
Ընդարձակ հոդվածին հաջորդում են հետևյալ հետաքրքրական  
թվերն ու փաստերը.

Առաջին անգամ Բյուզանդիայի հայ գաղթականության մասին  
տեղեկություն հաղորդել է 7-րդ դարի պատմիչ Սեբեոսը:

9—10-րդ դարերում Բյուզանդիայի հայկական խոշոր գաղթ-  
օջախներից է Կոստանդնուպոլիսը:

Հայկական հողերը գրավելու իր առաջին փորձը Բյուզանդիան  
սկսել է Տարոնից:

Հայ բնակչության զանգվածային առաջին գաղթը դեպի

Վրաստան տեղի է ունեցել 703 թվականին: Հաջորդ խոշոր գաղթը՝ 744 թվականին: Այդ մասին մեզ տեղեկություն է հաղորդում Ղևոնդ պատմիչը:

Հայ-վրացական մշակութային շփումների առաջին փուլը համարվում են 5—8-րդ դարերը, իսկ շփման ասպարեզը՝ ստորին Քարթլին և Պաղեստինի հայ-վրացական գաղթօջախները:

Ռուսների մասին հայ մատենագրության մեջ առաջին կոնկրետ հիշատակությանը մենք հանդիպում ենք 10-րդ դարի պատմիչ Մովսես Դասխուրանցու «Պատմություն Աղուանից» աշխատության մեջ:

1235 թ. Անիի գրավման ժամանակ քաղաքից դուրս եկած գաղթականությունը բազկացած է եղել 40.000 հոգուց:

Անիի գաղթականությունը Մերձվոլգյան Բուլղարիա է եկել 1299 թ. և հեռացել 1330 թվականին:

Մերձվոլգյան երկրամասում հայկական նոր գաղթօջախներ ստեղծվեցին 17-րդ դարում: 16—18-րդ դարերում Վոլգան հայ առևտրականների համար այնքան բանուկ մի ճանապարհ դարձավ, որ այն կոչվում էր Հայկական ճանապարհ:

Ղրիմը հայկական զանգվածային խոշոր գաղթականություն է ընդունել Մերձվոլգյան երկրամասից 1330 թվականին: Հայ գաղթականության օջախներից են Կաֆան, Սուրխաթը, Սուլդան, Խերսոնեսը, Կազարաթը:

1778 թ. ապրիլի 23-ին հայտարարվում է արտագաղթի մասին: Հայերը թողնելով իրենց սեփական տները, այգիները, իրենց սիրելիների գերեզմանները, երեք խմբով գաղթում են Նոր Նախիջևան: Առաջին խումբը գաղթում է 1778 թվականի հուլիսի 18-ին, երկրորդը՝ օգոստոսի 20-ին, իսկ երրորդը՝ սեպտեմբերի 28-ին: Գաղթը կազմակերպում է զորավար Սուվորովը:

Եգիպտական հողի վրա հաստատված առաջին հայ հատվածի մասին մեզ հասած հավաստի տեղեկությունը վերաբերում է առաջին դարին՝ մեր թվարկությունից առաջ: հռոմեական Սալյուստոս պատմիչը հայտնում է, որ Եգիպտոսում բավականին թվով հայեր են ապրում և իշխող դիրքեր ունեն:

11—12-րդ դարերում Եգիպտոսի հայ գաղթօջախի բնակչության թիվը հասել է 30.000 հոգու, ըստ հայ ժամանակագիր Մատթեոս Ուեհյեցու: Միայն Կահիրեի Հյուսիյն Հարիթու թաղամասում, ըստ Մագրիզի տեղեկության, բնակվելիս է եղել 7.000 հայ:

Պետական Մատենադարանում է գտնվում Եգիպտոսի Կահիրե քաղաքում 1415 թվականին գրված մի ձեռագիր, որը նվեր է

տրված Երուսաղեմից Եգիպտոսի հայ գաղթավայրը այցելության եկած Պողոս եպիսկոպոսին:

Եգիպտոս են եկել 1600 թվականին Զալալիների ապստամբության ժամանակ 200 տուն հայեր, որոնք ապրում են Հայկական կոչվող թաղամասում:

11—12-րդ դարերում եգիպտահայերի կառուցած հուշարձաններից կանգուն է մնացել Սոհակ քաղաքի մոտ գտնվող Սպիտակ կոչվող վանքը:

Հնագույն հայկական գաղթօջախը Հաբեշստանում, ըստ պատմական աղբյուրների, ստեղծվել է 7-րդ դարում:

17—18-րդ դարերում սպիտակամորթ ժողովուրդներից Հաբեշստան մտնելու իրավունք են ունեցել միայն հայերը և հույները:

Հայ-հաբեշական գրական կապերի ստեղծման և զարգացման գործում առանձնապես խոշոր գործ են կատարել «Հայ կղզին» Հաբեշստանում և հայկական վանական գաղթօջախը՝ Երուսաղեմում:

Լեհահայերն ինքնավարության իրավունք առաջին անգամ ստացել են Կամենեց քաղաքում 1350 թվականին:

Լեհաստանի հնագույն և խոշոր գաղթօջախը գտնվել է Լվով քաղաքում: Լվովը հայ մատենագրության մեջ հայտնի է մի քանի անուններով՝ Լվով, Իլով, Լեոպոլիս և Լիմբերգ:

Մ. Բժկյանը 1820 թվականին Լեհաստանում շրջած ժամանակ հայ բնակչության է հանդիպել հետևյալ վայրերում. Լվովում՝ 100 տուն, Ստանիսլավում՝ 70 տուն, Լիսցյավում՝ 60 տուն, Բերժանում՝ 60 տուն, Դիսմինիցում՝ 42 տուն, Սենյադինում՝ 70 տուն, Լոդզինքայում՝ 100 տուն, Գուբնեքում՝ 20 տուն:

Ֆրանսիացի հայագետ Ժակ Մորգանը գտնում է, որ Լեհաստանում ապրելիս է եղել 200.000 հայություն:

Լեհահայ գրչության օջախներից մեկ համարվում է Դեբուզին մատյանների թղթի այժմ հաշվվում է մոտ 200, որի կեսը գտնվում է Հայկ. ՄԱՀ-ի գերատարածության մատենադարանում, իսկ մյուսները ցրված են աշխարհի տարբեր ձեռագրական ժողովածուների մեջ:

Առաջին խոշոր գերեվարությունը Հայաստանից դեպի Պարսկաստան կատարել են սելջուկները 1048 թվականին, որոնք ըստ Մատթեոս Ուռհայեցու տեղեկության, կոտորել են 150.000 հոգի:

11—12-րդ դարերում պարսկահայ գաղթօջախները հիմնականում տեղավորված են եղել Պարսկաստանի հյուսիսային (Ատրպատականի) և հարավային (Ապահանի) շրջաններում: Ստվարա-

Թիվ գաղթօջախներ են ստեղծվել Թավրիզում, Սուլթանիեում, Մարանդում, Խոյում, Սալմաստում, Մարաղայում:

14—15-րդ դարերում Թավրիզում այնքան շատ հայեր են կենտրոնացած եղել, որ 1345 թ. գրված հայկական մի ձեռագրի հիշատակագիր՝ Ներսես Դրիշը, Թավրիզը համարում է ոչ միայն ֆարսերի (պարսիկների), այլև հայերի մայրաքաղաք:

Շահ Աբասն Արևելյան Հայաստանը սանրում, Պարսկաստան է քշում մոտ կես միլիոն բնակչություն:

Նոր Զուղայի հայ գաղթականները փառուցում են ավանը Սպահանի հետ միացնող Զենգարանի նշանավոր կամուրջը, որը մնում է մինչև այժմ և համարվում հայ գաղթականության առաջին ու լավագույն հուշարձանը պարսկական հողի վրա:

Իտալիան հայ զանգվածային գաղթականություն ընդունել է Թրակիայից 9—11-րդ դարերում: 18-րդ դարի սկզբներում հայկական գաղթօջախներ են գոյություն ունեցել Հոմոմում, Վենետիկում, Ճենովայում և Պիզայում:

1717 թ. սեպտեմբերի 8-ին Մխիթարյանները պաշտոնապես հաստատվում են Վենետիկի սենատի հատուկ որոշումով քաղաքամերձ Ս. Ղազար կղզում:

Այժմ Մխիթարյանների Մատենադարանը, հայ ձեռագիր մատյանների քանակով, երկրորդ խոշոր ժողովածուն է աշխարհում:

1549 թ. հայ գաղթականության մի հոսանք եկել է Բուլղարիա Նախիջևանից, Շոռոթից և Կարբիից ու բնակություն հաստատել • Շումենում:

1551 թվականին հայ գաղթականության մի այլ խումբ եկել է Ռումինիայից և հաստատվել Կոստանցայում և Հաջիօղլու-բազարում:

1606—1607 թվականներին հայկական մեծ գաղթականություն է եկել Բուլղարիա՝ Շահ Աբասի Պարսկաստան տարված գաղթականներից:

Առաջին գաղթականությունը Ռումինիայում եղել է 10—11-րդ դարերում:

19-րդ դարի սկզբում, Ռումինիայի Տրանսիլվանիա երկրամասում ապրել է մոտավորապես 10.000 շունչ հայություն:

Առաջին հայկական տպարանն Ամստերդամում հիմնել է Մատթեոս Մարեցին 1660 թվականին:

16-րդ դարում՝ մեծ մոնղոլական թագավորության շրջանում,

Հնդկաստանում սկսում են երևան գալ հայկական առաջին գաղթ-  
օջախները: Հնդկահայ հնագույն և բնակչաշատ գաղթօջախ-  
ներից է Ագրան, որն ավելի է մեծանում Շահ Աբասի բռնագաղթից  
հետո, մասնավանդ 18-րդ դարում:

«Հայաստանի կոշնակ»-ի մեջ հրատարակված վիճակագրու-  
թյան համաձայն, Սիրիայում և Լիբանանում 1925 թվականին ապ-  
րելիս է եղել շուրջ 150.000 հայ բնակչություն, որից՝ Հալեպում՝ և  
շրջակայքում՝ 90.000, Բեյրութում՝ 18.000, Դամասկոսում՝ 8.000,  
Իսկանդերիսում՝ 8.000, Լիբանանի մեջ ցրված՝ 6.000, Պատրո-  
սում՝ 3.000, ևն:

Հայ գաղթականության առաջին հոսանքը իրաք է հասել 17-րդ  
դարի սկզբներում Շահ Աբասի բռնագաղթից հետո:

19-րդ դարի երկրորդ կեսում հիմնվել է Սուդանի հայկական  
գաղթավայրը: Առաջին գաղթականները Սուդան են եկել Արաբ-  
կիրից և Ակնից ու բնակություն են հաստատել խարթումում: Այժմ  
խարթումում և Օմդուրմանում 700 հայ է ապրում:

1895—1896 թվականներին Համիդյան ջարդերից հետո Թուր-  
քիայից Հունաստան է եկել զանգվածային ամենախոշոր գաղթա-  
կանությունը:

Հունահայ կենտրոնը հանդիսացել է Աթենքը: 1923 թվակա-  
նին Հունաստանում եղել են 17.520 հայ որբեր:

Մակեդոնիայում ամենամեծ հայկական գաղթօջախն է եղել  
Սալոնիկը:

1922 թվականին հունական բանակի նահանջի և Թուրքական  
իշխանությունների ձեռնարկած հայ բնակչության նոր տեղահա-  
նությունների ու կոտորածների հետևանքով ամենից խոշոր հայ  
գաղթականությունը Թուրքիայից Բուլղարիա է եկել, որի թիվը  
հասել է 52 հազարի:

1936 թվականին Ֆրանսիայում հայ գաղթականության թիվը  
հասնում էր մինչև 70.000-ի:

Լոնդոնի հայերը հավաքված են եղել աշխարհի բոլոր մա-  
սերից՝ Պոլսից, Ջմյուռնիայից, Կալկաթայից, Ճավայից, Վանից,  
Ղարաբաղից, Բաղդադից, Պարսկաստանից և այլ վայրերից:

Ներկայիս ինդոնեզահայության թիվը չի անցնում 200-ից:

1816 թվականին Ամերիկա են եկել առաջին հայ գաղթա-  
կանները:

Ամերիկայի հայ գաղթականության առաջին համախմբումը և  
առաջին հայ գաղթօջախի հիմնումը տեղի է ունեցել Ուատրում:

1921—1936 թվականներին արտասահմանից Հայաստան է ներգաղթել շուրջ 40.000 հայ բնակչություն:

1946—1950 թվականներին արտասահմանից Հայաստան է ներգաղթել շուրջ 100 հազար հայ:

«Նշանավոր և հիշարժան տարեթվերի օրացույց»-ը մշակել է նյութերը մատուցելու իր սեփական ձևը: Նախ տալիս է որևէ նյութի ամփոփ նկարագիրը, հետո՝ մեջբերումներն ու քաղվածքները և մատենագիտությունը: Եվ այս բոլորը արվում է պատշաճ մակարդակով՝ օգտվելով գրադարանի ընձեռած մեծ հնարավորություններից: Օրացույցի 1971-ի № 1-ում տպագրված են Զեկ Լոնդոնի ծննդյան 95-ամյակին նվիրված մի շարք նյութեր: Դրանց մեջ ուշագրավ են Զ. Լոնդոնի մտքերից բերված քաղվածքները: Ահավասիկ. «Ես հավատում եմ սխտեմատիկ աշխատանքի անհրաժեշտությանը և երբեք չեմ սպասում ներշնչանքի: Բնավորությամբ ես ոչ միայն փնթի ու թափթփված մարդ էի, այլև մեկամաղձոտ: Բայց իմ մեջ կարողացա հաղթահարել թե մեկը և թե մյուսը: Ինձ մոտ ուժեղ դրսևորվեց կարգապահությունը, որի անհրաժեշտությունն զգացել էի նավաստի եղած ժամանակ»:

«Աշխատանքի վեհությունը. ահա թե ամենից շատ ինչն է ինձ հրապուրել աշխարհի երեսին»:

Աշխատանքն ամեն ինչ է. աշխատանքը և արդարացում է, և փրկություն»:

«Մարդը գիտելիքներ է ձեռք բերում երկու ճանապարհով. ընդհանրացնում է կյանքի փորձը և յուրացնում է ուրիշների կատարած ընդհանրացումները»:

«Զի կարելի ինքնատիպ դառնալ ուրիշի հետևից գնալով, ուրիշի ինքնատիպության ճառագայթներն անդրադարձնելով, թեկուզ այդ ուրիշը փայլուն տաղանդ ունենա»:

«Եթե ձեր մտքերն արժեքավոր են, ձեր գրվածքներն էլ արժեքավոր կլինեն: Բայց եթե ձեր շարադրանքը անհետաքրքրական է, դա նրանից է, որ անհետաքրքրական են ձեր մտքերը. եթե ձեր շարադրանքը սահմանափակ է, ապա այն պատճառով, որ դուք ինքներդ էլ սահմանափակ եք»:

«Գրողը պետք է իր ձեռքում պահի կյանքի զարկերակը, և կյանքը փտա նրան իր սեփական աշխատանքի փրկասփայլությունը, որի օգնությամբ նա, իր հերթին, փակսի գնահատել, կռադատել ու աշխարհին բացատրել կյանքը: Հենց այդ անձնական կնիքը, իրերի նկատմամբ ունեցած անձնական հայացքներն էլ հայտնի են անհատականությունն անունով»:

«Ժամանակ: Երբ խոսում են ժամանակի պակասության մասին, նկատի ունեն նրանից օգտվելու անշնորհությունը»:

1970 թվականի № 1-ում ուսմ մեծ գրող Ա. Պ. Չեխովի ծննդյան 110-ամյակին նվիրված հոդվածում օրացույցը այսպիսի բաժին ունի՝ «Չեխովը գրականության և լեզվի մասին»: Այստեղ տրված են չեխովյան իմաստուն մտքերից մի քանիսը. «Բառերի ու կապակցությունների քանակը անմիջականորեն կախված է պատկերացումների ու տպավորությունների գումարից, առանց այս վերջինների չեն կարող լինել ոչ հասկացություններ, ոչ սահմանումներ, ուստի և լեզուն հարստացնելու առիթներ»:

«Ընդհանրապես նախադասությունը, որքան էլ նա գեղեցիկ ու խորը լինի, ազդում է միայն անտարբերների վրա, սակայն միշտ չէ, որ կարողանում է բավարարել նրանց, ովքեր երջանիկ են կամ դժբախտ»:

«...Հակիրճությունը տաղանդի քույրն է:

...Նախադասությունը պետք է կերտել. դա է արվեստը: Պետք է դեն շարտել ավելորդը, նախադասությունը մաքրել ռեպտ կարելվույն-ներից, «օգնություն»-ներից, հոգ տանել նրա երաժշտականությանը»:

Սովետական Հայաստանում տպագրված հայկական օրացույցներն աչքի են ընկնում նյութերի բազմազանությամբ ու փաստերի ճշգրտությամբ:

\*

\* \*

Ամփոփելով մեր շարադարանը՝ ասենք, որ հայկական տպագիր օրացույցները հայ տպագիր խոսքի շուսումնասիրված, ամենախոսքային բնագավառն է, հայ մշակույթի պատմության փոքր, բայց մինչև այժմ անտեսված մի մասը: Եթե թեմատիկ առումով հնարավոր լիներ օրացույցներից քաղել առանձին բնագավառների վերաբերող նյութերը, ապա դրանցով վարելի էր հարստացնել հայ ժողովրդի պատմության, Հայաստանի աշխարհագրության, ազգագրության, հայոց լեզվի, գրականության, արվեստի և մշակութային այլ ճյուղերի վերաբերյալ փաստական գրականությունը: Սույն մատենագիտությունը կօգնի այդ գործին:

Տպագիր խոսքի ոչ մի տեսակում նյութերն այնքան ցրված չեն, որքան օրացույցներում: Բերենք մի օրինակ: Հայ գրական



մեծերի վերջին խոսքերը ամփոփված շենք գտնի ոչ մի տեղ: Ահա  
դրանցից հինգը.

— Ժամանակ շունիմ.

Պետրոս Դուրյան

— Զիս մի մխիթարեք, ցեղիս ապագան երազելով պիտի  
մեռնիմ...

Դանիել Վարուժան

— Ղուլաղ կացեք.

Հովհաննես Թումանյան

— Գտա...

Դեռենիկ Դեմիրճյան

Ինքն իրեն՝

— Ես չեմ ուզում քո քամանչի պես տեսնել անունը քո կո-  
տորված...

Նաիրի Զարյան

Հայ նշանավոր մեծերի այս հինգ խոսքերը տարբեր տարի-  
ների տպագրվել են տարբեր հինգ մայրցամաքներում լույս տե-  
սած հայկական օրացույցներում:

Սույն մատենագիտությունը կազմելու ժամանակ օգտվել ենք  
Երևանի խոշոր գրապահոցներում գտնվող օրացույցներից ու տա-  
րեցույցներից: Այս աշխատանքում մեզ օգնել են Երևանի  
Ալ. Մյասնիկյանի անվ. հանրապետական գրադարանի աշխատող-  
ներ Արտավազդ Ավագյանը, Ժենյա Հարությունյանը, Վարդուհի  
Խաչատրյանը, Գուրգեն Օհանյանը, Արփիկ Բաբլոյանը, Քնարիկ  
Սիմոնյանը, Լաուրա Խաչատրյանը, Մարգարիտ Շիլաջյանը: Մաս-  
նագիտական խորհուրդներ է տվել և իր անձնակազմ գրադարանի  
օրացույցների ու տարեցույցների մատենագիտությունը ուղարկել  
բուլղարահայ անվանի մատենագիր Ներսես Գասպարյանը: Բազ-  
մաթիվ օրացույցներ ու տարեցույցներ են տրամադրել բանասեր  
Խաչիկ Մամվելյանը (Երևան), բանասիրական գիտությունների  
դոկտոր Արտաշես Մարտիրոսյանը (Երևան), անվանի աշխարհագր.,  
բժշկական գիտությունների թեկնածու Ռուպեր Զեպեճյանը (Հա-  
լեպ), պատմաբան և ուսուցիչ Երվանդ Քասունին (Քեյրթ),  
տպագրիչ-հրատարակողներ Փարամազ Տոնիկյանն ու Հաննեսյան  
եղբայրները (Քեյրթ), բժիշկ, բանաստեղծ ու բանասեր Թորոս  
Թորանյանը (Հալեպ), խմբագիրներ Ավետիս Ալիքսանյանը (Փա-  
րիզ), Ավետիս Ցափուշյանը (Կահիրե) և ուրիշներ, որոնց հայտ-  
նում ենք մեր խորին երախտագիտությունը:

Մատենագիտության մեջ հաշվառել ենք Երևանի խոշոր գրապահոցների օրացույցներն ու տարեցույցները:

| Գրապահոցի անունը | Քանի անուն օրացույց ու տարեցույց ունի | Քանի տարվա |
|------------------|---------------------------------------|------------|
| ՀԳ               | 312                                   | 1397       |
| Մ                | 191                                   | 633        |
| ԳԱԹ              | 111                                   | 338        |
| ԷՃԳ              | 56                                    | 268        |
| ԱԿԳ              | 49                                    | 199        |
| ՀՊԹ              | 47                                    | 135        |

Մանոթ. «Քանի տարվա» աղյուսակի մեջ մտնում են Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական և ինկո-Ապոբ անվան մանկական հանրապետական գրադարանների հրատարակած «Նշանավոր և հիշարժան տարեթվերի օրացույց»-ների բոլոր համարները մեկական տարվա հաշվով:

Այս գրքում ներկայացված են 851 օրացույցներ և տարեցույցներ (ընդհանուր թվահամարի 148-ը, 412-ը, 543-ը և 740-ը ունեն կրկնակ համարներ): Ընդհանուր թվահամարի 209-ին հաջորդում է 211-ը (210-ը չկա): Մեր շարադրանքի սկզբում ասվեց, որ 460 տարում (1513—1972) լույս են տեսել հազարից ավելի օրացույցներ և տարեցույցներ: Գրքում տրված է 850-ը: Դա այն է, ինչ հնարավոր է եղել տարիների ընթացքում հավաքել ու մատենագրել: Հաճելի կլիներ, իհարկե, որ մատենագիտությունը լիներ ամբողջական ու անթերի: Օրացույցների համար դա անկարելի է, որովհետև, ինչպես ասվեց, նրանց մի մասն այլևս չկա: Ավելին. մի քանի տարի հետո դժվար կլինի գտնել մեր օրերում սփյուռքում սպազրվող շատ օրացույցներ: Նրանց հրատարակողների պարտքն է գտնել մեկական օրինակ ուղարկել Երևանի գրապահոցներին: 2012 թվականին, ընդամենը 36 տարի հետո, կնշվի հայ տպագրության 500-ամյակը: Պետք է այժմվանից հոգ տանել, որ հայ մշակույթի այդ նշանակալից հոբելյանին ընթերցասիրահ մտնեն հայ տպագիր խոսքի ամբողջական մատենագիտական գրքերը, այդ թվում՝ օրացույցների և տարեցույցների մատենագիտությունը:

Իհարկե այս մատենագիտությունն ավելի կշահեր, եթե հնա-

րավոր լինելու մատենագրման ենթարկել Վենետիկի, Վիեննայի, Փարիզի, Երուսաղեմի, Նոր Զուլայի, Բեյրութի և արտասահմանյան ուրիշ վայրերի հայկական գրապահոցների օրացույցներն ու տարեցույցները:

Մատենագիտական ի՞նչ սկզբունքներ են կիրառված այս գրքում:

1. Օրացույցներն ու տարեցույցները տրվում են ըստ ժամանակագրության:

2. Տրվում են օրացույցների ու տարեցույցների առավել հայտնի անվանումները, ապա նշվում են բոլոր անվանափոխումները:

3. Նշվում են կազմողները, խմբագիրներն ու հրատարակողները: Ի տարբերություն մատենագիտական այլ գրքերի, այս աշխատության մեջ նշվում է, թե տվյալ խմբագիրը կամ կազմողը կոնկրետ որ տարվա օրացույցը կամ տարեցույցն է խմբագրել կամ կազմել:

4. Մինչև այժմ հայ մատենագիտական գրքերում շփոթել են օրացույցի հրատարակության տարին և որ տարվա համար հրատարակվելու թվերը: Բանն այն է, որ օրացույցներն ու տարեցույցների մեծ մասը սովորաբար լույս են տեսնում նախօրեին այն տարվա, որի համար նախատեսված է: Այսպես, Երևանում լույս տեսնող 1973-ի պատի օրացույցը տպագրվել է 1972-ին: Վերջինս հրատարակության տարեթիվն է, իսկ 1973-ը այն տարին է, որի համար լույս է տեսել օրացույցը, հետևապես պետք է գրել 1972 (1973-ի համար): Սա նշանակում է օրացույցը լույս է տեսել 1972-ին, այդ օրացույցը 1973 թվականի համար է:

5. Նշվում են հրատարակության վայրն ու տպարանը:

6. Օգտագործել ենք տպագրական սանտիմետրը, էջի լայնությունը բազմապատկելով բարձրության հետ: Բազմապատկման նշանը վկայում է, որ խոսքը շափի մասին է, հետևապես սանտիմետր բառը ամբողջական կամ հապավված ձևով օգտագործելն անիմաստ է:

7. Տրված են էջերը: Եթե օրացույցը կամ տարեցույցը լույս է տեսել մի քանի տարի, ապա տրվում են նվազագույն և առավելագույն էջերի թվերը՝ ի տարբերություն մինչև այժմ հայ պարբերական մամուլի մատենագիտական գործերի, որտեղ նշվում է տվյալ հրատարակության պատահական որևէ տարվա էջերի թիվը:

Գրքի վերջում տրված են օրացույցների և տարեցույցների ալբուրենական ցանկը, ըստ հրատարակության վայրերի ցանկը (ըստ ժամանակագրության), անձանունների ցանկը:

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՑԱՆԿ

ԱԿԳ—Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնականում  
գրադարան:

ԳԱԹ—Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի  
թանգարանի գրադարան:

ԷՃԳ—Էջմիածնի ճեմարանի գրադարան:

ԹՎՀ—Թվահամար:

ՀԳ—Երևանի ԱԼ Մյասնիկյանի անվան հանրապետական գրա-  
դարան:

ՀՊԹ—Հայաստանի պատմության թանգարանի գրադարան:

Հրատ.—հրատարակող, հրատարակություն:

Մ—Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան:

Տպ—տպարան, տպագրություն:

# 1 5 1 3

1. ԱՅՍ Է ՊԱՐԶԱՅՏՈՒՄԱՐ ՀԱՅՈՅ: Հրատ. Հակոբ Մեղապարտ: 1513 (1513-ի համար), Վենետիկ, տպ. D. I. Z. A.: 3,7×6,8: 118 էջ: Մատենադիպոյան մեջ սովորաբար կոչվում է պարզատումար:

ՀԿ 1513 (թվհ. 3623)  
Մ 1513 (թվհ. 1633, 640)  
ՀՊԹ 1513 (թվհ. 463)

# 1 5 6 5

2. ԽԱՌՆԱՅՓՆԹՈՒՐ ՏՈՒՄԱՐԻ, ԳԵՂԵՑԻԿ ԵՎ ՊԻՏԱՆԻ: Հրատ. Արզար Դպիր Թոխաթեցի: 1565 (1565-ի համար), Վենետիկ: 51×35, Մեկ մեծագիր էջ:

# 1 5 6 8

3. ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ: Հրատ. Արզար Դպիր Թոխաթեցի: 1568 (1568-ի համար), Կ. Պոլիս: 208 էջ: (Տես: «Շողակաթ» տարեգիրք, Ստամբուլ, 1967, էջ 12):

4. ՏՈՆԱՅՈՅ: Հրատ. Արզար Դպիր Թոխաթեցի: 1568 (1568-ի համար), Կ. Պոլիս: Այս «Տօնացոյց»-ի հիշատակարանում գրված է. «ՌԺԷ (1017+551=1568), Ի Կոստանդնուպոլիս նոր ստամփա գիր սահմանեցին, Ի հայրապետութեան տեառն Միքայելին էջմիածնի, Եւ Ի պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ տեր Հակոբին, ընդ հովանեալ սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն, ձեռամբ Խորվիրապեցի Առաքեալ արեղային, արհեստագործութեամբ Արզար Դպրին, Եւ իր թագադարմ Անտոնիոս Սուլթանշահ սարկաւագին, որոյ գրովին տպեալ տաճարացս յառաջ բերին» («Հանդես ամսօրյա», Վիեննա, 1911-ի դեկտեմբեր, էջ 741):

1 5 8 4

5. ՏՕՄԱՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ, Հրատ. Հովհաննես Տերգնցի և Սուլ-թանշահ Թոխաթեցի, 1584 (1584-ի համար), Հոռմ, տպ. Դոմինի-կոս Բազալի, 111 էջ:

Մ 1584 (թվ.հ. 30)

1 6 4 2

6. ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ, Հրատ. Խաչատուր Կեսարացի, 1642 (1642-ի համար), Նոր Զուղա, տպ. Ամենափրկիչ վանքի, 604 էջ:

ՀԳ 1642 (թվ.հ. 428)

Մ 1642 (թվ.հ. 417)

1 6 4 7

7. ԳԻՐՔ ՏՈՒՄԱՐԱՅ ՈՐ ԵՎ ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ ԿՈԶԻ, Հրատ. Հով-հաննես Զուղալեցի (Քթրենց), 1647 (1647-ի համար), Տեղապո-լիս (Նոր Զուղա), տպ. Ամենափրկիչ վանքի, 8,9×6, 84 էջ: (Տես՝ «Հասկ» ամսագիր, Բեյրութ, 1970, № 9—10, էջ 381—382):

1 6 6 8

8. ՏՕՄԱՐԱՅ ԳԻՐՔ ՀԱՅՈՅ, ՀՌՈՄԱՅԵՅՎՈՅ ԵՎ ՊԱՐԶԱՏՕ-ՄԱՐ, ԸՆԴ ՈՐՈՅ ԵՎ ՏԱՂ ՅՈՎԱՍՏՓՈԻ, ՄԱՐՄԱԽԱՂԱՅ ԵՎ ԵՐԱ-ԶԱՀԱՆ, 1668 (1668-ի համար), Ամստերդամ: 3,2×5,8, 36+260 էջ: Նույն տարում ունեցել է Ա և Բ տպագրություն:

ՀԳ 1668 (թվ.հ. 1029)

Մ 1668 (թվ.հ. 31)

1 6 6 9

9. ՏՕՆԱՅՈՅՅ, Հրատ. Ոսկան Երևանցի, 1669 (1669-ի հա-մար), Ամստերդամ: 273 էջ:

Մ 1669 (թվ.հ. 60)

10. ՏՕՆԱՅՈՅՑ, Հրատ. Ոսկան Երևանցի, 1669 (1669-ի համար), Ամստերդամ, 272 էջ:

Մ 1669 (թվ. 63)  
ՀՊԹ 1669 (թվ. 298)

1 6 7 1

11. ՏՕՆԱՅՈՅՑ, 1671 (1671-ի համար), Վենետիկ, տպ. Միքելանջելո Բարբոնի: (Տես՝ Թեոդիկ, «Տիպ ու տառ», Կ. Պոլիս, 1912, էջ 43):

1 6 7 3

12. ԳՐԳՈՒԿ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԱՊԱՋՈՐԴԵԱՆ, ՆԵՐՈՒՄ ԿԱՅ ՊԱՐՈՒՆԱԿԵԱՆՆԱԿ ՊԱՐԶԱՏՕՄԱՐ, ԼՈՒՄՆԱՅՈՅՑ ԵՎ ԱՅԼ ՄԱՆՐԱՄԱՆԱՐԱՐ ԲԱՆ: Հրատ. Ոսկան Երևանցի, 1673 (1673-ի համար), Մարսել, (Տես՝ Գ. Զարբհանալյան, «Հայկական մատենագիտություն», Վենետիկ, 1883, էջ 142):

1 6 7 5

13. ԳԻՐՔ ՎԱՅԵԼՈՒԶ ԵՎ ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՆՈՒՐՑ ՀԱՅԿԱՋՈՒՆԵԱՅ ԲԱՐԵՍԻՐԱՅ, ՅՈՐՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿԻ ԱՂԻՍԱԿ ԳՐՈՑ ՏԱՐԵԿԱՆԱՅ, ՊԱՐԶԱՏՕՄԱՐ ՄՇՏՆՋԵՆԱԿԱՆ, ՀԱՄԱԶԱՅՈՒԹԻՒՆ ԱՄՍՈՑՆ ԱԶԱՐԵԱՅ ԸՆԴ ՀՈՒՆԱՅ, ԱՍԱՅՈՒԱԾՔ ԽՈՂԵՄԱԿԱՆՔ ՀՆՈՑ ԽՄԱՍՏԱՍԻՐԱՅ ԵՎ ՍԿԶՐՈՒՆՔ ՀԱՄԱՐՈՂԱԿԱՆԻ ԱՐՈՒԵՍՏԻ, 1675 (1675-ի համար), Մարսել, տպ. Ս. էջմիածնի և Ս. Սարգսի,  $2,7 \times 4,8$ , 144 էջ:

ՀԳ 1675 (թվ. 1030)  
Մ 1675 (թվ. 230)

1 6 7 6

14. ԳՐԳՈՒԿ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԱՊԱՋՈՐԴԵԱՆ, ՅՈՐՈՒՄ ԿԱՅ ՊԱՐՈՒՆԱԿԵԱՆՆԱԿ ԼՈՒՄՆԱՅՈՅՑ ԵՎ ԱՅԼ ԲԱՆՔ ՅՈՑԺ ՊԵՏԱՆԻՔ ՄԵՐԱԶՆԵԱՅ ՀԱՅԿԱՋՈՒՆԵԱՅ ԵՎ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ, ՆԱԵՎ ԿՏԱԿ ՏԵԱՌՆ

ՈՍԿԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻՒ ՍԱԿՍ ԴԱՌՆ ՄԱՀՈՒԱՆ ԻԻՐՈՅ Ի ՊԱՏՃԱՌ  
ՏԻՐԱՆԵՆԳ ԵՐԻՑԻՈՅՆ ՉԹԱԴԷՈՍԻ ԵՐԵՒԱՆՅԻՈՅ, 1667 (1676-ի  
համար), Մաբսել, (Տես՝ Գ. Զարբհանալյան, «Հայկական մատե-  
նագիտութիւն», Վենետիկ, 1883, էջ 142)։

### 1 6 7 8

15. ՏՕՄԱՐԱՅ ԳԻՐՔ ՀԱՅՈՅ, ՀՌՈՄԱՅԵՅՎՈՅ ԵՎ ՊԱՐԶԱՏՕ-  
ՄԱՐ, ԸՆԴ ՈՐՈՅ ԵՎ ՏԱՂ ՅՈՎԱՍՍՓՈԻ, ՄԱՐՄՆԱԽԱՂԱՅ ԵՎ ԵՐԱ-  
ԶԱՀԱՆ, 1678 (1678-ի համար), Վենետիկ, (Տես՝ Գ. Զարբհանալ-  
յան, «Հայկական մատենագիտութիւն», Վենետիկ, 1883, էջ 676)։

16. ՏՕՆԱՅՈՅ, 1678 (1678-ի համար), Վենետիկ, տպ. Մի-  
քելանջեղո Բարբոնի, (Տես՝ Գ. Զարբհանալյան, «Պատմութիւն  
հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչ առ մեզ», Վե-  
նետիկ, 1895, էջ 134—135)։

### 1 6 8 5

17. ԳԻՐԳ ՏՕՄԱՐԱՅ ՀԱՅՈՅ, ԱԶԱՐԻԱՅԻ ԵՎ ՀՌՈՄԱՅԵՅՎՈՅ,  
ԸՆԴ ՈՐՍ ԵՎ ՊԱՐԶԱՏՕՄԱՐ, ԼՈՒՍՆԱՅՈՅ ԵՎ ԱՐԵԳԱԿՆԱՅՈՅ,  
1685 (1685-ի համար), Վենետիկ, տպ. Միքելանջեղո Բարբոնի  
320 էջ։

Մ 1685 (թվ. 1498)

ՀՊԹ 1685 (թվ. 650)

### 1 6 9 6

18. ՏՕՄԱՐԱՅ ԳԻՐՔ ՀԱՅՈՅ, ՀՌՈՄԱՅԵՅՎՈՅ ԵՎ ՊԱՐԶԱՏՕ-  
ՄԱՐ, ԸՆԴ ՈՐՍ ԵՎ ՏԱՂ ՀՈՎԱՍՍՓՈԻ, ՄԱՐՄՆԱԽԱՂԱՅ ԵՎ ԵՐԱ-  
ԶԱՀԱՆ, 1696 (1696-ի համար), Վենետիկ, տպ. Անտոն Բորտոլի,  
(Տես՝ Գ. Զարբհանալյան, «Հայկական մատենագիտութիւն», Վե-  
նետիկ, 1883, էջ 676)։

### 1 6 9 7

19. ՏՕՄԱՐԱՅ ԳԻՐՔ, ՊԱՐԶԱՏՈՄԱՐ ԸՍՏ ՀՌՈՄԱՅԵՅՎՈՅ,  
ՏԱՂ ՅՈՎԱՍՍՓՈԻ, ՄԱՐՄՆԱԽԱՂ ԵՎ ԵՐԱԶԱՀԱՆ, 1697 կամ 1698  
(1697-ի կամ 1698-ի համար), Կ. Պոլիս, տպ. Գրիգոր Մարգվանցի-



և Աստուածատուր դպիր: 15×9: 208 էջ: Հիշատակարան շունի: Այս գիրքն այժմ գտնվում է Ստամբուլի Ս. Խաչ դպրեվանքի մատենադարանում: (Տես՝ «Շողակաթ» տարեգիրք, Ստամբուլ, 1967, էջ 20):

1 6 9 8

20. ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԵՏԵՍԱԿ ԱՄՍՈՅ ՀՌՈՄԱՅԵՑ-ՎՈՅ, ԱԶԱՐԻԱՅԻ, ՀԱՅՈՅ, ՀՐԵԻՅ ԵՎ ՏԱԶԿԱՅ: 1698 (1698-ի համար), Ամստերդամ, տպ. Թովմա Վանանդեցու: 2,6×5,5: 106 էջ:

ՀԳ 1698 (թվ. 978)

Մ 1698 (թվ. 1470)

1 6 9 9

21. ՏՕՄԱՐԱՅ ԳԻՐԲ... ԵՐԱԶԱՀԱՆ, ԵՎ ԵՐԱԿ ԱՌՆԵԼՈՅ: 1699 (1699-ի համար), Կ. Պոլիս: (Տես՝ Գ. Զարբհանալյան, «Հայկական մատենագիտութիւն», Վենետիկ, 1883, էջ 677):

22. ՏՕՄԱՐ: 1699 (1699-ի համար), Կ. Պոլիս: 48+288 էջ: (Տես՝ «Սիոն» ամսագիր, Երուսաղեմ, 1967, № 11—12, էջ 559):

1 7 0 1

23. ՏՕՆԱՅՈՅՅ: Հրատ. Սարգիս Դպիր: 1701 (1701-ի համար), Կ. Պոլիս: 3,7×8,2: 392 էջ:

ՀԳ 1701 (թվ. 42)

Մ 1701

24. ՏՕՆԱՅՈՅՅ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆԱՅՈՅՅ: 1701 (1702-ի համար), Կ. Պոլիս, տպ. Սարգիս Դպիր: 392 էջ:

ՀԳ 1701 (թվ. 322)

ՀՊԹ 1701 (թվ. 304)

1 7 0 3

25. ՏՕՄԱՐԱՅ ԳԻՐԲ, ՌՃՄԲ—1703 (1703-ի համար), Կ. Պոլիս: 46 էջ: (Տես՝ «Շողակաթ» տարեգիրք, Ստամբուլ, 1967, էջ 21):

1 7 0 8

26. ԳԻՐՔ ՏՕՄԱՐԱՑ ՀԱՅՈՑ, ՀՌՈՄԱՑԵՅՎՈՑ ԵՎ ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ, ԸՆԴ ՈՐՈՑ ԵՎ ՏԱՂ ՅՈՎԱՍԱՓԱ, ՄԱՐՄՆԱԽԱՂ ԵՎ ԵՐԱԶԱՀԱՆ: 1708 (1708-ի համար), Մարտի: 3,9×6,8: 248 էջ:

ՀԳ 1708 (թվ.հ. 2097)

ՀՊԹ 1708 (թվ.հ. 196)

1 7 1 4

27. ՊԱՐԶԱՏՕՄԱՐ Ի ՎԵՐԱ ԱԶԱՐԻԱՅԻ ԱՄՍՈՑՆ ԿԱՐԳԵԱԼ: 1714 (1714-ի համար), Ամատերդամ, տպ. Ղուկաս Վանանդեցու: 79 էջ: Տպագր. ի յիշատակ Ձուղայեցի խալդարենց խոջա Ոսկանին եւ իւր որդւոցն:

Մ 1714 (թվ.հ. 1442)

1 7 1 8

28. ԳԻՐՔ ՏՕՄԱՐԱՑ ՀԱՅՈՑ, ՀՌՈՄԱՑԵՅՎՈՑ ԵՎ ՊԱՐԶԱՏՕՄԱՐ, ԸՆԴ ՈՐՈՑ ԵՎ ՏԱՂ ՅՈՎԱՍԱՓՈՒ, ՄԱՐՄՆԱԽԱՂԱՑ ԵՎ ԵՐԱԶԱՀԱՆ: 1718 (1718-ի համար), Կ. Պոլիս, տպ. Քի թաղն Պեկօղլի: 272 էջ: (Տես՝ Գ. Զարբանալյանի հնատիպ գրքերի ցուցակը «Պատմութիւն հայկական տպագրութեան» աշխատության վերջում):

1 7 2 0

29. ՏՕՆԱՑՈՅՑ, 1720 (1720-ի համար), Կ. Պոլիս, Տպ. Սարգիս դպրի: 4×7, 408 էջ:

ՀԳ 1720 (թվ.հ. 4316)

ՀՊԹ 1720 (թվ.հ. 308)

1 7 2 2

30. ՏՕՆԱՑՈՅՑ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ, 1722 (1723-ի համար), Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցու: 4,2×7,1: 360 էջ:

ՀԳ 1722 (թվ.հ. 617)

Մ 1722 (թվ.հ. 1168)

1 7 2 3

31. ԳԻՐՔ ՏՕՄԱՐԱՅ ՀԱՅՈՑ, ՀՌՈՄԱՅԵՑՎՈՅ ԵՎ ՊԱՐԶԱՏՕ-ՄԱՐ, ԸՆԴ ՈՐՈՑ ԵՎ ՏԱՂ ՄԵՍԻ ԼՈՒՍԱՎՈՐԶԻՆ ՄԵՐՈՑ, ՄԱՐՄԵԱ-ԽԱՂԱՅ ԵՎ ՀԱՐՈՒՍՏ ԵՐԱԶԱՀԱՆ, ԵՎ ԱՅԼ ԲԱՆՔ ՊԻՏԱՆԻՔ, 1723 (1723-ի համար), Կ. Պոլիս, տպ. Գրիգոր Մարգվանցի: 264 էջ: (Տես՝ «Միոն» ամսագիր, Երուսաղեմ, 1968, № 8, էջ 392):

1 7 2 5

32. ԳԻՐՔ ՏՕՄԱՐԱՅ ՀԱՅՈՑ, ՀՌՈՄԱՅԵՑՎՈՅ ԵՎ ՊԱՐԶԱՏՕ-ՄԱՐ: 1725 (1725-ի համար), Ստամբուլ, տպ. Աստուածատուրի: 304 էջ:

Մ 1725 (թվհ. 34)

33. ՏՕՆԱՑՈՅՑ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ: 1725 (1725-ի համար), Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցի: 384 էջ:

ՀՊԹ 1725 (թվհ. 425)

1 7 3 3

34. ՏՕՄԱՐ ԿԱՐՃԱՌՕՏ: Հեղ. Մխիթար Սեբաստացի: 1733 (1733-ի համար), Վենետիկ, տպ. Անտոն Բորտոլի: 3,3×6,2: 48 էջ:

ՀԳ 1733 (թվհ. 31, ալիգատ երկրորդ)

Մ 1733

ՀՊԹ 1733

1 7 3 7

35. ԲՈՒՆ ՏՕՄԱՐ ՀԱՅՈՑ: 1737 (1737-ի համար), Կ. Պոլիս, տպ. Աբրահամի: 442 էջ:

Մ 1737

1 7 3 8

36. ԳԻՐՔ ՏՕՄԱՐԱՅ ՀԱՅՈՑ ԵՎ ՀՌՈՄԱՅԵՑՎՈՅ: 1738 (1738-ի համար), Կ. Պոլիս, տպ. Աբրահամ Թրակացի (Թեքիրդաղ-ցի): 16+17+442 էջ:

Մ 1738 (թվ. 24)

ԱԿԳ 1738

1 7 4 0

37. ԲՈՒՆ ՏՕՄԱՐ ՀԱՅՈՑ ԵՎ ՀՌՈՄԱՅԵՑՎՈՑ ՆԱԵՎ ՊԱՐԶԱ-  
ՏՈՒՄԱՐ, ԸՆԴ ՈՐՈՑ ԵՎ ՏԱՂ ՅՈՎԱՍԱՓՈՒ, 1740 (1740-ի հա-  
մար), Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցւոյ:  
 $4 \times 7$ ; 352 + 62 էջ:

ՀԳ 1740 (թվ. 4764)

Մ 1740 (թվ. 33)

38. ՏՕՆԱՅՈՑՑ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆԱՅՈՑՑ, 1740 (1740-ի համար),  
Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցւոյ:  $4 \times 7$ , 1:  
48 + 432 էջ:

ՀԳ 1740 (թվ. 100)

Մ 1740 (թվ. 1505)

ԳԱԹ 1740 (Թ. Ազատյանի ֆոնդ 8285)

ՀՊԹ 1740 (թվ. 300)

1 7 4 8

39. ՆԱԽ ՊԱՐՈՒՆԱԿԻ ԱՍՏ ՇՐՋԱՆՆ ՄՇՏՆՋԵՆԱՎՈՐ ՏԱՐԵ-  
ԿԱՆ ԶԵԿՈՒՅՄԱՆՑ ԵՎ ԱՊԱ՝ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԵՏԵՍԱԿ ԱՄ-  
ՍՈՑ. ԱՅՍԻՆՔՆ ՀՌՈՄԱՅԵՑՎՈՑ, ԱԶԱՐԻԱՅԻ, ՀԱՅՈՑ ԵՎ ՏԱԾ-  
ԿԱՅ: ՅՈՐԻՆԵՑԵԱԼ Ի Մատթէոս եւ Ի Ղուկաս դպրաց Վանան-  
դեցւոց: էֆիմէրտէ: 1748 (1748-ի համար), Վենետիկ, տպ. Անտոն  
Բորտոլի:  $3,5 \times 6,1$ ; 96 + 48 ± 72 էջ:

ՀԳ 1748 (թվ. 31)

Մ 1748 (թվ. 36)

ԳԱԹ 1748 (թվ. 1126)

1 7 5 0

40. ԲՈՒՆ ՏՕՄԱՐ ՀԱՅՈՑ, 1750 (1750-ի համար), Կ. Պոլիս,  
տպ. Աստուածատուրի, տպագրիչ՝ Հովհաննես, 344 էջ:

Մ 1750

41. ԳՐԳՈՒԿ, ՈՐ ԿՈՉԻ ԷՅԻՄԷՐՏԷ: Տպագրեցաւ աշխատասիրութեամբ Սարգսի արքեպ. Կոստանդնուպոլսեցւոյ: 1752 (1752-ի համար), Վենետիկ, տպ. Անտոն Բորտոլի:  $3,5 \times 6,5$ : 456 էջ:

ՀԳ 1752 (թվ. 1027)

Մ 1752 (թվ. 1543)

ՀՊԹ 1752 (թվ. 253)

42. ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ: 1754 (1754-ի համար), Կ. Պոլիս, տպ. Աստուածատուրի, տպագրիչ՝ Հովհաննես:  $331 + 480$  էջ:

ՀԳ 1754 (թվ. 651)

Մ 1754 (թվ. 1623)

43. ՕՐԱՅՈՅԻ ԵՎ ԳՈՒՇԱԿ ՕԴՈՑ: Կազմողներ՝ Հակոբոս Չամչյան (1757—1777), Սուքիաս Աղամալյան (1778—1779), Աղեքսանդր Ինճիճյան (1780—1793), Խաչատուր Սյուրմեւյան (1794, 1798—1800 և 1810—1820), Մատթեոս Մաղաքյան (1795—1797 և 1801—1809), Վարդան Հովսեփյան (1821—1829), Աղեքսանդր Պեշկեթաշլյան (1830—1840), Գ. Արվաղովսկի, Մ. Քաջունի, Ա. Գուրգենյան (1841—1850), Հմայակ Պապիկյան (1851—1880), Սերոփբե Ապտուլլահյան (1881—1916), Խորեն Սինանյան (1917—1926), Հակոբ Տիրոյան (1927—1933), Անտոն Ճնտոյան (1933—1936), Հմայակ Կետիկյան (1937—1960): Հրատ. Վենետիկի Մխիթարյան միաբանութիւն: 1757—1972 (1757—1973-ի համար), Վենետիկ, տպ. Ս. Ղազարի:  $3 \times 6$ : 40—126 էջ:

Անվանափոխում. 1838-ին կոչվել է Օրացոյց եւ գուշակութիւնօրոց, 1747-իւն՝ լուսնացոյց, յորում ցուցանին եւ երկոտասան ամիս տարւոյն եւ ատաւի ճոցա, եւ մտաւ արեգական ի կենդանակերպս, եւ տօնի եւ պանի ըստ վարելոյ ազգին մերոյ, ըստ կարգելոյ հնոյ տօմարին, որով վարին արեւելականն, 1758-իւն՝ Օրացոյց վասն առաջիկայ ամի տեառն 1758-իւն, եւ Հայոց բուականին ՌՄԷ ին-ըստ հնոյ տօմարին: Յորում ցուցանին ամենայն տօնի եւ պանի ազգիս Հայոց: Այլ եւ ամիսք եւ երեւելի տօնի լա-

տիճացւոց, յունաց, եբրայեցւոց եւ տանկաց, եւ ամիսք Ազարիայի:

Աշխարհի ամենաերկարակյաց տպագիր օրացույցն է: Լույս է տեսնում գրաբար: 1757—1913-ին լույս է տեսել հին տոմարով (հուլյան), 1914-ից՝ նոր տոմարով (Գրիգորյան): Այս հրատարակութեան բնութագիրը տվել են իրենք՝ Մխիթարյանները. «Կցուցնե տարվո օրերը, տոները, պահոց օրերը, օրերու ձայները, հունաց եւ լատինաց եւ հրեից եւ տաճկաց գլխավոր տոները, այլևայլ ազգաց թվականներու տարեգլուխները, արևու շրջանն ու խավարումները, օդո գուշակութունները եւ այլն. կարողանակի նաև ամեն տարի մեկ կամ ավելի գրաբար ոտանավոր, աստղաբաշխական տեղեկութուններ, ազգային հիշատակաց դարադարձներ, Մխիթարյան տպարանին լույս տեսած նորատիպ գրքերու եւ կամ ամբողջ հրատարակութեանց ցուցակներ» («Գրացուցակ Մխիթարյան տպարանին», Վենետիկ, 1960, էջ 100):

